

243

9-501

1921

203.7
F-64

299 - 350m
530m
13 m
22

55m 9
299
16-1
880
16-1
117

11
58
y

243

9-61

ԳԻՐՔ

979 ԱՀ

30505-Կ.2

ՍԱՂՄՈՍԱՑ

774

243

A. B. S.

61,000

ԱՀ



12801
13405-50

(14742-57)

*ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ

ՍԱՂՄՈՍՈՒ

- 1 Երանելի է այն մարդը՝
Որ ամբարիշտներուն խորհուրդին մէջ չքալեր,
Ու մեղաւորներուն ճամբուն մէջ չկենար,
Եւ ծաղը ընողներուն նատած աեղը չնստիր.
2 Հապա անոր հաճութիւնը Աստուծոյ օրէնքին մէջ է,
Եւ ցորեկ ու գիշեր անոր օրէնքին վրայ կը մտածէ;
3 Եւ անիկա ջաւրի. ճամբաները անկուած ծառի պէս
պիտի ըլլոյ,
Որ իր ժամանակին իր պտուղը կուտայ.
Ու անոր տերեւը պիտի չժատի,
Եւ ինչ բան որ ընէ՝ պիտի յաջողի:
4 Այսպէս չեն ամբարիշտները,
Հապա մղեղի պէս՝ զոր հով կը ցրուէ:
5 Ասոր համար ամբարիշտները գատաստանին մէջ պիտի
չկլնան կենալ,
- ՊԼ մեղաւորները արդարներուն ժողովքին մէջ՝
Վասն զի Տէրը կը ճանչնայ արդարներուն ճամբան.
Ասյց ամբարիշտներուն ճամբան պիտի կորսուի:

ՍԱՂՄՈՍՈՒ Բ

- 1 Ինչու հեթանոսները խուզվութիւն կ'ընեն,

- Ու ժողովուրդները պարապ բան կը մտածեն,
 2 Երկրի թագուրծները ինքզինքնին կը հաստատեն,
 Ու իշխանները մէկտեղ խորհուրդ կ'ընեն
 Տէրոջը գէմ ու անոր Օծեալին դէմ,
 3 Ըստը, Կոռալնք անոնց կապերը,
 Ու մեզմ. ձգենք անոնց *լուծը:
 4 Երկինքը բնակողը անոնց կը պիտի ծիծաղի,
 Տէրը ծաղը պիտի ընէ զանոնք:
 5 Այն ատեն իր բարկութիւնովը պիտի խօսի անոնց,
 Եւ իր սրամառութիւնովը պիտի խոռոչեցնէ զանոնք,
 ըստը:
 6 Ես օծեցի իմ թագաւորս
 իմ սուրբ լեռանս, Սիօնի, վրայ:
 7 Հրամանը պիտի պատմեմ.
 Տէրը ինձի բառւ,
 Դուն իմ Ուրդիս ես,
 Ես այսօր քեզ ծնայ:
 8 Խնդրէ ինձմէ, ու հեթանոսները քեզի ժառանգու-
 թիւն պիտի տոմի,
 Ու երկրի ծոյրերը քեզի ստացուածք.
 9 Զաննկը, երկաթէ գաւաղանով պիտի +կոտրես,
 Բրուտի ամանի պէս պիտի փշես զանոնք:
 0 Ուստի հիմա, ով թագաւորներ, միտքերնիդ տուէք,
 Երկրի գաստուրներ, իրասուեցէք:
 1 Երկիւզով Տէրոջը ծառայեցէք,
 Ու դողալով ժանիէ վախցէք:

*Եբը. չուտնները
 †կամ, հալուես
 ‡կամ, ցնծացէք

- 12 Որդին համբուրեցէ՝ որպէս զի չլարկանայ,
 Ու ճամբուն մէջ չկորսուիք,
 Երբ անոր բարկութիւնը քիչ մը բարբոքին
 Երանի՛ այն ամենուն սրոնք անոր կը յուսան:

ՍԱՂՄՈՍ Գ

Սաղմոս Դաւթի, իր որդւոյն Արքաղոմի Կրեսէն
 Փախած ժամանակը:

- 1 Ով Տէր, իմ թշնամիներս ո՛քչափ շատցան.
 իմ վրաս ելլողները շատաւոր են:
 2 Հասերը իմ անձին համար կ'ըսեն թէ-
 Ասոր փրկութիւն չկայ Աստուծմէն: (*Աէլտա)
 3 Բայց, ով Տէր, գուն ես իմ ասպարս,
 իմ փառքս ու իմ գլուխս բարձրացնողը:
 4 Իմ ձոյնով Տէրոջը կանչեցի,
 Ու իր սուրբ լեռնէն ինձի պատասխանեց: (Աէլտա)
 5 Ես պառկեցայ ու քնացայ.
 Արթնցայ, վասն զի Տէրը զիս պաշտպանեց:
 6 Ես պիտի չլախնամ բիւրսուոր ժողովուրդներէն
 Որոնք իմ չըսր կոզմն պատեցին:
 7 Ելիք, ով Տէր, զիս փրկէ, ով իմ Աստուծս,
 Վասն զի գուն զարկիք իմ բոլոր թշնամիներուս
 թուշը.

*Այս բարձն սոսայի նշանաւութեանը նեւ յայրենի չե, սո-
 յայն Եբայութան բնուդրին մէջ բուռաւութը՝ մէնտ ալ պահե-
 ցին: Եւրբանաւութեան դջ. և Եւրբեակ նեւ Երքեցաւները
 սոէկ և Եւրբանաւութեան դջ. և Եւրբեակ նեւ Երքեցաւները
 յայն Երքեւն հումոր և կամ բարձրացնելու համար:

ԳԻՒՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ

Ամբարիշաներուն ակռաները փշրեցիր:

8 Փրկութիւնը Տէրոջն է.

Քու օրհնութիւնդ քու ժողովուրդիդ վրայ է:
(Սէլաւ)

ՍԱՂՄՈՍ Դ

Դլխաւոր երաժշախն, Դնկինօթի վրայ, Սաղմոս Գաւթի:

1 Կանչելու ատենս ինծի պատասխան տուր, ով իմ
արդարութեանս Աստուածը.

Նեղութեան մէջ զիս ընդարձակեցիր.

Ողորմէ ինծի ու լսէ իմ աղօթքս:

2 Մարդոց որդիներ, մինչեւ Ե՞րբ իմ փառքս ամօթի
պէտի բարչներ,

Ես սնայինութիւն պիտի սիրելք ու ստութիւն փընա-
ռէք: (Սէլաւ)

3 Բայց գիտցէք որ Տէրը իրեն նուիրուած հորու ։ որոշեց.
Տէրը պիտի լսէ իրեն կանչելու ատենս:

4 Դողացէք ու մեղք մի գործէք.
Խօսեցէք սիրտերնուրդ հետ անկողիններնուրդ վրայ ու
լոեցէք: (Սէլաւ)

5 Արդարութեան զոհեր մաստոցէք,
Ու Տէրոջը յուսացէք:

6 Շատերը կ'ըսեն թէ Ո՞վ մեզի բարութիւն պիտի
ցուցնէ,

ԳԻՒՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ

Ով Տէր, քու երեսիդ լցար մեր վրայ ծագէւ:

7 Իմ սրտիս ուրախութիւնն տուիր՝

Անոնց ցորենինն ու գինիին առասութեան ժամանա-
կէն տուելի:

8 Խազազութեամի պիտի պառկիմ ու քնանամ,
Վասն զի գուն միայն, ով Տէր, զիս ապահովութեամի
կը բնակեցնես:

ՍԱՂՄՈՍ Ե

Դլխաւոր երաժշախն, Դնկինօթի վրայ, Սաղմոս Գաւթի:

1 Ով Տէր, ականջ դիր իմ խօսքերաւս,

Միուքդ առ իմ աղաղակս:

2 Իմ կանչելուս ձայնը մոտիկ ըրէ, ով իմ Թագաւորս
ու Աստուածս,

Վասն զի ես քեզի կ'աղաչեմ:

3 Ով Տէր, առատուանց պիտի լսես իմ ձայնս.

Առատուանց ժամանակատ պիտի ըլլամ" քեզի ու սպա-
ռմա:

4 Վասն զի գուն մասրէնութիւն ուղղ Աստուած չես,
Զորը քու քովդ պիտի ընակի:

5 Հզարամները քառ աչքերուդ առջև պիտի չկենան,
Բնուր անօրէնութիւն գործողները կ'ատես.

6 Սուր խօսողները կը կորսնցնես.
Տէրը արիւնահեղ ու նենգաւոր մարդէն կը գոււի:

7 Բայց ես քու ողպամութեանդ շատութիւնովը քու
տունդ պիտի մանեմ:

*Ուսէս հաւատաւիան ի որդէօծ իւելս նուաբարաւանէրսա-
ռանանն է:

†Կամ, երեւելի ըրաւ

- Քու վախովդ երկրպատութիւն պիտի ընեմ՝ քու առարբ
տաւճարիդ մէջ։
- 8 Ով Տէր, քու արդարութիւնովդ ինծի առաջնորդ
եղիր թշնամիներուս համար.
- Քու ճամբար չխուկէ իմ՝ առջեւս.
- 9 Վասն զի անոնց բերնին մէջ ճշմարտութիւն չկայ,
Անոնց ներսիդին չարութիւն է.
Անոնց կոկորդը բաց գերեզման է.
Իրենց լեզուով նենդաւոր եղան։
- 10 Ով Աստուած, յանցաւոր հանէ զանոնք,
Իրենց խօրհուրդներով թող իշխան.
Անոնց շատ ամբարշտութիւններուն համար հալածէ
զանոնք.
Վասն զի քեզի գէմ ապստամբեցան։
- 11 Բայց ամէն քեզի յուսացողներ թող ուրախ ըլլան.
Ցաւիտեան թող ցնծան, վասն զի դուն զանոնք կը
պաշտպանես.
Եւ քու անունդ սիրողները թող քեզմով զուարժա-
նան։
- 12 Վասն զի գուն պիտի օրհնես արդարը, ով Տէր,
Բարի կամեցողութիւնով անոր չորս կողմէ պիտի
պատե՛ որպէս թէ վահանով մը։

ՍԱՂՄՈՍ Զ

Գլխաւոր երաժշախն, Նկինօթի վրայ, Շեմինիթի վրայ.
Սաղմոս Դաւթի։

- 1 Ով Տէր, քու սրտմուռութիւնովդ զիսմի յանդիմաններ,
Եւ քու բարկութիւնովդ զիս մի խրատեր։

*Այսինքն, ութերորդի

- 2 Ով Տէր, ողորմէ ինծի, վասն զի տկար եմ ես.
Զիս բժշկէ, ով Տէր, վասն զի սակորներս կը սարսափին։
- 3 Իմ անձս ալ խիստ սարսափեցաւ.
Եւ դուն, ով Տէր, մինչև ե՞րբ։
- 4 Դարձիր, ով Տէր, փրկէ իմ անձս,
Քու ողորմութեանդ համար զիս ազատէ։
- 5 Վասն զի մահուան մէջ քեզ յիշատակել չկայ.
Գերեզմանին մէջ ով քեզի շնորհակալութիւն պիտի
լնէ։
- 6 Հառաչանք ընելէ յոգնեցայ.
Ամէն դիշեր առաստութեամբ կը լուամ իմ անկողինս,
Արցունքներովս կը թրջեմ իմ մահիճաւ։
- 7 Իմ աչքս մաշեցաւ տրտմութենէ,
Իմ ամէն թշնամիներուս համար հինցաւ։
- 8 Ինծմէ ես կեցէք ամէնդ ալ որ անօրէնութիւն կը
գործէք.
Վասն զի Տէրը իմ լալուս ձոյնը լսեց.
9 Տէրը իմ աղօթքս լսեց.
Տէրը իմ ինդրուտօթքս պիտի ընդունի։
- 10 Թող ամշնան ու խիստ զարհուրին իմ ամէն թշնա-
միներս,
Ետ դառնան ու շուտով թող ամշնան։

ՍԱՂՄՈՍ Է

Շեկկայօն Դաւթի, զոր երգեց Տէրոջը թենիսամինեան Քուշի
խօսքերուն համար։

- 1 Ով Տէր Աստուածս, քեզի կը յուսամ,
Փրկէ զիս իմ ամէն հալածիչներէս ու ազատէ զիւ։

*Կա՛, Մեղեդի. աես Ամբ. գ. 1:

- 2 Զըլլայ որ առիւծի պէս իմ անձս գիշատէ,
Ու պատառէ և ավատող մը ըլլայ:
- 3 Ով իմ Տէր Աստուածս, եթէ այս բանը ըրի,
Կամ թէ իմ ձեռքերուս մէջ անօրէնութիւն կայ,
- 4 Եթէ բարեկամիս չարութիւն ըրի,
Ու յափշտակեցի զանիս՝ որ առանց պատճառի իմ
թշնամիս էր,
- 5 Թող թշնամին հալածէ իմ անձս ու համնի անոր,
Ու երկրի վրայ կոփկոտէ իմ կեռնքս,
Եւ իմ փառքս հողի վրայ բնակեցնէ: (Սէլա:)
- 6 Ելիք, ով Տէր, քու բարկութիւնավդ,
Իմ թշնամիներուս կառաղութիւններուն դէմ բարձր
եղիք,
- Եւ քու հրամայած գատաստանիդ ինծի համար ար-
թնցիք:
- 7 Եւ ժողովուրդներուն ժողովը քու չորս կողմէ պիտի
պատուեն.
- Անոնց վրայ գէպի բարձրը դարձիք:
- 8 Տէր պիտի գատէ ժողովուրդները.
Ով Տէր, իմ գատաստանս տես,
Իմ ունեցած տրդարսւթեանս ու անմեղութեանս
նոյելով,
- 9 Ամրարիշաներուն չարութիւնը թող համնի:
Բնոց գուն արդարը հաստատէ.
Վասն զի գուն, ով արդար Աստուած, կը քննես
սիրերը ու երիկամնեները:
- 10 Իմ պաշտպանութիւնս Աստուածէ է.
Որ կ'ապեցնէ սրասվ ուղիղները:
- 11 Աստուած արդար գատաւոր է,
Ու Աստուած Գրաւորին ամէն օր բարկացած է.

- 12 Եթէ անիկա չդառնայ, իր առըլ պիտի սրէ.
Աղեղը լսրեր ու պատաստեր է:
- 13 Ու մահու գործիքները անոր համար պատրաստեր է,
Իր նետերը *Հալածիքներուն համար՝ շիներ է:
- 14 Ա.հա անօրէնութեան երկունքը բանեց զանիկա.
Չարութիւն յլացաւ ու ստութիւն ձնուաւ.
- 15 Հոր փորեց ու խորունկցուց,
Բայց իր շինած փոսին մէջ ինկ պիտի ինայ.
- 16 Անոր չարութիւնը իր գլուխը պիտի գառնայ,
Ու անոր բանութիւնը իր գագալթին վրայ պիտի իշնէ:
- 17 Գոհութիւն պիտի մասուցանեմ Տէրոջը իր արդա-
րութեանը համար,
Ու սաղմոս պիտի երգեմ Բարձրեալ Տէրոջը անուանը:

ՍԱՂՄՈՍ Է

Գլաւառը երաժշտին, Կիբոթիթիք վրայ. Սաղմոս Դասթի:

- 1 Ով Տէր, մեր Տէրը,
Ինչ փառաւոր է քու անունդ րոլոր երկրի վրայ,
Որ քու փառքդ երկինքներէն վեր դրիք:
- 2 Մանկանց ու կաթներ տղայց բերնէն
†Գոլութիւն կատարեցիք՝ քու թշնամիներուդ հա-
մար,
Որպէս զի թշնամին ու վրէժինդիրը լսեցնես:
- 3 Երբ աեսնեմ երկինքդ, քու մասերուդ գործը,
Լուսինը ու աստղերը, զորոնք դուն հաստատեցիք,

*Լամ, կրտկոտ

†Աւ հարծուէ ներ դեսուէ հը հուսաբանէ անուն է:

‡Կամ, Զօրութիւն

- 4 Մարդը ի՞նչ է՝ որ զանիկա կը յիշեաւ,
կամ մարդու որդին, որ անոր սցցելութիւն կ'ընեաւ
5 Քիչ մը վար ըրեր զանիկա հրեշտակներէն,
Փառ-քով ու պատուով պսակեցիր զանիկա.
6 Քու ձեռքերուդ գործերուն վաս իշխան դրիր զա-
նիկա.
Ամէն բան անոր սաքին տակ դրիր.
7 Բոլոր ոչխարները ու արջառները,
Նաև վայրենի անսատունները,
8 Երկինքի թուշունները ու ծովուն ձուկերը,
Եւ ինչ որ ծովու ճամբաներուն մէջ կը պարտի,
9 Ով Տէր, մեր Տէրը,
Ի՞նչ փառաւոր է քու անունդ բոլոր երկրի վրայ:

ՍԱՂՄՈԽ Թ.

- Գլխաւոր երաժշախն, Մութլապպէնի վրայ. Սաղմոս Դաւթի,
1 Գոհութիւն պիտի մատուցանեմ Տէրոջը իմ բո-
լը սրտովս.
Քու ամէն պանչչելիքներդ պիտի պատմեմ,
2 Գեզմով ուրախ պիտի ըլլամ ու ցնծամ.
Քու անուանդ սաղմոս պիտի երգեմ, ով Բարձրեալ.
3 Թշնամիներս ետ գաւնալու ատենին
Քու երեսէդ պիտի իշնան ու կորսուին.
4 Վասն զի դատաստանս և իրաւունքս դուն տեսար.
Աթոռին վրայ նատար էբեւ արդարութեան դատաւոր.
5 Հեթանոսները յանդիմաննեցիր,
Ամբարիշտը կորանցուցիր,
Անոնց անունները ջնջեցիր յաւիտեանս յաւիտենից.
6 Թշնամին աւերմունքները բոլորսին վերջացան.

- Քաղաքները աւրեցիր.
Անոնց յիշատակը իրենց հետ կորսուեցաւ
7 Բայց Տէրը յաւիտեան կը մնայ.
Անիկա իր աթոռու պատրաստեց դատաստանի համար:
8 Ենք պիտի դատէ աշխարհը արդարութիւնով,
Ճողովուրդներուն դատաստան պիտի ընէ ուղղու-
թիւնով:
9 Տնանկին ալ ապաւէն պիտի ըլլայ Տէրը,
Ապաւէն նեղութեան ժամանակները:
10 Եւ անոնք որ քու անունդ գիտեն՝ քեզի պիտի յուսան.
Վասն զի քեզ փնտուղները, ով Տէր, երեսէ չչգեցիր:
11 Սաղմոս երգեցէր Տէրալը որ Սիօն կը բնակի,
Ժողովուրդներուն մէջ պատմեցէք անոր ըրածները:
12 Վասն զի արեան վրէժինդիրը յիշեց զանոնք,
Զմուցաւ նեղեալներուն աղաղակը:
13 Ով Տէր, ողորմէ ինծի,
Տես իմ թշնամիներէս իրած նեղութիւնս,
Դուն որ զիս մահուան դռներէն կը վերցնես.
14 Որպէս զի քու ամէն գովութիւններդ պատմեմ
Սիօնի աղջկան դռներուն մէջ.
Պիտի ցնծամ՝ քու փրկութիւնովդ:
15 Հեթանոսները իրենց շինած փոսին մէջ ընկղմեցան.
Իրենց գաղատուկ լսրած որոգայթին մէջ իրենց ոտքը
բռնուեցաւ:
16 Տէրը ճանցցուած է, կամ զի դատաստան ըրաւ.
Ամբարիշտը իր ձեռքին գործերովլ որոգայթը Կ'եյ-
նոյ: (*Հիկկոյն. Սէլաւ)
17 Ամբարիշտները դժոխը պիտի դառնան,

- Եւ ամէն ազգերը՝ սրոնք զԱստուած կը մոռնան։
 18 Քանզի աղքատը պիտի չմուցուի մինչև վերջը.
 Տնանկներուն յոյսը յաւիտեան պիտի չկորսուի։
 19 Ելիք, ով Տէր, մարդը չզօրանայ.
 Թող հեթանոսները դաստուին քու տուջեդ.
 20 Ով Տէր, *զանոնք վախցաւը։
 Թող հեթանոսները ճանչնան թէ իրենք մարդ են։
 (Սէլսա)

†ՍԱՂՄՈՍ Ժ

- 1 Ով Տէր, ինչո՞ւ հեռու կը կենա։
 Նեղութեան ժամանակները անտես կ'ըլլաւ
 2 †Ամբարշտին ամբարտաւանութեանը պատճառաւ
 աղքատը կը տուչպի։
 Իրենց խորհած չնարբներուն մէջ թող բռնուին։
 3 Վասն զի ամերիշտը իր անձին ցանկութիւնովը կը
 պարծենոյ,
 Եւ ագահը եր անձն երանի կու տայ, Տէրը կ'անարգէ։
 4 Ամբարիշտը իր երեսին ամբարտաւանութեանը հա-
 մար զԱստուած չփնտուեր.

*Կամ, անոնց վրայ սորվեցնող դիր

†Այս դասներաբ Սաղմոս Եօթանունից և Հոյոց դրաբար
 Երբիշնեսներուն մէջ իններուրին հետ հայուսուածէ է,
 որով այս նարքներունիւն մէջի մշտառաներուրը՝ անոց
 մէջ դասներուրը յի լուսած է, ու այնուից իւ լարսանաւուի
 մինչև հորբեր ուստահանուենիւրուրը։ Տե՛ այս բերք
 Եաւունիւրունիւնը։
 †Կամ, Ամբարիշտը իր ամբարտաւանութիւնովը սաս-
 տիկ կը հալածէ աղքատը

- Բոլորովին անոր մտքին մէջ Աստուած չկոյ։
 5 Ամէն ժամանակ անոր ճամբաները պինդ են.
 Քու գասատաւաներդ անոր առջեւէն բարձր են.
 Անիկո իր բոլոր թշնամիներուն վրայ կը փէէ։
 6 Իր սրտին մէջ ըստ թէ Պիտի չսասանիմ։
 Վասն զի աղդէ մինչև աղդ նեղութեան մէջ պիտի
 չըլլամ։
 7 Անոր բերանը անէծքալ ու նենգութիւններուլ ու
 չարստահարութիւններուլ լեցուն է.
 Անիրաւութիւնը ու անօրէնութիւնը անոր լեզուին
 տակ են։
 8 Գեղերուն դարանի տեղերը կը նստի,
 Գաղտուկ տեղերու մէջ անմեղը կը սպաննէ.
 Անոր աչքերը ծածկաբար տնանկներուն կը նային։
 9 Գաղտուկ տեղեր դարանամուտ կ'ըլլայ, ինչպէս առ-
 իւծը իր որջին մէջ.
 Դարանակալ կը նստի՝ աղքատը յափշտոկելու հա-
 մար.
 Աղքատը կը յափշտոակէ իր սրոգոյթը ձգելով զո-
 նիկա.
 10 Ու կծկատ կը պասկի,
 Եւ տնանկները անոր ճանկերուն տակ կ'իյնան։
 11 Իր սրտին մէջ ըստ թէ Աստուած մասցեր է,
 Ու իր երեսը ծածկեր է որպէս զի բնաւ չտեսնէ։
 12 Ելիք, ով Տէր, ով Աստուած, ձեռքդ վեր վերցուր.
 Մի մոռնար նեղեալները։
 13 Ինչո՞ւ համար ամբարիշտը կ'անարգէ զԱստուած
 իր սրտին մէջ ըստ թէ Պիտի չքննես։
 14 Գուն տեսոր, վասն զի ցաւին ու նեղութեանը կը
 նային։

- Քու ձեռքալիդ կոյտեն հաստուցանելու համար,
Աղքամալ բնրզինք քեզի կը յանձնէ,
Որբին օգնականը դուն ես:
- 15 Ամերջախին բազուկը կոսորէ,
Ու չարին անօրէնտթիւնը փնտուէ գնչւ ու աշխատնես:
- 16 Տէրը յաւեփտեանս յաւեփտենից թափաւոր է:
Հեթանաները կարսուած են անոր երկրէն:
- 17 Տնանկներուն ցանկութիւնը լոեցիր, ով Տէր.
Անոնց պիտերը պիտի հաստատես, ու քու ականջդ
պիտի տաս
- 18 Որբին ու անանկին դատաստանը տեսնելու,
Որպէս զի երկրի մարդու ա՛ւ զանան չվախցնէ:

ՍԱՂՄՈՍ ԺԱ

Գիւբաւոր երաժշտին, Սառըս Դաւթի:

- 1 Տէրոջը ապաւինեցայ.
Ի՞նչպէս իմ անձիս կ'ըսէք թէ
Թուչունի պէս դէք ի ձեր լեռը թռչէ.
- 2 Վասն զի ահա մեղաւորները աղեղ լարեցին,
Իրենց նետերը լարին վրայ պատրաստեցին,
Որպէս զի մութ արէն սիրաը շիտակ եղաներուն նե-
տին:
- 3 Եթէ հիմերը կործանին,
Արդարը ի՞նչ պիտի լնէ:
- 4 Տէրը իր սուրբ տաճարին մէջ է.
Տէրոջը ամուռը երկինքն է.
- 5 Անոր աչքերը կը տեսնեն,
Անոր թարթիները կը քննեն մորդոց որդիները:
- 5 Տէրը կը քննէ արդարը.

- Բայց անոր անձը կ'ատէ տմբարիշոր ու բանութիւն
սիրողը:
- 6 Ամբարիշաներուն վրայ պիտի տեղան *որոգայթներ,
Հուր և ծծումը ու խորշակ.
- Այս ոչ բայց անոնց բաժակին բաժինը:
- 7 Քանզի արդար Տէրը արդարութիւնը կը սիրէ,
Անոր երեսը ուղիղին կը նայի:

ՍԱՂՄՈՍ ԺԲ

Գլխաւոր երաժշտին, Նէմինիթի վրայ. Սաղմօս Դաւթի:

- 1 Ով Տէր, փրկէ, վասն զի սուրբ չմնաց.
Վասն զի հաւասարիմերը մարդոց որդիներուն մէջէն
պականցան:
- 2 Ամէն մարդ սուր կը խօսի իր ընկերին հետ.
Շողգորթող շրթունքներով ու կրկին սրտավ կը խօ-
սին:
- 3 Տէրը պիտի կարէ ամէն շողգորթող շրթունքները
Ու մեծախօս լեցուն,
- 4 Որոնք լովին թէ Լեզուներովմիս պիտի յալթենք,
Երթունքներով մերն է, մեր վրայ տիրաղ ովկ պիտի
ըլլաւ:
- 5 Աղքամներուն զրկանկին ու անանկներուն հեծու-
թեանը համար
Հիմն պիտի ելլեմ, կ'ըսէ Տէրը,
Աղասութեան մէջ պիտի դներ զանէիս որ կը փչսւի:
- 6 Տէրոջը խօսերը մաքուր խօսեր են.
Հովէ բավեր մէջ զատած:

*կամ, փոյլւոկներ

- Ո- եօթը անգամ՝ մաքրուած արծաթի պէս են;
 7 Ով Տէր, դուն պիտի պահես զանանք,
 Ո- պիտի պաշտպանես այս աղդէն մինչև յաւիտեան:
 8 Ամւարիշաները ամէն կողմէ կը պարտան,
 Երբ մարդոց որդիներուն մէջ անսարդները բարձրանան:

ՍԱՂՄՈՍ ԺԴ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի.

- 1 Ով Տէր, մինչև ե՞րբ բարդովին զիս պիտի մասնաս, Մինչև ե՞րբ քու երեսու ինծմէ պիտի ծածկես,
 2 Մինչև ե՞րբ մաքիս մէջ հօգեր պիտի դնեմ,
 Ամէն օր սրտիս մէջ արտօնութիւն սահնաւու.
 Մինչև ե՞րբ թշնամիս իմ վրաս պիտի բարձրանայ,
 3 Նայէ, ով իմ Տէր Աստուածս, ու պատասխան տուր
 ինծի.
 Կուսաւորի իմ աչքերս,
 Որպէս զի մահուան ուանչ չքնանամ,
 4 Զըլայ որ թշնամիս լսէ թէ Յաղթեցի անոր.
 Կամ նէ ինծի դէմ կեցողները ինդտն իմ սասանելու
 առենու.
 5 Ես քու ողջրօնութեանդ յուսացայ,
 իմ սիրտս քու փրկութիւնովդ պիտի ցնծայ,
 6 Պիտի երգեմ Տէրոջը,
 Վասն զի ինծի բարերարութիւն ըրաւ:

ՍԱՂՄՈՍ ԺԴ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի.

- 1 Անդդամը իր սրտին մէջ ըստ թէ Աստուած չկայ,
 Ապականեցան ու պիղծ գործեր ըրին.

- Մէկը չկայ որ աղէկութիւն ընէ:
 2 Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն վրայ,
 Որպէս զի տեսնէ թէ կա՞յ արդեօք իմաստուն մէկը
 Որ զԱստուած փնառէ:
 3 Ամէնը խոտորեցան, մէկտեղ անպիտան եղան.
 Աղէկութիւն ընող մը չկայ, մէկ աղ չկայ:
 4 Միթէ չե՞ն ճանչնար ամէն անօրէնութիւն ընաղները,
 Որոնք հաց ուտելու պէս իմ ժողովուրդս կ'ուտեն,
 Ո- Տէրոջը չե՞ն կանչեր.
 5 Այն ասեն շատ վախցան.
 Գանդի Աստուած արդարներուն ազգին մէջ է:
 6 Ադքասին խորհուրդը ամօթովլ ըրիք,
 *Ամկայն անոր յշով Տէրն է:
 7 Երանի՛ թէ Ալօնէ գար Խարայէլի փրկութիւնը.
 Տէրը իր ժողովուրդը գերութենէն դարձուցած
 առեն՝

Յակուլ պիտի ցնծայ, ու Խարայէլ ուրախ պիտի ըլլայ:

ՍԱՂՄՈՍ ԺԵ

Սաղմոս Դաւթի:

- 1 Տէր, ով պիտի կենայ քու վրանիդ մէջ,
 Ով պիտի բնակի քու սուրբ լեռանդ վրայ:
 2 Ան օր անմեզութեամբ կը քալէ, ու արդարութիւն
 կը գործէ,
 Եւ ճշնարսութիւն կը խօսի իր սրտին մէջ:
 3 Ան օր լեզուալի ըլլապարտէր,
 Ընկերն չարութիւն չըներ.

- Եւ իր գրացիին վրայ նախասինք չդներ.
 4 Որուն առջև անարդուած է չարագուծը,
 թայց աստուածավախները կը պատուէ.
 Երդում կ'ընէ էր *վասարն՝ ու չդաւնար.
 5 Իր արծաթը վարձով չտար,
 Ու անմեղին դէմ կաշառք չտաներ:
 Ով որ ասոնք կ'ընէ, յաւիտեան պիտի չսասանի:

ՍԱՂՄՈՍ ԺԶ

ԵՐԳ Դաւթի:

- 1 **Ով** Աստուած, զիս պահէ,
 Վասն զի քեզի յաւսացայ:
 2 Տէրոջը ըսի, իմ Տէրս դուն ես,
 Առանց քեզի բարիք մը չունիմ:
 3 Երկիք մէջ եղող սուրբերուն ու պատուականներուն՝
 Անոնց վրայ է իմ բոլոր հաճութիւնս:
 4 Անոնց ցաւերը պիտի շատնան, որոնք ուրիշի մը
 կ'արտորան.
 Անոնց արիւնի նուերմները պիտի չնուրիեմ:
 Ու անոնց անունները շրթունքներուս վրայ պիտի
 չառնեմ:
 5 Տէրն է իմ ժառանգութեանս ու բաժակիս բաժինը.
 Իմ վիճակս դուն պիտի պահես:
 6 Վիճակներ ելան ինծի զսւարճապի ու զարու մէջ.
 Իրաւ իմ ժառանգութիւնս ինծի գեղեցիկ եղաւ:
 7 Պիտի օրհնեմ Տէրը որ զիս իրասուեց.
- Նաև իմ երիկամներներս գիշերուան մէջ ինծի կը
 սորվեցնեն:

*Կա՛, դրացիին

- 8 Ամէն ատեն Տէրը իմ առջեւս գրի.
 Որովհետեւ իմ աջ կողմն է, պիտի չսասանիմ:
 9 Ասոր համոր սիրաս ուրախ եղաւ ու փառքս բերկ-
 րեցաւ,
 Ու մարմինս ալ յոււսով պիտի հանգստանայ:
 10 Վասն զի իմ անձս դգերեզմնին մէջ պիտի չժող-
 ղուս,
 Ու քու սուրբիդ ալ ապականութիւն տեսնել պիտի
 չտաս:
 11 Կինաց ճամբան ինծի պիտի ցուցնես.
 Երեսիդ առջև լեցուն ուրախութիւն կայ,
 Քու աջ կողմն միշտ հաճութիւններ կան:

ՍԱՂՄՈՍ ԺԷ

Աղօթք Դաւթի:

- 1 **Ով** Տէր, լսէ արդարութիւնը,
 Մտիկ ըրէ իմ աղաղակս,
 Ականչ դիր աղօթքիս,
 Որ խաբերայ շրթունքներով չէ:
 2 Իմ դատաստանս քու երեսէդ թող ելլէ.
 Քու աչքերդ ուղղութիւնը թող տեսնեն:
 3 Իմ սիրաս փորձեցիր, գիշեր ատեն քննեցիր.
 Զիս էրաւն փորձեցիր ու բան մը չդտար.
 †Միտքս դիր որ բերանս պատուիրանազանց ըլլաս:
 4 Մարդոց գործերուն նայելով

*Այսինքն, անձս, էամ, լեզուս

†Կա՛, դժոխվին

‡Կա՛, Բերանս իմ խորհուրդէս պիտի չհեռանայ

Քու շրթունքներուդ խօսքերովը ես բռնաւորին ճամբաններէն զգուշացայ:

5 Իմ քայլերս քու ճամբաններուդ մէջ պահէ,

Որպէս զի իմ գնացքներս չսասանին:

6 Ես քեզի կանչեցի, վասն զի ինծի պատասխոն պիտի սասա, ով Աստուած:

Խոնարհեցուը ինծի քու ականջդ, լսէ իմ խօսքս:

7 Արանչելի կերպավ քու սղորմաւթիւններդ ցուցուը,

Դուն որ ժեփ յուսացաղները աշ ձեռքովդ կ'ազատես Հակառակ կեցողներէն:

8 Աչքի բերի պէս զիս պահէ,

Թեւերուդ հովանաւորութեանը տակ զիս ծածկէ

9 Ինծի տառապանք տառող ամբողիշտներուն երեսէն:

Իմ անձիս թշնամիները զիս պաշտրեցին:

10 Իրենց պարաբռութիւնովը ծածկուն կուեցան,

Իրենց բերնովը ամբարաբռաւանութեամբ խօսեցան:

11 Հիմա քայլերնուու չորս կողմը պատելով՝

Աչքերնին եւ կու անկեցին գետինը զարնելու համար,

12 Առիւծի պէս որ կը փափաքի գիշատել.

Առիւծի կորիւնի պէս որ դարտնակալ կ'ըլլայ:

13 Ելիր, ով Տէր, անոր առջև ինչի օհուունեան հասիր,

Զանիկա գետինը զարի.

Քու սրավդ քրիէ իմ անձս ամբաղիշտներէն,

14 Քու ձեռքովդ մարդոցմէն որոնց բաժինը սյս կեանքին մէջ է,

Ու սննաց փորիւը շտեմարտներէդ կը լեցնես.

*Անաց որդիներն ու կը կշտանան,

*Կամ, Անոնք որդիներով

Ու իրենցմէ աւելցածը իրենց տղացը կը թողուն:

15 Իսէ ես արդարութեամբ պիտի աերնեմ քու երեսդ,

Երբ արթննամ քու գէմքէդ պիտի կշտանամ:

ՍԱՂՄՈՍ ԺԷ

Պլիսաւը երաժշգին, Տէրով ծառապին գաւթի Սուլուս, որ ըստ Տէրով այս երգին խօսքերը պյու որը որ Տէրը աղասեց զանկիս իր ամէն թշնամիներուն ձեռքէն, և Սաւուզի ձեռքէն ու ըստ,

- 1 Ով Տէր, իմ զօրութիւնս, քեզ պիտի միրեմ:
- 2 Տէրը իմ վէմս, ամիսւթիւնս ու փրկես է:
- 3 Իմ Աստուածս իմ պարփազու է, ես անոր կը յուսամ:
- 4 Անիկա իմ վահանս ու իմ փրկութեանս եղիւրը Ու իմ բարձր աշտարակու է:
- 5 Օրհնեալ Տէրը կը կանչեմ:
- 6 Ու իմ թշնամիներէս կ'ազատիմ:
- 7 Մահուտն լարերը իմ բոլորտիքս առին:
- 8 Ու անօրէնսւթեան հելեղները զիս վախցուցին:
- 9 Դերեզմանին լարերը զիս պաշտրեցին:
- 10 մահուտն որոգայթները իմ առջեւս առին:
- 11 Իմ նեղութեանս մէջ Տէրոջը կանչեցի:
- 12 Ու իմ Աստուծոյս աղասկակեցի:
- 13 Անիկա իր տաճորէն իմ ձայնս լուց,
- 14 Ու իմ աղասկակա անոր տողն՝ տնօր ականջը հասաւ:
- 15 Այն պատէն երկիր ստանեցաւ ու գաղաց,
- 16 Լեռներուն հիմերը շարժեցան ու ստանեցան,
- 17 Քանզի Անիկա բորկացաւ:
- 18 Անոր քիթէն ծուխ ելու,
- 19 Ու բերնէն մաշող կրոկ.
- 20 Անկէ կայծակներ բանկեցան:

- 9 Եւ անիկա երկինքը խոնարհէցուց ու իջաւ,
Եւ անոր սագերաւն տակ մառափուղ կար։
10 Ու քերպէի մը վրայ ելաւ ու թաւաւ,
Ու հովին թեւերաւն վրայ ոլսցաւ։
11 Խուարը իրեն ժածկոյթ դրաւ,
Ու իր բոլորտիքը իրեն բնակարան։
Թանձը ջուրերը ու երկինքի ամպերը ըրաւ։
12 Անոր առջև եղաղ պայծառութենէն անոր ամպերը
անցան
Կարկուտով ու կրակի կայծակներով։
13 Ու Տէրը երկինքին մէջ որոտաց,
Եւ Բարձրեալը իր ձայնը լուսուաւ
Կարկուտով ու կրակի կայծակներով։
14 Եւ իր նետերը զրկեց ու զանոնք ցրուեց,
Եւ շատ կայծակներ զրկեց ու զանոնք խոռովցուց։
15 Եւ քու յանդիմանութիւնովդ, ով Տէր,
Քու բարկութեանդ հօվին ֆչելավը
Ջուրերուն յատակները երեւցան,
Ու աշխարհի հիմերը յոյանուեցան։
16 Բարձրէն զրկեց ու զիս բռնեց,
Եւ շատ ջուրերէն զիս հանեց։
17 Իմ զօրեղ թշնամիէս ու զիս ատողներէն աղատեց
զիս։
Վասն զի ինձմէ զօրաւոր էին։
18 Իմ նեղութեանս օրը իմ առջեւս առին,
Բայց Տէրը ինձի հասրատանիւնն գաւազան եղաւ։
19 Եւ զիս լայնարձակ տեղ մը հանեց,
Ու զիս աղատեց, վասն զի ինձի հաւնեցաւ։
20 Տէրը իմ արդարութեանս պէս ինձի փոխարէն կու
տայց,

- իմ ձեռքերուս մաքրութեանը համեմատ հատու-
ցում կ'ընէ ինձի։
21 Վասն զի Տէրոյջը ճամբաները պահեցի,
Ու իմ Աստուծոյ գէմ՝ ամբուշտութիւն չըրի։
22 Քանզի անոր ամէն գատասատանները իմ առջեւս էին,
Ու անոր օրէնքները ինձմէ չեւացուցի։
23 Նաև անոր առջև կատարեալ եղայ,
Ու իմ անօրէնութենէս զգուշացայ։
24 Եւ Տէրը ինձի հասուցում ըրաւ իմ արդարութեանս
համեմատ,
իմ ձեռքերուս մաքրութեանը համեմատ՝ որ անոր
աչքերուն առջև է։
25 Ողբրմածին հետ ողբրմած կ'ըլլաս,
կատարեալ մարդուն հետ կատարեալ կ'ըլլաս.
26 Մաքրութին հետ մաքրութ կ'ըլլաս,
Ու ժուռին հետ կը ծախս։
27 Վասն զի գուն վշտացած ժողովարդը կ'ազատես,
Ու ամբարտաւան աչքերը կը ցածցնես։
28 Քանզի գուն իմ ճրագս կը վառես։
Իմ Տէր Աստուծու իմ խաւարս կը լուսաւորէ։
29 Վասն զի քեզմոն գունդի մը վրայ կը վազեմ,
Ու իմ Աստուծովս պարիսպէ կ'անցնիմ։
30 Ոստուծոյ ճամբան կատարեալ է.
Տէրոջը խօսքերը փորձուած են.
Անիկա ամէն իրեն յաւսացոյններուն ասպար է։
31 Քանզի Տէրոջմէն զատ ո՞վ է Աստուծ,
կամ մեր Աստուծմէն զատ ո՞վ է վէմ։
32 Աստուծ է որ ինձի զրութիւն կը հագնէ,
Ու իմ ճամբան կատարեալ կ'ընէ։
33 Իմ առքերս եղջերուի որդերուն պէս կ'ընէ,

- Ու իմ բարձր տեղերտու վրայ զիս կը կայնեցնէ:
- 34 Զեռքերս պատերազմի կը վարժէ,
- Ու իմ *բազուկներս պղնձէ աղեղ կը լորեն:
- 35 Ինձի նաև քու փրկութեանդ ասպարը տուիր.
- Եւ քու աջ ձեռքդ զիս զօրացուց,
- Ու քու քաղցրութիւնդ զիս մեծցուց:
- 36 Իմ քալելու ճամբաս ներքեւս լոյնցուցիր,
- Ու իմ ոռքիս յօդուածները չսասանեցան:
- 37 Իմ թշնամիներս հալածեցի ու անոնց հասաց:
- Ու ետ չդարձայ՝ մէնչեւ որ զանոնք հատցուցի.
- 38 Զանոնք գետինը զարկի, ու կանդնելու կարող չեղան.
- Անոնք իմ ոռքերտու տակ ինկան:
- 39 Ու պատերազմի համար ինձի զօրութիւն հարցուցիր,
- Իմ վրաս ելողները տակու ձգեցիր:
- 40 Ու իմ թշնամիներտուս +կանակը ինձի ռորդնելտուիր,
- Որպէս զիս զիս ատողները չարգել:
- 41 Աղաղակեցին, բայց աղատող չկար.
- Տէրոջը ուղաւէցին, բայց անոնց պատասխան չսուտաւ:
- 42 Ու զանոնք հովին տաջեկն ճղուած փոշիի պէս մանրեցի,
- Եւ փողօշներուն ցերին պէս մէկդի ձգեցի զանոնք:
- 43 Ժողովսրդին կոիւներէն զիս աղատեցիր,
- Ու զիս աղդերու զլոււ ըրիր.
- Իմ չգիտցած ժողովսրդու ինձի ծառացեց:
- 44 Երենց ականչներավը լուսնուն պէ՛ ինձի հնազանդեցան.
- Օտարները ինձի չխոնարհութիւն ըրին:

*կամ, բազուկներով պղնձէ աղեղ մը կը կոտրուի
+կամ, պարտնոցը ինձի տուիր
†ԵԲՌ տաշցին

- 45 Օտարները տկարացան,
Եւ իրենց պահուըստ տեղերէն գողոցին:
- 46 Տէրը կենդանի է, ու իմ Վէմա օրհնեալ ըլլու,
Եւ իմ փրկութեանս Աստուածը բարձր ըլլու:
- 47 Աստուած է որ իմ վրէժս կը ինդրէ,
- Ու ժողովսրդները ինձի կը հնազանդեցնէ:
- 48 Իմ թշնամիներէս զիս կը փրկէ.
- Նաև զիս իմ վրաս ելլողներէն առելի բարձրացուցիր,
- Ու բանաւոր մարդէն զիս աղատեցիր:
- 49 Անոր համար, ով Տէր, ազգերուն մէջ քեզ պիտի
գոլից:
- Եւ քու անուանդ սաղման պիտի երգեմ:
- 50 Իր թագաւորին փրկութիւնները մեծցնոզրա,
- Ու իր օծեալին, Դաւիթի, ու անոր սերունդին
Յաւիտեան սղորմութիւն լնողը Ան է:

ՍԱՂՄՈՍ ԺԹ

Գիմաւոր երաժշտին. Սաղմոն Դաւթի:

- Երկինք Աստուած ոյ փառքը կը պատմէ,
Ու երբինք հաստատութիւնը անոր ձեռքերուն գործէրը կը ցուցնէ:
- 2 Օրին կը յայտնէ խօսքը,
- Ու գիշերը գիշերին կը ցուցնէ գիտութիւնը
- 3 Զկայ զրայ ու չկան խօսքեր.
- Անոնց ձայնը չլսուիր:
- 4 Բայց ամէն երկիր ելաւ անոնց հնչիւնը,
Ու մինչեւ աշխարհի ծոյրը՝ անոնց խօսքը:
- Անոնց մէջ արեւին համար վրան մը կանդնեց.

- 5 Ու *անիկա իր առագաստէն ելած փեսպի պէս է,
Հզօր մարդու պէս իր ճամբան վազելով կ'ուրախանայր
6 Անոր ելքը երկինքի ծայրէն է,
Ու անոր շրջանը մինչև անոնց ծայրերը,
Եւ անոր տաքութենէն բան մը չծածկուիր
7 Տէրոջը օրէնքը կատարեալ է, հոգին կը նորոգէ.
Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է, տղէտը իմաստուն
կ'ընէ:
8 Տէրոջը կանոնները շիտակ են, սիրոը կ'ուրախացնեն.
Տէրոջը պատուիրանքները պայծառ են, աչքերուն
լցո կու տան:
9 Տէրոջը վախը սուրբ է, յաւիտեան կը մնոյ.
Տէրոջը դատաստանները ճշմարիտ ու բոլորավին ար-
դար են:
10 Ցանկալի են անոնք ոսկիէն ու շատ փորձուած ոսկիէն.
Մեղքէն անոյշ են, ու խորիսիէ կալթած մեղքէն:
11 Կուե քու ծառադ անոնցմով կը խրատուի,
Ու զանոնք պահելուն վարձքը շատ է:
12 Ո՞վ կրնայ միտք տռնել է յանցանքները.
Ցածուուկ եղածէն զիս մաքրէ.
13 Ամբարտաւան եղածէն ալ պահէ քու ծառադ.
Թող անոնք ինծի չտիրեն.
Այն առեն անմեղ կ'ըլլամ,
Ու կը մուքրուիմ մեծ անօրէնութենէ:
14 Բերնիս խօսքերը ու սրտիս խորհուրդը
Քու առջեւդ ընդունելի ըլլան,
Ով Տէր, իմ վէմն ու փրկիչս:

ՍԱՂՄՈՍ Ի

Գլխաւոր երաժշտին Սաղմոս Դաւթի:

- 1 ՝ Անդութեան օրը Տէրը պատասխանէ քեզի,
Յակորի Աստուծյն անունը քեզ պաշտպանէ.
2 Օգնութիւն զրկէ քեզի սուրբ առեղէն,
Ու Ախօնէ զօրացնէ քեզ.
3 Քու ամէն լնծաներդ յիշէ,
Եւ քու ողջակէ զներդ ընդունի. (Աէլա.)
4 Քու սրախդ համեմատ քեզի տապ,
Եւ քու ամէն խորհուրդներդ կատարէ:
5 Քու փրկութիւնովդ պիտի ուրախանանք,
Ու մեր Աստուծյն անունովը դրոշակ վերցնենք:
Տէրը կատարէ քու ամէն խնդրուածքներդ:
6 Հիմա գիտոցայ որ Տէրը կը պահէ իր օծեալը,
Անոր պատասխան կու տայ իր սուրբ երկինքէն:
Իր աջ ձեռքին փրկութեան ուժովլի:
7 Ոմանք կառքերու, և ոմանք ալ ձերու Ք'աղաքնին,
Բայց մենք մեր Տէր Աստուծյն անունը պիտի յիշնէնք:
8 Անոնք կորացան ու ինկան,
Բայց մենք ելանք ու շիտակ կայնեցանք:
9 ՝ Ով Տէր, փրկէ թագաւորը,
Պատասխան տուր մեզի մեր կանչելու օրը:

*Այս Ով Տէր, փրկէ թագաւորը մեզի պատասխան
տայ մեր կանչելու օրը

ՍԱՂՄՈՍ ԻԱ.

Գլխաւոր երաժշտին. Սաղմաս Դաւթի:

- 1 **Ով** Տէր, քու զօրութիւնովդ թագաւորը ուրախ պիտի ըլլայ,
- 2 Ու քու փրկութիւնովդ ո՛քչափ շատ պիտի ցնծայ;
- 3 Անոր սրտին ժամանակը իրեն առուիր,
- 4 Ու անոր շըմունկներուն խնդիրը էմբ չարդիլեցիր, (Աւշաւ)
- 5 Վասն զի բարութեան օրհնութիւններով անոր հասար,
- 6 Անոր զլուկը մաքուր սակիէ պասկ գրիր:
- 7 Քեզմէ կեանք խնդրեց,
- 8 Ու անոր երկայն օրեր տուիր յաւիտեանս յաւիտենից:
- 9 Անոր փառքը մեծ է քու փրկութիւնովդ.
- 10 Փառքը ու վայելութիւն դրիր անոր վրայ:
- 11 Վասն զի օրհնութիւնները անոր վրայ հասատատեցիր յաւիտեան.
- 12 Ուրախութեամբ ուրախ ըրեր զանիկա քու երեսիդ առջեւ:
- 13 Վասն զի թագաւորը Տէրոջը կը յուսայ,
- 14 Ու բարձրելցին ողսմանութիւնովը պիտի չսասանի:
- 15 Քու ձեռքք պիտի գտնէ քու ամէն թշնամիներդ.
- 16 Քու աջ ձեռքք պիտի գտնէ քեզ ասազները,
- 17 Զանոնք կրակի հնոցի պէս պիտի ընես քու բարկութեամդ ժամանակը.
- 18 Տէրը իր բարկութիւնովը *բոլորովին պիտի կորսնցնէ զանոնք,

*Եր, պիտի կը

- 1 Ու կրակը պիտի ուտէ զանոնք:
- 2 Անոնց պատովը երկրէ պիտի կորսնցնէս,
- 3 Ու անոնց սերունդը մորդոց որդիներէն:
- 4 Վասն զի քեզի գէմ չարութիւն պատրաստեցին.
- 5 Նենդութեան խորհուրդ ըլլին, բայց կարող չեղան իսորգէլ:
- 6 Վասն զի գուն անոնց կռնակը ետ պիտի գարձնես.
- 7 Քու ներդրու անոնց երեսին դէմ՝ լարերուդ վրայ պիտի պատրաստես:
- 8 Ով Տէր, քու ուժովդ բարձր եղիր.
- 9 Պիտի երգենք ու սաղմաս ըսենք քու զօրութեանդ:

ՍԱՂՄՈՍ ԻԲ

- Գլխաւոր երաժշտին, Այէլէդ Շահարի վրայ. Սաղմաս Դաւթի:
- 1 **Աստուած իմ՝ Աստուած իմ՝, զիս ինչո՞ւ թաղուցիր.**
 - 2 **Զիս փրկելէն ու պատալըս խօսքերէն հեռու եղարի**
 - 3 **Ով իմ՝ Աստուածս, ցրուկը ծեռէ կը կանչեմ՝, ու չես պատախաներ.**
 - 4 **Եւ գիշերը իւ խնելմ ու չեմ՝ դադարիր:**
 - 5 **Բայց գուն սուրբ ես,**
 - 6 **Ով Խարսցէլի գովարանութեանց մէջ բնակազ:**
 - 7 **Մեր հայրերը քեզի յաւսացան.**
 - 8 **Ցուսացան, ու փրկեցիր զանոնք:**
 - 9 **Քեզի աղաղակեցին ու աղստեցան.**
 - 10 **Քեզի յաւսացան ու չամչցան:**
 - 11 **Բայց ես որդ եմ ու մարդ չեմ.**
 - 12 **Մարդոց մէջ քամահը ուած, ու ժրդովուրդներուն մէջ անարգուած:**

- 7 Ամէն զիս տեսնաղները զիս ծազը կ'ընեն,
Երթունք կը բանան, գլուխ կ'երեցնեն,
8 Հուշւէ, Տէրոջը յուսացաւ, ու թող փրկէ զանիկա.
Թող ազատէ զանիկա, վասն զի անոր հաւանեցաւ:
9 Բայց զիս օրը արգանդէն հանողը գուն ես.
Մօրս ծիծը եղած ատենս գուն ինձի յոյս առւեր:
10 Արգանդէն ես քեզի յանձնուեցայ.
Խմ մօրս որավայնէն գուն ես իմ Աստուածա:
11 Մի հեռանար ինծմէ, վասն զի նեղութիւնը մնա է,
Վասն զի օգնող մը չեպս:
12 Եսոս զուարակներ չըրս կողմն առին,
Բասանի ցուլերը զիս պաշտեցին.
13 Իրենց բերտնը իմ վրաս բացին՝
Յափշտակող ու մանչող առիւծի պէս:
14 Զուրի պէս թափուեցայ,
Ու ամէն ոսկորներս քափուեցան.
Սիրտս մնմի պէս եղաւ,
Հալեցաւ փորիս մէջ:
15 Զորացաւ իմ ոյժս հողէ ամանի մը պէս,
Ու լեզուս քիմքիս փուկաւ.
Եւ զիս մահուան հողը գրիբ:
16 Վասն զի շուները չըրս կողմն առին,
Զարերուն ժողովքը զիս պատեցին,
Զեռքերս ու ոսքերս ծակեցին:
17 Խմ ամէն ոսկորներս կրնամ համբել.
Անոնք կը նային, կը տեսնեն զիս:
18 Խմ հանդերձներս իրենց մէջ կը բաժնեն,
Ու պատմուանիս վրայ վիճակ կը ձգեն:
19 Բայց գուն, ով Տէր, մի հեռանար ինչդ.
Ով իմ զօրութիւնս, շատառլ ինձի օգնութեան հասիր.

- 20 Իմ անձս առւրէն ազատէ,
Ու *կեանքս՝ շանը ձեռքէն:
21 Փրկէ զիս առիւծին բերնէն,
Ու ինձի պատասխան տուր †միեղջերուներուն եղ-
ջերներէն:
22 Քու անունդ եղբայրներուս պիտի պատմեմ,
Ժողովքին մէջ քեզ պիտի գովեմ:
23 Ով Տէրոջմէ վախցողներ, գովեցէք զանիկա.
Ով Ցակորի բոլը զաւակները, փառաւորեցէք զա-
նիկա,
Ու վախցէք անկէ, Խորայէլի բոլը զաւակները:
24 Վասն զի չոնարդեց ու չքամահրեց առաւապետին
‡տառապանքը,
Ու երեսը անկէ չդարձուց.
Հազար իրեն կոնչած ատենը լսեց:
25 Քեզմնվ պիտի ըլլայ իմ գովութիւնս մեծ ժողովքին
մէջ.
Խմ ուխտերս անկէ վախցողներուն առջև պիտի կա-
տարեմ:
26 Տնանկները պիտի ուտեն ու կշտոնան.
Տէր պիտի գովեն զանիկա փնտողները,
Զեր պիրու յաւիսեան պիտի ապրի:
27 Պիտի յիշեն ու Տէրոջը դաւանան երկիր ամէն ծայրերը,
Ու քու առջեւգ երկրպագութիւն պիտի ընեն ազգե-
րուն ամէն տոհմերը:
28 Վասն զի թագաւորութիւնը Տէրոջն է,

*Եբ. միամօրս

†Կամ, վայրի ցուլերուն

‡Կամ, աղաղակը

- Ու ան կը տիրէ ազգերուն վրայ։
 29 Երկրի ամէն պարարտաները պիտի ուտեն ու երկրապա-
դութիւն պիտի ընծն։
 Ամէն հողը իշխաները ծունկ պիտի կրկնեն անոր
առջեւ,
 Ու ան ու որ իր անձը չսապեցներ։
 30 Զաւալը պիտի ծառայէ անոր.
 Ու Տէրոջը վրայով պիտի պատմուի հալու դարուն
մէջ։
 31 Պիտի գան ու անոր արդարութիւնը պիտի պատմեն
Այն ժաղավարդին, որ պիտի ծնանի.
 Վասն զի այս բանը ան կատարեց։

ՍԱՂՄՈՍ ԻԳ

Սաղմաս Դաւթի։

- 1 **Տէրը** իմ հովիւս է.
 Ես բանէ Տէ կարօտութիւն պիտի չունենամ։
 2 Զիս խստաւէտ արօտներու մէջ կը պատկեցնէ.
 Հանդարտ ջուրերուն քոլ ինձի կ'առաջնորդէ.
 3 Հոգիս կը նորոգէ.
 Իր անուանը համար արդարութեան Ճամկաներուն
մէջ կ'առաջնորդէ ինձի
 4 Թէւ մոհուուն շուքի ծորին մէջ ալ պարախմ,
 Զարէն պիտի չվախնամ,
 Վասն զի գուն ինձի հետ ես.
 Քու ցուպդ ու գաւազանդ՝ անմէք զիս պիտի միտ-
թարին։
 5 Աեղան կը պատրաստես իմ առջեւս իմ թշնամինե-
րաւ դիմաց։

- իմ գլուխս իւղով կ'օծես,
 իմ բաժակս խիստ լեցուն է։
 6 Ցիրաւի բարերարութիւնը ու ողարմութիւնը ինձի
 հետ պիտի գան
 կետնքիս բոլոր օրերուն մէջ,
 Ու շատ օրեր Տէրոջը առնը պիտի բնակիմ։

ՍԱՂՄՈՍ ԻԳ

Սաղմաս Դաւթի։

- 1 **Տէրոջն** է երկիր ու անոր լիութիւնը,
 Աշխարհ ու անոր բնակիչները;
 2 Վասն զի ինք անոր հիմերը ծովերուն վրայ ձգեց,
 Ու զանիկա գետերուն վրայ հաստատեց։
 3 Ո՞վ պիտի ելլէ Տէրոջը լեռը,
 Կամ ո՞վ պիտի կենայ անոր սուրբ տեղը;
 4 Զեռքերայ սուրբը ու սրտով մագքուրը,
 Որ ստութեան անձնատուր չեղու,
 Ու նենգութեամբ երդումը չըրաւ,
 5 Անիկս Տէրոջմէն օրհնութիւն պիտի ստանայ,
 Ու իր փրկութեամբ Աստուծմէն՝ արդարութիւն։
 6 Զանիկա փնտոսղներուն ցեղը այս է.
 Քու երեսդ ինդրողները *Յակոբն է* (Աւելաւ)
 7 Ու գոներ, գլուխնիդ վեր վերցուցէք
 Ու վերցուեցէք, ուլ յաւիտենական դռներ,
 Որպէս զի փառաց թագաւորը մտնէ։
 8 Ո՞վ է այս փառաց թագաւորը,
 Կարող ու հզոր Տէրը,
 Պատերազմի մէջ հզոր Տէրը։

*Կամ, ով Յակոբ

- 9 Ով գոներ, գլուխնիդ վեր վերցուցէք.
Ու վերցուեցէք, ով յատիսենական գոներ,
Որպէս զի փառաց թագաւորը մանէ:
- 10 Ո՞վ է այս փառաց թագաւորը.
Զօքերուն Տէրը,
Ինքն է փառաց թագաւորը: (Սէլու)
- ՍԱՂՄՈՍ ԻԵ
- Սաղսա Դաւթիւ
- 1 Ով Տէր, իմ անձս քեզի վերցուցիւ
2 Ով իմ՝ Աստուածս, քեզի յուսացոյ. թող չամշնամ,
Ու թշնամիներս իմ գրաս չյնձան:
3 Նաև ամէն քեզի սպասողները թող չամշնան.
Ունայնութեամբ անօրէնութիւն քնողները թող
ամշնան:
- 4 Ով Տէր, քու ճամբաներդ ցուցուր ինծիւ,
Քու շաւիդներդ սորվեցուր ինծիւ
5 Քու ճշմարտութեամբ մէջ ինծիւ առաջնորդէ ու
սորվեցուր ինծիւ,
Քանզի գունեն ես իմ գրկութեամս Աստուածը.
Ես քեզի կը սպասեմ ամէն օր:
- 6 Ով Տէր, քու գթութիւններդ ու ողսրմութիւններդ
յիշէ.
- Վասն զի յաւիտենական են:
- 7 Մանկութեամս մեղքերս ու յանցանկներս մի յիշեր,
Հաղոս քու ողսրմութիւննորդ զիս յիշէ
Քու բարութեամնդ համար, ով Տէր:
- 8 Տէրը բարի և ուղել է.
- Անոր համար մեղաւորներուն կը սորվեցնէ ճամբան:
- 9 Գատաստանի մէջ պիտի առաջնորդէ չեղերուն,

- ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍՈՅ
- Ու իր ճամբան հեղերուն պիտի սորվեցնէ:
- 10 Տէրովը բոլոր ճամբաները ողսրմութիւն ու ճշմարտութիւն են
իր ուխտը ու վկայութիւնները պահպաներուն:
- 11 Ով Տէր, քու անուանդ համար
Ներէ իմ անօրէնութիւնս, *վասն զի մեծ է:
- 12 Ո՞վ է այս մարդը որ Տէրովէն կը վախնայ.
Ահա անոր պիտի սորվեցնէ իր ընտրած ճամբան:
- 13 Անոր անձը բարութեամս մէջ պիտի ընակի,
Ու անոր սերունդը երկիրը պիտի ժառանգէ:
- 14 Տէրովը ընտանութիւնը իրմէ վախցողներուն հետ է,
Ու իր ուխտը անսոնց կը սորվեցնէ:
- 15 Իմ աչքերս ամէն ատեն Տէրովը լը նայէն,
Վասն զի իմ սորքերս սորվայթէն ան պիտի հանէ:
- 16 Ինծիւ գարձիր ու ողորմէ ինծիւ,
Վասն զի մինուկ ու վշտացած եմ:
- 17 Արսիս նեղութիւնները շատցան.
Իմ վիշտերէս զիս հանէ:
- 18 Իմ նեղութեամս ու տառապանքիս նայէ,
Ու բոլոր մեղքերս ներէ:
- 19 Տես իմ թշնամիներս, վասն զի շատցան,
Ու անիրաւ ատելութիւնով զիս ատեցին:
- 20 Պահէ իմ անձս ու գրկէ զիս.
Թող չամշնամ, վասն զի քեզի յուսացոյ:
- 21 Կատարելութիւնը և ուղղութիւնը զիս թող պահէն,
Վասն զի քեզի սպասեցի:
- 22 Ով Աստուած, գրկէ Խարայէլը
իր ամէն նեղութիւններէն:

ՍՈՂՄՈՍ ԻԶ

Սույնո Դաւթի:

- 1 ՈՎ Տէր, զիս դատէ,
Վասն զի իմ անարատութիւնովս քալեցի.
- 2 Տէր յուսացայ, պիտի չսասանիմ:
- 2 ՈՎ Տէր, զիս փորձէ ու քննէ,
Փորձէ իմ երիկամունկներս ու սիրատ:
- 3 Վասն զի քու ողջրմութիւնդ իմ աչքերուս առջև է,
Ու քու ճշմարտութեանդ մէջ քալեցի:
- 4 Ունայն մարդոց հետ չնասայ,
Ու կեղծաւորներուն հետ պիտի չխառնուիմ:
- 5 Զարերուն ժողովքը ատեցի,
Ու ամբարիշաներուն հետ պիտի չնատիմ:
- 6 Անմեջութիւնով ձեռքերս պիտի լուամ,
Եւ քու սեղանիդ չորս կողմը պիտի պտըսիմ, ով
Տէր:
- 7 Որպէս զի շնօրհակալութեան ձայնը լսել տամ,
Ու քու ամէն սպանչելիքներդ պատմեմ:
- 8 ՈՎ Տէր, սիրեցի քու տանդ բնակութիւնը,
Եւ քու փառքիդ կեցած տեղը:
- 9 Մի կորսնցներ իմ անձս մեղսուորներուն հետ,
Ու իմ կեանքո՝ տրիւնաչեղ մարդոցը հետ,
- 10 Որոնց ձեռքերուն մէջ անօրէնութիւն կոյ,
Ու անոնց աջ ձեռքը կաշառքով լցուն է:
- 11 Բայց ես իմ անարատութիւնովս պիտի քալեմ.
Զիս ֆրկէ ու ինձի ողըմէ:
- 12 Իմ ոոքս շիտակութեան մէջ կը կենայ,
Փողովքներուն մէջ Տէրը պիտի օրչնեմ:

ՍՈՂՄՈՍ ԻԵ

Սույնո Դաւթի:

- 1 Տէրը իմ լցոսս ու գրկութիւնս է,
Ես որմէ պիտի լախնամ.
Տէրը իմ կեանքիս ապաւէնն է,
Ես որմէ պիտի դաղամ:
- 2 Զարերուն իմ մարմինս ուտելու համար ինձի մօտեցած ատենը:
Իմ ներդիչներս ու թշնամիներս սահեցան ու ինկանա:
- 3 Եթէ վրաս զօրքի բանակ ելէ,
Արտսոս պիտի չլախնայ.
Եթէ վրաս պատերազմի պատրաստութիւն ըլլայ,
Անով աւ ես վատահ պիտի ըլլամ:
- 4 Բան մը կը խնդրեմ Տէրոջմէն,
Ու ասիկս կ'աղաչեմ,
Որ կեանքիս բոլոր օրերը
Տէրոջը տանը մէջ բնակիմ.
Տէրոջը վայելչութիւնը տեսնելու,
Ու անոր տաճարին մէջ զինք խնդրելու համար:
- 5 Վասն զի չը օրուան մէջ
Իր բնակարանին մէջ զիս պիտի պահէ,
Իր վրանին ծածկութովը զիս պիտի ծածկէ.
Վէմի վրայ պիտի վերցնէ զիս
6 Ու հիմս իմ գլուխս պիտի բարձրանայ
Իմ բոլորակը եղող թշնամիներուս վրայ.
Ու անոր վրանին մէջ ուրախութեան ձայնով զահեր
պիտի մասաւցանեմ.
Պիտի երգեմ ու սաղմոս պիտի ըսեմ Տէրոջը:

- 7 Ով Տէր, ձայնս լու կանչելու տաենս,
Ու ողբամէ և պատասխան տուր ինծի:
- 8 Խմ երես փնտռեցէք՝ ո՞ւ ըսէր,
Խմ սիրսա քեզի ըստաւ, Քու երեսդ պիտի փնտռեմ,
ով Տէր:
- 9 Քու երեսդ ինծմէ մի ծածկեր,
Բարկութիւնով ծառադ մէկդի մի ձգեր.
Ինծի օդնական եղար, զիս մի մելժեր,
Եւ զիս մի թողուր, ով իմ վիրկութեանս Աստուածը:
- 10 Թէւ հայրս ու մայրս զիս թողուն,
Բայց Տէրը զիս պիտի ընդունի:
- 11 Ով Տէր, քու ճամբագ ինծի սորվեցուր,
Ու շիտուկ ճամբուն մէջ ինծի առաջնորդէ թշնամի-
ներուս համրա:
- 12 Զիս իմ թշնամիներուս կամքին մի մասներ,
Վասն զի իմ վրաս սաւտ վկաներ
Ու անիբաւութիւն վչողներ ելան:
- 13 Հաւատոցի Տէրով բարութիւնը տեսնելու
կինդամներուն երկրին մէջ:
- 14 Տէրոջը սպասէ.
Զօրացիր ու սիրոդ թող զօրանայ.
Աւ Տէրոջը սպասէ:

ՍԱՂՄՈՍ ԻԸ

Սաղմոս Դաւթի:

- 1 Ով Տէր, քեզի կը կանչեմ.
Ով իմ Վէմս, մի լուեր ինծի.
2 ըլլոյ որ ինծի լսելով.

- *Գերեզմանը իշնողներուն նմանիմ:
- 2 Լսէ իմ՝ ինդրութքիս ձայնը
Երբ քեզի կ'աղոչեմ,
Երբ իմ՝ ձեռքերս կը վերցնեմ
Դէպի քու սուրբ դաբիրդ:
- 3 Զիս մի †կորանցներ ամբարիշոներուն չետ,
Ու անօրէնութիւն գործողներուն չետ,
Որոնք երենց ընկերներուն չետ խաղաղութիւն կը
խօսին,
Բայց սրտերնուն մէջ չարութիւն կայ:
- 4 Տուր անոնց իրենց գործերուն պէս,
Ու իրենց ըրածներուն չարութեանը պէս.
Իրենց ձեռքերուն գործերուն պէս սուր անոնց,
Հասուցում ըրէ անոնց:
- 5 Որովհետեւ անոնք Տէրոջը ըրածներուն
Ու անօր ձեռքերուն գործերուն մատադրութիւն չեն
լներ,
Պատի կործանէ զանոնք, ու աւ պիտի չշինէ:
- 6 Օրչնեալ ըլլոյ Տէրը,
Որ լսեց իմ՝ աղթքիս ձայնը:
- 7 Տէրը իմ՝ զօրութիւնս ու իմ սասպարս է.
Խմ սիրսա անօր յուսացաւ, ու ես օդնութիւն գտոց.
Ուստի սիրսա սուրախացաւ,
Եւ ես իմ երգովս զանիկա պիտի դոլեմ:
- 8 Տէրը անոնց պիտի է,
Ու իր օծեալին փրկութեանը պարիսպն է:
9 Փրկէ քու ժողովուրդդ:

*ԵԲ. Գուրը

†ԵԲ. քաշեր

- Սիթէ հողը քեզ պիտի գովէ,
կու անկաս պիտի պատմէ^o, քու Ճշմարտութիւնդ։
- 10 Լուէ, ով Տէր, ու ողբրմէ ինծի։
Ով Տէր, ինծի օգնական եղիր։
- 11 Իմ սուգս պարի փոխեցիր,
Քուրձա ինծմէ հանեցիր.
Եւ ինծի ուրախութիւն հաղցուցիր։
- 12 Որպէս զի է փառքս սաղման երգէ քեզի ու ալ չուէ։
Ով իմ Տէր Աստուածս, յաւիտեան քեզ պիտի գովէմ։

ՍԱՂՄՈՍ 1.0.

Գլամար երաժշտին. Սաղմոս Դաւթի։

- 1 Ով Տէր, քեզի յուսացայ,
Յաւիտեան չամչնամ։
Քու արդարութիւնսկդ զիս ազատէ։
- 2 Քու ականջդ ինծի խոնարհեցուր,
Շուտավլ զիս ազատէ։
Ինծի ամիսութեան վէմ մը եղիր։
Եւ զիս ապրեցնելու համոր ապաստանի առւն մը։
- 3 Վան զի իմ վէմն ու բերգս դուն ես,
Եւ քու անուտնդ համար ինծի առաջնորդէ ու զիս
կաւալպարէ։
- 4 Որդույթէն զիս հանէ, զսր ինծի համար գաղտուկ
լրեր են,
Վան զի իմ զօրութիւնս դուն ես
- 5 Իմ հոգիս քու ձեռքդ կը յանձնեմ։
Ով Եհովա Աստուած Ճշմարտութեան, դուն զիս
փրկեցիր։
- 6 Անսաի ունաւնութիւններ պահողները առեցի։

- Բայց ես Տէրովը յուսացայ։
- 7 Քու ողբրմութիւնսկդ պիտի ցնծամ և ուրախ ըլլում։
Վան զի իմ թշուտառութիւնս տեսար,
Ու իմ անձս տառապանկներու մէջ գիտցար։
- 8 Եւ զիս թշնամիին ձեռքը չմատնեցիր,
Հառու իմ սուբերու լոյնարձակ տեղ մը կանգնեցուցիր։
- 9 Ով Տէր, ողբրմէ ինծի, վան զի նեղութեան մէջ եմ։
Արտնեղութենէ մաշեցաւ իմ աչքս, իմ անձս ու իմ
փորս։
- 10 Վան զի իմ կեանքս տրտմութենէ՝
Ու տարիներս հաւաշչանք ընելէ սպառեցան.
Իմ զժս թշուտառութենէս տկարոցաւ,
Ոսկորներս ալ մաշեցան։
- 11 Իմ բոլոր թշնամիներուս, մտնաւանդ դրացիներուս,
առջև նախատինք եղայ,
Ու իմ ծամութներուս երկեղ եղայ.
Զիս դուրսը տեսնողները ինծմէ կը փախչէին։
- 12 Մեռածի պէս սրտէ մոռցուտծ եղայ,
Կորուած ամանի նմանեցայ։
- 13 Վան զի շատերու բամբասանքը լսեցի.
Զորս կողմն վախ կար.
Երբ անոնք ինծի համար մէկտեղ ժողվուեցան,
Խորչուրդ կ'ընէին որ հոգիս առնեն։
- 14 Բայց եւ քեզի յուսացայ, ով Տէր
Ըսի թէ Դուն ես իմ Աստուածս։
- 15 Իմ ժամանակներս քու ձեռքդ են,
Փրկէ զիս թշնամիներուս ձեռքէն ու զիս հալածող-
ներէն։
- 16 Քու ծառայիթ վրս երնաք փայլեցուր,
Քու ողբրմութիւնսկդ զիս փրկէ։

- 17 Ուշ Տէր, չամչնար,
Վասն զի քեզի կանչեցի.
Ամբարձուները թող ամչնան,
Ու գերեզմանին մէջ թող լսու կենան:
- 18 Թող պապանձին սոսախօս շրմունքները,
Որոնք հպարտութեամի և նախատինքով
Ամբարտաւանութիւն կը խօսին արդարին դէմ:
- 19 Ո՛րչափ մեծ է քու բարութիւնդ՝
Զոր քեզմէ վախցողներուն համար պահեցիր,
Ու քեզի յուսացողներուն համար ըբիր
Մարդոց որդիներուն առջև:
- 20 Զանոնք քու երեսիդ ծածկոյթավը պիտի ծածկես
Մարդոց գաւառճանութիւններէն.
Խորանի մէջ պիտի ծածկես զանոնք
Լեզուներուն հակառակութենէն:
- 21 Օրհնեալ ըլլայ Տէրը,
Վասն զի իր ողորմութիւնը զարմանալի ըրտւ ինժի
Պարսպաւոր քաղաքի մէջ:
22 Իմ շփոթութեանս մէջ ըսի թէ
Կտրուեցայ ես քու աչքերուդ առջեւէն.
Սակայն դուն իմ աղօթքիս ձայնը լսեցիր
Երբ քեզի աղաղակեցի:
- 23 Տէրը սիրեցէր, ով անոր բոլոր սուրբերը,
Վասն զի Տէրը հաւասարեցալները կը պահէ,
Ու ամբարտաւանութիւն ընողներուն առաստօքն հա-
տուցում կ լնէ:
- 24 Կտրիճ եղէք ու ձեր սիրող թող զօրանսՍ
Դուք ամէնդ որ Տէրոջը կը յուսափ:

- ՍԱՂՄՈՍ ԼՅ
- Դաւիթի Ներդբ:
- 1 Երանին անոր՝ որուն յանցանքներուն թողութիւն
եղաւ,
Ու անոր մեղքերը ծածկուեցան:
2 Երանին այն մարդուն՝ որ Տէրը անօրէնութիւն չսե-
պեր անոր,
Ու անոր հոգին մէջ նենդութիւն չկայ:
3 Երբ լուռ կեցայ, սոկոներս մաշեցան
Իմ ամէն օր աղաղակելսվաւ,
4 Վասն զի ցորեկ ու գելքը քու ձեռքդ իմ վրաս ծան-
բացաւ,
Իմ թացութիւնս ամսաւուն չսրտթեան դարձաւ
(Աէլաւ)
5 Իմ մեղքս քեզի յոյտնեցի,
Ու իմ անօրէնութիւնս չծածկեցի.
Հսկ թէ Տէրոջը պիտի խոստովանիմ յանցանքներս.
Ու դուն թողուցիր իմ մեղքիս անօրէնութիւնը
(Աէլաւ)
6 Ասոր համար ամէն աստուածավաշտ աղօթք պիտի
ընէ քեզի
Քու գտնուելու ժամանակի.
Արդարեւ շատ ջուրերուն հեղեղներուն տառենը
Անոր պիտի չմօտենան:
7 Դուն եւ իմ ապաստանարանն.
Նեղութենէ զիս պիտի պահէս.

- Դուն զիս պիտի պատես ազատութեան երգերով՝
(Սէլու)
- 8 Քեզի պիտի արվեցնեմ, ու երթողու ճամբարդ
պիտի ցուցնեմ. քեզի.
- *Քեզ պիտի խրառեմ, իմ աչքս քու վրադ պիտի
ըլլոյ:
- 9 Զիս պէս ու ջրիկ պէս մի ըլլաք, որո՞ւմ միտք չունին,
Ու իրենց ասնձին ու պահանցին զարդով կապելու
է, որպէս զի քեզի չժնանան:
- 10 Ամբարշամին տանջանքները շատ պիտի ըլլան,
Սակայն Տէրոջը յաւսացողին չորս կողմբ ողորմու-
թիւնը պիտի պատէ:
- 11 Ով արդարներ, Տէրոջմով ուրախ եղէք ու ցնծացէք,
Ցնծութեամբ երգեցէք դուք ամէնդ՝ որ սրտով ու-
ղել եք:

ՍԱՂՄՈՍ ԼԿ

- 1 Ով արդարներ, Տէրոջմով ցնծացէք.
Ուղիղներուն կը վայլէ օրհնութիւն երգէւ:
- 2 Գովեցէք Տէրը քնարով,
Տարը լար ունեցող տառիլով սաղման երգեցէք անոր:
3 Նոր երգ մը երգեցէք անոր,
Վարպետութեամբ հաստրաները զարկէք ցնծու-
թեան ձայնով:
- 4 Վասն զի Տէրոջը խօսքը շխատէ,
Ու անոր բոլոր գործերը ճշմարտութեամբ են
5 Անփկա արդարութիւնը ու իրաւունքը կը սիրէ,
Տէրոջը ողորմութիւնով երկիր լեցուն է:

*կամ, խորհուրդ պիտի ընելմ + եղի համար

- 6 Տէրոջը խօսքով երկինք ստեղծուեցաւ,
Ու իր բերնին հօգիսով՝ անոր բոլոր զօրքը:
- 7 Ծովան ջուրերը *գէզի մը պէս՝ կը ժողվէ,
Անդունդները շատեմարաններուն մէջ կը դնէ:
- 8 Բոլոր երկիր թող Տէրոջմէն վախնայ,
Ու անկէ գողան աշխարհի բոլոր բնակիչները:
- 9 Վասն զի անիկա ըստաւ, ու եղաւ,
Ինք հրամացեց, ու հաստատուեցաւ:
- 10 Տէրը կը ցրուէ հեթանոսներուն խորհուրդները,
Փուժ կը հանէ ժողովարդներուն դիտաւորութիւն-
ները:
- 11 Տէրոջը խորհուրդը յաւիտեան կը մնայ,
Ու անոր սրտին դիտաւորութիւնները՝ ազգէ մինչև
աղդ:
- 12 Երանի՞ այն ազգին՝ որուն Աստուածը Տէրն է,
Ու այն ժողովարդին՝ զօք իրեն ժառանգութեան հա-
մար ընտրեց:
- 13 Տէրը երկինքէն կը նոյի,
Բոլոր մարդոց որդիները կը տեսնէ:
- 14 Իր բնակութեանը տեղէն
Աշխարհի բոլոր բնակիչները կը գիտէ:
15 Անսնց սիրտերը հաւասարապէս ինք ստեղծեց,
Անսնց բոլոր բրտները կիմոնայ:
- 16 Թագաւոր մը զօրքի շատութիւնով չազատիր.
Ու ու զօրաւոր մարդ մը ուժի շատութիւնով կը
փրկուի:
- 17 Զին ազատութեան համար պարագ բան է,
Ու իր ուժին շատութիւնովը չկրնար ազատել:

*կամ, որպէս թէ տիկի մը մէջ

- 18 ԱՀա Տէրոջը աշքը իրմէ վախցողներուն
Ու իր սղորմութեամը յուսացողներուն վրայ է,
19 Անսնց անձը մահաւոնէ փրկելու
Եւ սազի ժամանակ զանոնք տապրեցնելու համար:
20 Մեր անձը Տէրոջը կը սպասէ.
Մեր օգնութիւնը ու մեր վահանը անիկա է:
21 Վասն զի մեր սիրտերը անով կ'սւրախանան,
Քանզի անոր սուրբ անուանը յուսացանք:
22 Ով Տէր, քու սղորմութիւնդ մեր վրայ ըլլայ,
Խնչպէս քեզի կը յուսանք:

ՍԱՂՄՈՍ 1.9.

Ս-Ն- Դաւթի, այն ատեն որ Աբիմելէքի առջև յիմար ձեւացաւ,
ան ալ դուրս ըրաւ զանիկա որ գնացի

- 1 Ա- Ամեն ժամանակ Տէրը պիտի դովեմ.
Անոր գովութիւնը միշտ իմ բերանս պիտի ըլլայ:
2 Իմ անձս Տէրոջմավ պիտի պարծի.
Խոնարհները պիտի լսեն և ուրախ ըլլան:
3 Խնձի հետ Տէրը մեծցուցէք,
Ու մէկսել բորձրացնենք անոր անունը:
4 Տէրը ինչքեցի, ու ինձի պատասխան տոււաւ,
Եւ իմ ամէն երկիւղներէս զիս փրկեց:
5 Անոր նայեցան ու լցու առին,
Եւ անսնց երեսները չամչան:
6 Այս աղքատը աղաղակեց, ու Տէրը լսեց անոր,
Եւ զոնիկու իր բոլոր նեղութիւններէն փրկեց:

*Այսէնք, Անքուսի, առս աթագ, իս. 10, 45..

- 7 Տէրոջը հրեշտակը իր բանակը անկէ վախցողներուն
չորս կողմէն կը գնէ,
Ու զաննկէ կ'աղստէ:
8 Ճաշտիկեցէք ու տեսէք որ Տէրը բարի է.
Երանի՞ այն մարդուն որ անոր կը յուսայ,
9 Տէրոջը վախցէք, ով անոր սուրբերը,
Վասն զի անկէ վախցողներուն բան մը պակաս չըլլայ:
10 Առիւծի կորիւնները չքաւորութիւն ու անօթութիւն
կը կրեն,
Սակայն Տէրը փնտառղներուն բարութիւն մը պակաս
պիտի չըլլայ:
11 Եկէք, որդիք, մտիկ ըրէք ինծի,
Տէրոջը վախը ձեզի սորվեցնեմ:
12 Ո՞վ է այն մարդը որ ապրիլ կ'ուզէ,
Ու լոր օրեր կը սիրէ՝ բարութիւն տեսնելու համար:
13 Քու լըզուդ չարութենէ պահէ,
Ու շրթունկներդ՝ նենգութիւն խօսելէ:
14 Զարութենէ հեռացիր ու բարութիւն ըրէ,
Խաղաղութիւն փնտաւ ու անոր ետեւէն գնաւ:
15 Տէրոջը աշքերը արդարներուն վրայ են,
Ու անոր ականջները՝ անսնց աղաղակին:
16 Տէրոջը երեսը չարագործներուն դէմ է,
Անսնց յիշատակը երկրէ բնաջինջ ընելու համար:
17 Արդարները կ'աղաղակին, ու Տէրը կը լսէ,
Ու իրենց բոլոր նեղութիւններէն կը փրկէ զանոնք:
18 Տէրը մօտ է անսնց՝ որոնց սիրտը կտրած է,
Ու հոգիով խնարհածները կ'ապկեցնէ:
19 Արդարներն նեղութիւնները շատ են,
Բայց Տէրը ամենէն կը փրկէ զանիկա:
20 Անոր բոլոր սոկորները կը պահէ,

- Անոնցմէ մէկը չկոտրուիր:
- 21 Զարութիւնը ամբարեշտը պիտի մեռցնէ,
Ու արդարը ստորջները պիտի գատառպարտուին:
- 22 Տէրը իր ծառաներուն անձը կը փրկէ,
Եւ իրեն յուսացողներէն բնաւ մէկը պիտի չդատա-
պարտուի:

ՍԱՂՄՈՍ ԼԵ

Ս-ՆԴԱ Դաւթի:

- 1 Ու Տէր, ինծի հետ հակառակողներուն հետ հա-
կառակէ.
- Ինծի հետ պատերազմողներուն հետ պատերազմէ,
- 2 Ասպարը ու վահնանը առ,
Ու ելիր ինծի օգնութիւն ընելու:
- 3 Նաև նիզակը քաշէ, ու ժամբան գոյցէ զիս հալածող-
ներուն դէմ.
- Ըսէ անձիս թէ Քու փրկութիւնդ ես եմ:
- 4 Իմ անձս ֆնտուղները ամշնան ու խսյտառակ ըլլան.
Ես դասնան ու ամշնան
- Անոնք որ ինծի համար չարութիւն կը խորհին:
- 5 Հոգին առջև եղած մղեղին պէս ըլլան անոնք,
Եւ Տէրոյը հրեշտակը փախցնէ շանոնք:
- 6 Անոնց ճամբան խաւար ու սկրդեցնող ըլլայ,
Եւ Տէրոյը հրեշտակը հալածէ զմոնոք.
- 7 Վասն զի զսւր տեղը իրենց սրոգայթը փոսի մէջ ինծի
համար ծածկեցին,
- Ու զսւր տեղը հսկ փորեցին անձիս համար:
- 8 Թող անոր վրայ յանկարծ աւելում՝ դոյ,
Եւ իր ծածկած որսգայթը զինք բռնէ,

- Նոյն աւերման մէջ կինոյ:
- 9 Սակայն իմ անձս Տէրուղմավ պիտի ցնծայ:
Անոր փրկութիւնավ ուրախ պիտի ըլլայ:
- 10 Իմ բոլոր ոսկորները պիտի ըսեն,
Տէր, ո՞վ քեզի նման է,
Որ աղքատը կ'ազմատես անկէ որ կը զօրանայ անոր
վրայ:
- Ու աղքատը և տնանկը՝ իր յափշտակողէն:
- 11 Ուուտ վկաններ եւան,
Զգիացածներս կը հարցնէին ինծի:
- 12 Աղէկութեան փոխարէն ինծի գէշութիւն ըլլին՝
Կողապտելով իմ անձս:
- 13 Բայց ես անոնց հիւանդութեան ատեն քուրձ կը
հագնէի,
Իմ անձս ծոմով կը չարչարէի,
Ու իմ աղօթքո իմ ծոցս *պիտի դառնայ՝:
- 14 Ինչպէս իր ընկերիս կամ եղբօրս հետ՝ այսուո ու
անոնց հետ կը վարուէի,
Իր մօրը համար սուր ունեցողի մը պէս տրտմութեամբ
կը ցածնայի:
- 15 Բայց անոնք իմ կաղըւթեանս ատեն ինդացին ու
ժողվուեցան.
- Զարնողները իմ վրաս ժողվուեցան, ու ես բառ իւ չէի
դիտեր.
- Կը Ճեղքէին զիս ու չէին դադարեր.
- 16 Խնձորքի կեղծաւոր խեղկառակներուն հետ
Ակռաներնին իմ վրաս կը կը ճառէին:
- 17 Ու Տէր, մինչեւ ե՞րբ պիտի նոյիս,

*կայ, կը դառնար

- Աղասեկ իմ՝ անձս անոնց աւերտումներէն,
իմ՝ *կեանքո՝ առիւծի կորիւններէն:
- 18 Մեծ ժողովքի մէջ քեզ պիտի գովեմ,
Շատ ժողովուրդի մէջ քեզ պիտի օրչնեմ:
- 19 Զուր տեղը ինծի թշնամի եղողները թող իմ վրաս
շմնդան,
- Առանց պատճառի զիս ատողները աչքով նշտն թող
չտան:
- 20 Վասն զի խաղաղութիւն չեն խօսիր,
Հասպա երկիր մէջ հանդարտներուն գէմ նենգութիւն
կը խորհին,
- 21 Ու իրենց բերանը ինծի գէմ կը լսյնցնեն՝ լսելով,
Վա՞շ, վա՞շ, մեր աչքերը տեսան:
- 22 Ով Տէր, դուն տեսար, լուռ մի կենար.
Ով Տէր, ինձմէ մի հեռանար:
- 23 Ավթնցիր, ով իմ Աստուածս ու Տէրս,
Ու իմ գատաստանիս ու գատիս ելիր:
- 24 Քու արդարութեանդ համեմատ իրաւունք ըրէ ինծի,
ով իմ Տէր Աստուածս,
Եւ իմ վրաս թող շմնդան.
- 25 Իրենց սրախն մէջ թող չսկեն թէ Ահամերկամքը եղաւ,
Ու թող չըսեն թէ Կլեցինք զանիկա:
- 26 Թուղ ամշնան ու մէկտեղ խայտառակ ըլան
Անոնք որ իմ չարիքիս վրայ կը խնդան.
Իմ վրաս հպարտացողները
Ամօթ ու խայտառակութիւն հազնին:
- 27 Թուղ ցնձան և ուրախանան
Անոնք որ իմ արդարութիւնս կ'սւղեն,

- Ու միշտ թող ըսեն թէ Աստուած մեծանայ,
Որ իր ծառային խաղաղութիւնը կ'ուզէ:
- 28 Ու իմ լեզուս քու արդարութիւնդ պիտի խօսի,
Ու ամէն օր քու գովութիւնդ:
- ### ՍԱՂՄՈՍ 1.2
- Գլխաւոր երաժշտին. Սուլու Դաւթի, Տէրովը ծառային:
- 1 Անմիարշտին չարութեանը վրայով սրտիս մէջի
խօսքը այս է.
- Աստուածոյ վախը չկայ անոր աչքերուն առջեւ:
- 2 Վասն զի ինքզինք կը լսդրաքրթէ իր աչքերուն առջեւ՝
իր անօրէնութեանը գտնուելուն ու ատելի ըլլալուն
վրայով:
- 3 Անոր բերնին խօսքերը անօրէնութիւն ու նենգու-
թիւն են.
- Բարին ընելու համար իմաստուն ըլլալը մէկդի ձգեց:
- 4 Իր անկողինին մէջ անօրէնութիւն կը մտածէ,
Ու կը կենայ այնպիսի համեստ մէջ որ աղէկ չէ,
Եւ չարէն չզգաւիր:
- 5 Ով Տէր, քու ողբրմութիւնդ մինչև երկինք և հասնէ,
Ու քու Ճշմարտութիւնդ՝ մինչև ամպերը:
- 6 Քու արդարութիւնդ հզօր լեռներու պէս է,
Քու իրաւունքդ մեծ անդունդ մըն է,
Մարդիկը ու անսասունները դուն կ'ասպրեցնես, ով
Տէր:
- 7 Ով Աստուած, ինչ գերազանց է քու գմտութիւնդ,
Որ մարդոց սրդիները քու թեւերուդ հովանաւորու-
թեանը կ'ապաւինին:
- 8 Անոնք քու տանիդ պարարտութենէն պիտի կշտանան,

- Ու քու հաճութիւններուդ գետէն պիտի խմցնես
անննց:
- 9 Վասն զի կեանքի աղբեւը քու քովդ է.
Քու լրտաղդ լցո պիտի տեւնենք:
- 10 Քու գթութիւնդ քեզ ձանցսղներուն շարունակէ,
Ու քու արդարութիւնդ՝ սրտաղդ ուղիղներուն:
- 11 Ամբարտաւանութեան սոտքը թող իմ վրաս չդայ,
Ու չարերուն ձեռքը զիս չշարժէ:
- 2 Հոն ինկան անօրէնութիւն գործողները.
Գետինը զարնուեցան ու չկրցան վեր ելլեւ:

ՍԱՂՄՈՍ ԱՅ

Սուրբու Դաւթի:

- 1 Զարերուն համար մի նեղանար,
Անօրէնութիւն գործողներուն մի նոխանձիր.
- 2 Վասն զի անննք խոտի պէս շուտով պիտի կտրուին,
Ու կանանչ խոտի պէս պիտի չորնան:
- 3 Տէրոջը յուսս ու բարութիւն ըրէ,
Երկրին վրայ բնակէ ու ծշմարտութեան մէջ ա-
րածուէ,
- 4 Ու Տէրոջնով ուրախացիր.
Եւ անկիս կու տայ քեզի քու սրափդ ինդրուածք-
ները:
- 5 Տէրոջը յանձնէ քու ճամբարդ,
Ու անոր յուսս, և անիկա պիտի կատարէ,
- 6 Ու դուրս պիտի հանէ քու արդարութիւնդ լցոն
պէս,
- Ու քու իրաւոնքդ կէսօրուան պէս:
- 7 Տէրոջը համբերէ ու անոր սպասէ,

- Եւ մի նեղանար իր ճամբար յաջողութեամի գացո-
ղին համար:
- Ու խաբէութիւն ընող մարդուն համար:
- 8 Դադարէ բարկութենէ, ու սրգողիլ վերջ ըրէ
Մի նեղանար, որ չարութիւն ընեւ:
- 9 Վասն զի չարագործները պիտի կտրաւին,
Սակայն Տէրոջը համբերողները երկիրը պիտի ժա-
ռանգեն:
- 10 Վասն զի քեզ ժամնակէ ետեւ ամբարիշտը պիտի
չըլլոյ,
- Եւ անոր անդը պիտի վինտուես, ու ինք պիտի չգտնուի:
- 11 Սակայն Տէրոջը պիտի ժառանգեն երկիրը,
Ու խաղաղութեան առաւտութիւնովը ուրախ պիտի
ըլլան:
- 12 Մեղաւորը արդարին գէմ չար կը խորհի,
Ու անոր վրայ ակռաները կը կրծաէ:
- 13 Տէրը ծաղը պիտի ընէ զոնիկա,
Վասն զի անոր օրը հանելու վրայ կը տեսնէ:
- 14 Մեղաւորները թուր քաշեցին,
Ու աղեղնին լարեցին՝
Աղքատը ու անանկը վար ձգելու համար,
*Շիտակ ճամբու մէջ քալողները սպաննելու համար:
- 15 Աննց թուրը իրենց սիրաք պիտի մտնէ,
Ու աննց աղեղները պիտի կտրափին:
- 16 Արդարին քիչ բանը
Հատ ամբարիշտներու աւատ ստացուածքէն աղէկ է:
17 Վասն զի ամբարիշտներուն բազուկները պիտի կոտ-
րուին,

*Եթէ ձամբով շիտակ եղողները

- Բայց արդարներուն *ապաւէնը Տէրն:
- 18 Արդարներուն օրերը գիտէ Տէրը,
Եւ անոնց ժառանգութիւնը յաւիտենական պիտի
ըլլայ.
- 19 Փորձանքի ժամանակ պիտի չամչնան,
Ու սովի օրերը պիտի կշտանան:
- 20 Բայց ամբարիշտները պիտի կորսուին,
Ու Տէրոջը թշնամիները դառնուկներու ճարպին՝
պէս պիտի սպառին,
Մուխի պէս պիտի սպառին:
- 21 Ամբարիշտը փոխ կ'առնէ ու չվճարեր,
Սակայն արդարը կ'ողորմի ու կու տայ:
- 22 Վասն զի անոր օրչնածները պիտի ժառանգեն եր-
կերը,
Բայց անկէ անկիծուածները պիտի կորսուին:
- 23 Բարեւ մարդուն քայլերը Տէրոջմէ կը հաստատուին,
Ու Անիկա անոր ճամբուն կը հառնի:
- 24 Թէկ կյանոյ, պիտի չկործանի.
Վասն զի Տէրը անոր ձեռքը կը բռնէ:
- 25 Տղայ էի ու ծերացոյ,
Բայց արդարը անտես եղած չտեսայ,
Կամ անոր քաւակը հաց մուրացոյ:
- 26 Ամէն օր կ'ողորմի ու փոխ կու տայ.
Եւ անոր սերունդը օրչնուած է:
- 27 Զարութենէ ետ կեցիր ու բարութիւն ըրէ,
Եւ յաւիտեան պիտի մնաս.
- 28 Վասն զի Տէրը կը սիրէ իրաւունքը,

*Եբք. նեցուկը

†Կամ, պարարտ արօտի

- Եւ իր սուրբերը երեսէ չձգեր.
- Յաւիտեան կը պահուին անոնք.
- Բայց ամբարիշտներուն սերունդը պիտի կորսուի:
- 29 Արդարները պիտի ժառանգեն երկիրը,
Ու յաւիտեան անոր վրայ պիտի բնակին:
- 30 Արդարին բերանը իմաստութիւն կը խօսի,
Ու անոր լեզուն իրաւունք կը զրուցէ:
- 31 Իր Աստուծոյն օրէնքը իր սրախն մէջ է,
Եւ անոր քայլերը պիտի չսահին:
- 32 Մեղաւորը արդարը կը դիտէ,
Եւ զանիկա մերացնելու ետեւէ կ'իմասյ:
- 33 Տէրը անոր ձեռքքը պիտի չձգէ զանիկա,
Եւ անոր դատաստանը տեսնուած ատեն պիտի չդա-
տապարտէ զանիկա:
- 34 Տէրոջը համբերէ ու անոր ճամբան պահէ,
Եւ անիկա քեզ կը բարձրացնէ սրպէս զի երկերը ժա-
ռանդես.
- Ամբարիշտներուն սատակումը պիտի տեսնես:
- 35 Ամբարիշտը զօրացած տեսայ,
Ու իր տեղը կեցող կանանչ ծառի մը պէս տարած-
ուած.
- 36 Բայց ան անցաւ, ու ահա չկար.
Եւ զանիկա փնտուեցի. բայց չդտնուեցաւ:
- 37 Արդարը նկատէ և ուղիղին նայէ.
Վասն զի խաղաղարար մորդը բարէ վախճան պիտի
ունենայ:
- 38 Իսկ անօրէնները մէկտեղ պիտի կորսուին
Ամբարիշտներուն վախճանը կորսուաս պիտի ըլլայ:
- 39 Բայց արդարներուն փրկութիւնը Տէրոջմէն է,
Նեցութեան ժամանակ ինք անոնց ապաւէնն է:

- 40 Ու Տէրը պիտի օգնէ անոնց և պիտի ազատէ զանոնք.
Ամբարիշտներէն պիտի ազատէ,
Ու պիտի փրկէ զանոնք, վասն զի անոր կը յուստան.

ՍԱՂՄՈՍ ԼԲ

Սաղմոս Դաւթի. յիշատակի համար:

- 1 Ոլ Տէր, քու որտմտութիւնովդ զիս մի յանդի-
մաներ,
- 2 Ու բարկութիւնովդ զիս մի խրստեր:
- 3 Վասն զի քու նետերդ իմ՝ ներսիդիս մխուեցան,
Եւ քու ձեռքդ իմ՝ վրաս կ'իջնէ:
- 4 Իմ՝ մարմիս մէջ առողջութիւն չկայ քու բարկու-
թեանդ համար,
- 5 Ու ոսկորներուս մէջ հանգստութիւն չկայ իմ՝ մեղ-
քիս համար:
- 6 Վասն զի անօրէնութիւններս գլխէս վեր բարձրացան
Մանր բեռի պէս *իմ՝ վրաս՝ ծանրացած են:
- 7 Վէլքերս հոտեցան ու փաեցան
Իմ՝ յիմարութեանս պատճառաւ:
- 8 Նուաստացայ ու խիստ ցածցայ.
Ամէն օր արտում կը պարտիմ.
- 9 Վասն զի աղքներս ջրմութիւնով լեցուեցան,
Ու մարմիս մէջ առողջութիւն չկայ:
- 10 Տէր, իմ՝ ամէն բաղձանքս քու առջեւդ է,
Ու իմ՝ հեծութիւնս քեզմէ չծածկուեցաւ:

*ԵՔ. ԻՆՃԱՔ

- 10 Անդաս կը բարձրիէ, ոյժս զիս թող տուաւ,
Ու իմ՝ աչքերուս լոյսը՝ ոյն ալ ինձի հետ չէ:
- 11 Ամբականներս ու ընկերներս իմ՝ չարչարանքէս հեռաւ
կը կենան,
Աղդականներս ալ հեռաւ կը կենան.
- 12 Ու անձս փնտոսղները ինձի որոգայթ կը լարեն,
Ու ինձի չսրիք ու զողները անօրէնութիւն կը խօսին,
Եւ ամէն օր նենդութիւն կը մտածեն:
- 13 Ասկայն ես խուլի պէս չեմ՝ լսեր,
Ու բերանը չմացող համին մը պէս եմ:
- 14 Եւ ես այնպէս մտրդու մը պէս եմ՝ որ չսեր,
Ու հակառակ խօսք չկայ իր բերանը:
- 15 Վասն զի, ոլ Տէր, ես քեզի կը յուսամ.
Դուն պիտի պատասխանես, ով իմ՝ Տէր Աստուածաւ:
- 16 Վասն զի ըսի, Թողղ շմանդան իմ՝ վրաս.
Ութիս սահած ժամանակը ինձի դէմ պէրեն+ կը մեծ-
ցրնեն:
- 17 Վասն զի ես կաղ ըլլալու պատրաստ եմ,
Ու իմ՝ ցաւս ամէն առեն առջեւս է:
- 18 Վասն զի անօրէնութիւնս պիտի պատմեմ,
Ու մեղքիս համար հոգ պիտի ընեմ:
- 19 Բոյց թշնամիներս ողջ են, ուժովցան.
Զիս զուր տեղը առողջները շատցան.
- 20 Ու աղէկութեան փոխարէն գէշութիւն ընողները
ինձի դէմ կը կենան, վասն զի ես աղէկութեան
ետեւէ կ'երթամ:
- 21 Զիս մի թաղուր, ոլ Տէր,
Ոլ իմ՝ Աստուածաւ, ինձմէ մի հեռանար:
- 22 Ինձի օղնութիւն ընելու արտորցիր,
Ոլ Տէր, իմ՝ պիտիութիւնս:

ՍԱՂՄՈՍ ԼԹ

Գլխաւոր երաժշտին իդիթունի. Սաղմոս Դաւթի:

- 1 **Ը**սի թէ ձտովաներուս զգուշութիւն ընեմ,
Որպէս զի լեզուովս մեզք չգործեմ.
Բերանս սանձով պահեմ՝
Ամբարիշտին իմ՝ առջեւո եղած ատենը:
- 2 Մունջ եղայ լուսիթիւնով.
Աղէկութեան վրայով ու լռեցի,
Ու ցաւս շարժեցաւ:
- 3 Սիրոս բոլըսքեցաւ ներսիդիս,
*Զերմութեանս մէջ կրակ վառեցաւ.
Այս որեւ լեզուովս խօսեցայ:
- 4 Ցուցուր ինձի, ով Տէր, իմ վերջա,
Եւ օրերուս չափը ո՞րչափ է,
Որպէս զի գիտանամ՝ թէ ի՞նչպէս անցաւոր եմ:
- 5 Ա.Հա իմ օրերս թիզերու չափ դրիր,
Ու իմ կեսնկը ոչնչի պէս է քու առջեւդ.
Իրաւ ամէն մարտ նիւ հասաստուած ըլլոյ,
Բայց բոլըսքին ունայնաւթիւն է: (Սէլաւ)
- 6 Արդարե մարդը ատուերի մը պէս կը պարտի,
Արդարե փուռք տեղը անհանդիսո կ'ըլլաւ.
Կը գեղէ բայց չգիտեր թէ ո՛վ պիտի առնէ գանոնք:
- 7 Ու հիմա ի՞նչ լանի սպասեմ, ով Տէր.
Իմ՝ յշյա քեզի է.
- 8 Փրկէ զիս իմ բոլըր յանցանքներէս,

*Կոմ, Մտածութեանս

- 9 Զունջ եղայ ու բերանս չմացի,
Վասն զի դուն ըրիր:
- 10 Քու հարուածդդ հեռացաւը ինծմէ.
Զեռքիդ զարնութելովլ ես կորսուեցայ:
- 11 Անօրէնութեան համար յանդիմանսութիւններով կը
խրատես մարդը,
Ցեցի մը պէս կը հալեցնես անոր ցանկալի բաները.
Իրաւ ամէն մարդ ունայնաւթիւն է: (Սէլաւ)
- 12 Ով Տէր, լսէ իմ աղօթքս, ու ականջ դիր աղաղակիս.
Արցունքներուս մի լուեր.
Վասն զի քու առջեւդ պանդուխտ մին եմ ես,
Հիւր մը՝ իմ բոլըր նախնկներուս պէս:
- 13 Թոյլուուութիւն ըսէ ինծի որ զուարթանամ,
Գանի որ չեմ գացեր այս որեւ որ ալ պիտի չգտնուիմ:

ՍԱՂՄՈՍ Խ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի:

- 1 **Ս**պասելով սպասեցի Տէրոջը,
Ու ծուեցաւ ինձի ու լսեց իմ աղաղակս.
- 2 Եւ զիս կորսուեան փոսէն, աղմալից կաւէն, հանեց,
Ու ոսքերս վէմի վրայ ամուրցուց ու քալուածքս
հաստատեց.
- 3 Ու բերանս դրաւ նոր երգ մը,
Մեր Աստուծոյն գովութիւնը:
Շատերը պիտի տեսնեն ու պիտի վախնան,
Ու Տէրոջը պիտի յուտան:
- 4 Երանի՛ այն մարդուն՝ որ իր յշյա Տէրոջը վրայ կը գնէ,
Ու չնայիր հպարտներուն ու սպասութեան գարձողներուն:

- 5 Շատ են սրանչելիքներդ զորոնք գուն ըրեր ես,
Ով իմ Տէր Աստուածա,
Ու մեր զրայ աւնեցած խորհուրդներդ
Մէ՛կը չկրնար կարգաւ պատմել քու առջեւդ.
Պիտի պատմէի ու խօսէի,
Բայց համբանքէն աւելի շատ են:
6 Զոհի ու ընծայի չհաւնեցար,
Հաղող իմ ականջներս բացիր.
Ողջակէզ ու մեղքի պատարագ չպահանջեցիր:
7 Այն ժամանակ ըստ թէ Աչա կու դամ ես.
Գիրքի տամնի մէջ ինձի համոր դրսւած է,
8 Ով իմ Աստուածա, քու կամքդ կատարելու փափա-
քեցայ,
Ու քու օրէնքդ իմ ներսիդիս է:
9 Արդարութիւն քարոզեցի շատուար ժողովքի մէջ.
Աչա շրթունքներս չարգիլեցի.
Ով Տէր, դուն գիտես:
10 Արտիս մէջ գաղտուկ չպահեցի քու արդարութիւնդ,
Հաւատարմութիւնդ ու փրկութիւնդ պատմեցի.
Քու ողորմութիւնդ ու ճշմարտութիւնդ շատուար
ժողովքէն չծած կեցի:
11 Դուն, ով Տէր, քու զթութիւնդ ետ մի պահեր ինձմէ.
Քու ողորմութիւնդ ու ճշմարտութիւնդ ամէն ժա-
մանակ պաշտպանեն զիս:
12 Վասն զի անթիւ չարիքներ զիս պատեցին.
Անօրէնսւթիւններս ինձի հասան, ու ես չեմ կրնար
անսնել.
Գլխուս մազէն շատ են, ու սիրսս զիս թողուց:
13 Ով Տէր, զիս փրկելու կամք ըստ.
Ով Տէր, ինձի օգնելու արտորցիր:

- 14 Թող ամչնան ու մէկտեղ խոյսասաւկ ըլլան
իմ անձս գնտուողները՝ զանիկա կորսնցնելու համար.
Ետ դառնան ու ամօթով ըլլան
ինձի չարութիւն ուզողները
15 Թող *ամչնալով կործանին
Աններ որ ինձի Վա՛շ վա՛շ կ'ըսեն
16 Ամէն քեզ գնտուողները
Քեզլով թող ցնծան և ուրախանան.
Քու փրկութիւնդ սիրողները
Ամէն ժամանակ թող ըսեն, Տէրը մեծանայ:
17 Բայց ես աղքատ ու տնանկ եմ,
Աւայն Տէրը հոդ կը տանի ինձի.
Իմ օգնականս ու փրկիչ գուն ես,
Ով իմ Աստուածա, մի ուշանար:

ՍԱՂՄՈՍ ԽԱ

Գլխաւոր երաժշտին. Սաղման Դաւթի:

- 1 Երանի՛ անոր որ աղքատին հոդ կը տանի.
Նեղութեան օրը Տէրը պիտի փրկէ զանիկա:
2 Տէրը պիտի պահէ ու ապրեցնէ զանիկա,
Երանելի պիտի ըլլայ երկրի վրայ.
Ու թշնամիներուն կամքին պիտի չմատնես զանիկա:
3 Տէրը անորդ պիտի տայ տկարութեան անկողինին մէջ.
Անոր ամէն անկողինը պիտի դարձնես անոր հիւան-
դութեան ատենը:
4 Ես ըսի, Ով Տէր, ողըրմէ ինձի,
Բժշկէ իմ անձս, զան զի ես քեզի դէմ մեղանչեցի:
5 Թշնամիներս գէշ կը խօսին իմ վրայովս.

*Կամ, իրենց ամօթին պատճուաւ.

- Հաւելվէ թէ Ե՞րբ պիտի մեռնի ու անունը կորսուի
 6 Եթէ Գէւ Խնի գալու ըլլայ տեսնելու համար, ունայ-
 նութիւն կը խօսի.
 Իր սիրալ անօրէնսւթիւն կը ժողվէ իրեն համար,
 Որուե՞ս զի դուրս ելլելով զրուցէ:
 7 Խնծի գէմ մէկսեղ կը փափառն ամէն զիս ատողները,
 Խմ վրայովս չարութիւն կը խորհին.
 8 Կ'ըսէն թէ Զարութեան բան մը անոր վրայ թափեցաւ.
 Ու հիմ որ պառկած է, ալ պիտի չելլէ:
 9 Մինչեւ անդամը իմ բարեկամն՝ որու ապաւիներ էի,
 Խմ հացաւ աւասզը, ինծի գէմ կունկ վերցուց:
 10 Սակայն, ով Տէր, դուն ողորմէ ինծի ու կանդնե.
 ցուր զիս,
 Ու ես փոխարէնը առամ անոնց:
 11 Ասկէ գիտեմ որ ինծի կը հաւնիս,
 Որ թշնամիս իմ վրաս չպարծենար,
 12 Եւ զիս իմ անմեղութեան մէջ կը պահէս,
 Ու յաւիտեան զիս քու առջեւդ կը կոյնեցնես
 13 Օրչնեալ ըլլայ Խարցյէլի Տէր Աստուածը
 Յաւիտեան յաւիտենից Ամէն ու ամէն,

ՍԱՂՄՈՍ ԽԲ

- Դիմաւոր երաժշախն Կորևի որդիներուն երգը:
 1 Թէ Նչպէս եղջերուն ջուրի վտակներուն կը փափաքի,
 Այնպէս ալ իմ անձս քեզի կը փափաքի, ով Աստ-
 ուածն
 2 Հոգիս ծարաւի է Աստուածոյ, կենդանի Աստուածոյն.
 Ե՞րբ պիտի գամ ու երեւնամ Աստուածոյ առջեւ,
 3 Ցորեկ ու գիշեր արցունքներս ինծի հաց եղան.

- Որովհէտեւ ամէն օր ինծի կ'ըսեն թէ Ո՞ւր է քու
 Աստուածդ:
- 4 Այս բաները միաքա կը բերեմ,
 Ու հոգիս կը թափեմ իմ ներսիդիս,
 Փափաւելվէ որ բազմութեան հետ երթամ,
 Անոնց հետ հանդէսով Աստուածոյ տունը մաներմ
 Ուրախութեան ու օրհնութեան ձայնով,
 Տօնախմիով բազմութեան հետ:
 5 Խնչո՞ւ կը ցածնաս, ով իմ հոգիս,
 Եւ բնա՞ս իմ ներսիդիս անհանգիստ ես,
 Աստուածոյ յուսա. վասն զի անդամ մըն ալ զանիկա
 պիտի գովեմ,
 Իր երեսին փրկութեանը համար:
 6 Ով իմ Աստուածս, հոգիս իմ ներսիդիս կը ցածնայ.
 Անոր համար քեզ կը յիշեմ Յորդանանու երկրէն
 Ու Հերմաններէն ու *Փոքր լեռնէն:
 7 Անդունդը անդունդին կը կանչէ քու յորձանքներուդ
 ձայնովը.
 Քու ամէն կոհակներդ ու ալիքներդ իմ վրայէս անցան,
 8 Յորդեկը Տէրը պիտի պատուիրէ իր ողորմութեանը,
 Ու գիշերը իր երգը ինծի հետ պիտի ըլլայ,
 Ու աղօթքս իմ կեանքիս Աստուածոյն ըլլայ
 9 Պիտի ըսեմ Աստուածոյ, իմ Վէմիս,
 Խնչո՞ւ զիս մոռցեր ես,
 Խնչո՞ւ արտում պտղակիմ
 Թշնամիին հարստահարութենէն:
 10 Ուկաններս կարաելու չոփ թշնամիներս զիս կը նա-
 խատեն՝

- Ամէն օր ինծի լսելով թէ Ուր է քու Աստուածդ։
 11 Խնչու կը ցածնաս, ով իմ հոգիս,
 Եւ ինչու իմ ներսիդիս անչանգիստ ես
 Աստուձոյ յուսա, վասն զի անդամ մըն ալ զանիկա
 պիտի գովեմ։
 Սն է իմ երեսի փրկութիւնը ու իմ Աստուածաւ։

ՍԱՂՄՈՍ ԽԳ.

- 1 Ինծի դատաստան ըրէ, ով Աստուած, ու իրաւունքս պաշտպանէ
 Սուրբ չեղող ազգէն։
 Նենդաւոր ու անօրէն մարդէն զիս ազատէ,
 2 Փանզի գուն ես իմ ամրութէանս Աստուածը.
 Խնչու զիս կը մերժես,
 Խնչու արտում պարտիմ
 Թշնամիին հարատահարութենէն,
 3 Քու լցուգ ու ճշմարտութիւնդ զրկէ
 Անոնք առաջնորդեն ինծի, ու զիս հանեն
 Քու սուրբ լեռդ ու քու բնակարաններդ։
 4 Ու Աստուձոյ սեղանին քով պիտի երթամ,
 Իմ սուրախութեանս ու ցնծութեանս Աստուձոյն առջեւ.
 Ու քեզ քնարով պիտի գովեմ,
 Ով Աստուած, իմ Աստուածաւ
 5 Խնչու կը ցածնաս, ով իմ հոգիս,
 Եւ ինչու իմ ներսիդիս անչանգիստ ես
 Աստուձոյ յուսա, վասն զի անդամ մըն ալ զանիկա
 պիտի գովեմ։
 Սն է իմ երեսի փրկութիւնը ու իմ Աստուածաւ։

ՍԱՂՄՈՍ ԽԴ.

- Գլխաւոր երաժշտին, Կորիսի որդիներուն երգըւ
 1 Ով Աստուած, մեր ականջներովլ լսեցինք,
 Հոյրերնիս մեղի պատմեցին
 Այս գործը զա անսնց օրերը գործեցիր
 Առաջուան ժամանակը
 2 Գուն քու ձեռքովդ հեթանոսները քշեցիր,
 Ու զանոնք անկեցիր:
 Զարշարեցիր ժողովուրդները,
 Ու տարածեցիր զանոնք
 3 Քանզի ոչ թէ իրենց սրավլ ժառանգեցին երկիրը,
 Ու ոչ թէ իրենց բաղուկը զիրենք փրկեց,
 Հապա քու աջ ձեռքդ ու քու բաղուկդ և քու երեսիդ լցուը.
 Վան զի անսնց հածեցար:
 4 Գուն ինքդ ես իմ Թագաւորս, ով Աստուած։
 Հրաման տուր Յակորի փրկութիւններուն համար:
 5 Քեղմովլ թշնամիներնիս գետինը պիտի զարնենք.
 Մեր վրայ ելլոյները քու անունովդ ոտքի տակ պիտի առնենք:
 6 Վան զի աղեղիս չեմ յուսար,
 Ու թուրս զիս չկրնար աղստել.
 7 Հապա գուն մեղ կը փրկես մեր թշնամիներէն,
 Ու մեզ ասողները ամօթովլ կ'ընես
 8 Ամէն օր Աստուձով կը պարծենանք,
 Ու յաւիտեան քու անունդ պիտի գովենք: (Աէլու)

*Այսինքն, Հոյրերնիս

- 9 Ասկայն մեզ մերժեցիր ու խսյառառակ ըթիր,
Ու մեր զօրքերուն հետ չելար:
- 10 Թշնամիէն մեզ ետ գարձուցիր,
Ու մեզ ասողները ներ կողմագուցին իրենց համար:
- 11 Մեզ ոչխարի պէս ուստուելու տուիր,
Ու հեթանոսներուն մէջ մեզ ցրուեցիր.
- 12 Քու ժողովուրդդ ոչինչ դնավ ծախեցիր,
Ու չաւեցուցիր քու հարաբութիւնդ անոնց գիներավը:
- 13 Դրացիներնուս առջև մեզ խսյառառակ ըթիր,
Մեր բոլորափք եղանկերուն ծաղը ու կատակ:
- 14 Մեզ հեթանոսներուն մէջ առակ ըթիր,
Ու ժողովուրդներուն մէջ գլուխ երերջնելու պարհու:
- 15 Ամէն օր իմ նախատինքս առջեւս է,
Ու երեսիս ամօթք զիս կը ծածկէ:
- 16 Նախատողին ու հայշպաղին ձայնէն,
Թշնամիին ու վրէժինդրին երեսէն:
- 17 Այս ամէնը մեր վրայ եկաւ,
Սակայն մենք քեզ չմոռցանք և քու ուխտիդ սուտ
չելանք.
- 18 Այրտոենիս ետ չդարձան,
Ու քալուածքնիս քու ճամբայէդ դուրս չելան.
- 19 Թէպէս չսպաներուն եղած մեզ մեզ ճպմեցիր,
Ու մահուան ստուերալը մեր ծածկեցիր:
- 20 Եթէ մեր Աստուծոյն անունը մոռցեր ենք,
Կամ օտար աստուծոյ ձեռքելնիս երկնցուցեր ենք,
- 21 Միթէ Աստուած այս բանք պիտի չփնտուէ.
Որովհետև ինք սրտին գաղանիքները դիմէ:
- 22 Բայց ամէն օր քեզի համար կը սպաննուինք
Մորթուելու ոչխարի պէս կը սեպուինք:
- 23 Արթնցիր, ով Տէր, ինչը կը քնանաս:

- Ելիր, մի մերժեր եւ յաւիտեան:
24 Ինչը երեսդ կը ծածկես,
Մեր արտամութիւնը ու տառապանքը կը մունաս:
25 Վասն զի մեր անձը մինչեւ հողը ծռեցու,
Մեր փորը գետինը փակաւ:
26 Ելիր մեր օգնութեանը,
Ու ազատէ մեզ քու ողորմութեանդ համար:

ՍԱՂՄՈՍ ԽԵ

Գլխաւոր երաժշախն, Շօշանիմ վրայ. Կորիփ որդիներուն
քերթուածը. Երգ սիրոյ:

- 1 Իմ սրտէս բարի խօսք կը բղիի.
Նարադրածս թագաւորին համոր կը խօսիմ.
Իմ լեզուս արագագիր դպիրին գրչին պէս է:
2 Դուն մարդոց որդիներէն աւելի գեղեցիկ ես.
Քու շրթունքներուդ վրայ շնորհք թափուած է.
Անոր համար Աստուած քեզ օրհնեց յաւիտեան:
3 Ով Հզօր, թուրդ մէջքդ կապէ
Քու փառքովդ ու վայելչութիւնովդ:
4 Ու քու վայելչութիւնովդ յաջողուէ.
Ճշնարտութեան ու հեղութեան և արդարութեան
համար հեծիր.
Ու քու աջ ձեռքդ քեզի աշաւոր բաներ պիտի սոր-
վեցնէ:
5 Քու նետերդ սրուած են,
Ու թագաւորին թշնամիներուն սրտին մէջ ժուռ-դ ին.
Ժողովուրդները քու տակդ պիտի կյանան:
6 Ով Աստուած, քու աթոռդ յաւիտեանս յաւիտե-
նից է.

- Քու թագաւորութեանդ գաւազանը ուղղութեան
գաւազան է.
- 7 Արդարութիւնը կը սիրես ու անօրէնութիւնը կ'ատեա-
Անոր համար, ով Աստուած, քու Աստուածդ.
Ուրախութեան իւղով քեզ օծեց քու ընկերներէն
աւելի:
- 8 Քու բոլոր հանդերձներդ զմուռս ու հալուէ և կա-
սիա է հադին.
- Փղսկրէ պալատներէն Կանուադարաններուն լսրերը
քեզ ուրախացուցին:
- 9 Թագաւորներուն աղջիկները քու պատուականներուդ
մէջ են.
- Թագուհին քու աջ կողմդ կը կանդնի Ոփերի սակիսկ
լուրդացուած:
- 10 Ով աղջիկ, լսէ ու տես, և քու ականջդ ծռէ.
Մոռցիր քու ժողովարդդ ու քու հօրդ առունը
- 11 Այս ատեն թագաւորը պիտի ցանկայ քու գեղեց-
կութեանդ,
Վասն զի ան է քու տէրդ, ու անոր երկրագութիւն
ըլլէ:
- 12 Եւ Տիւրսի աղջիկը ու ժողովարդին հարուսաները
Ընծայով պիտի ինդրէն քու երեսդ:
- 13 Թագաւորին աղջիկը լոլորովին փառաւոր է ներսը,
Ոսկի թելով հիւսուած է իր հանդերձը
- 14 Նկարակերպած հանդերձով պիտի բերուի թագաւո-
րին.
- Անոր ետեւէն եկող աղջիկ ընկերները քեզի պիտի
բերուին:

*կամ, ուրկէ

- 15 Ցնծութիւնով և ուրախութիւնով պիտի բերուին,
Թագաւորին պալատը պիտի մտնեն:
- 16 Քու հայրերուդ տեղը որդիներդ պիտի ըլլան,
Բուլոր երկրի մէջ իշխաններ պիտի ընես զանոնք:
- 17 Քու անունդ հաչակել պիտի առաջ ազգէ մինչեւ աղդ.
Անոր համար ժողովարդները քեզ պիտի գովեն յա-
ւիտեանս յաւիտենից:

ՍԱՂՄՈՍ ԽԶ

- Գլխաւոր երաժշտին, Կորիի որդիներուն երգը Ալամօթի վրայ:
- 1 Աստուած մեր ապաւէնն ու զօրութիւնն է.
Նեղութիւններու մէջ խիստ օդնական կը գտնուի,
2 Անոր համար պիտի չլավինանք, թէե երկրի փոխուի,
Ու լեռները ծովուն մէջտեղը ձգուին.
3 Թիւս անոր ջուրերը գուռան ու պղտորին,
Լեռները գողան անոր ուռենալովը (Աէլաւ)
4 Գետի վտակները պիտի ուրախացնեն Աստուածոյ քա-
ղաքը,
Բարձրելցին առըս ընակարանները:
5 Աստուած անոր մէջ է, անիկա պիտի չսասանի.
Աստուած անոր պիտի օգնէ առտուանց կանուխ.
6 Հեթանոնները կը խսովին, թագաւորութիւնները կը
շարժին.
Բարձր իր ձայնը կու ասյ, երկիր կը հալի:
7 Զօրաց Տէրը մեզի հետ է.
Ցակորի Աստուածը մեր ապաւէնն է: (Աէլաւ)
8 Եկէք ու տեսէք Տէրոջը գործերը,
Որ առերսումներ ըրաւ երկրի մէջ:
9 Պատերազմները կը գագարեցնէ մինչեւ երկրի ծոյրը.

- Աշեղը կը կոտրած ու նիզակը կը ջարդէ, կառքերը
կրակով կ'այրէ:
- 10 Հանդարտ կեցէք ու ճանչցէք որ ես եմ Աստուած.
Հեթանոսներուն մէջ պիտի բարձրանամ, երկրի վրայ
պիտի բարձրանամ:
- 11 Զօրաց Տէրը մեզի հետ է,
Յակորի Աստուածը մեզի ապաւէն է: (Սէլա:)

ՍԱՂՄՈՍ ԽԵ

Դիմաւոր երաժշտին. Կորիմի որդիներուն Սաղմոս:

- 1 Ծափ զարկէք, ամէն ժողովուրդներ,
Ցնծութեան ձայնով Աստուածոյ ազաղակեցէք:
- 2 Վասն զի Տէրը Բարձրեալ և Աչարկու է
Բոլոր երկրի վրայ մեծ Թագաւոր է:
- 3 Ժողովուրդները մեզի կը հնազանդեցնէ,
Ու ազգերը մեր ոսքերուն տակ:
- 4 Ընտրեց մեզի մեր ժառանգութիւնը,
Յակորի փառաւորութիւնը՝ զոր ինք սիրեց: (Սէլա:)
- 5 Աստուած ցնծութիւնով վեր ելաւ,
Տէրը՝ փաղի ձայնով:
- 6 Սաղմոս երգեցէք Աստուածոյ, սաղմոս երգեցէք.
Սաղմոս երգեցէք մեր Թագաւորին, սաղմոս երգեցէք.
- 7 Վասն զի բոլոր երկրի վրայ Թագաւոր Աստուած է.
Երդ երգեցէք անոր:
- 8 Աստուած ազգերուն վրայ կը թագաւորէ.
Աստուած կը նասի իր սուրբ աթոռին վրայ:
- 9 Ժողովուրդներուն իշխանները ժողովուեցան
Աքրահամբ Աստուածոյն ժողովուրդին հետ:

ՍԱՂՄՈՍ ԽԵ

Կորիմի որդիներուն երգը ու Սաղմոսը

- 1 Տէրը մեծ է ու խիստ օրհնեալ է
Մեր Աստուածոյն քաղաքին մէջ,
Խը սուրբ լեռանը վրայ:
- 2 Գեղեցիկ բարձրաւթիւնով,
Բոլոր երկրի ուրախութիւնը
Հիւսիսային կաղմերը եղաղ Աիօն լեռն է,
Մեծ Թագասաւորին քաղաքը:
- 3 Աստուած անոր պալատնեցուն մէջ
Ապաւէն գիտցուած է:
- 4 Վասն զի աչա թագասաւորները ժողվուեցան,
Ու մէկտեղ անցան:
- 5 Աննկը տեսածնուն պէս զարմացան.
Զարհուեցան ու շուտով փախան:
- 6 Հոն գողումը բռնեց զանոնիք,
Ու ցաւը՝ զաւակ ծնանողի ցուե պէտ:
- 7 Արեւելեան հովով
Թարսիսի նատերը կը խորտակես:
8 Ինչպէս լսեցինք, այնպէս ալ տեսանք
Զօրութեանց Տէրովը քաղաքին մէջ,
Մեր Աստուածոյն քաղաքին մէջ,
Աստուած զանիկա պիտի հաստատէ յաւիտեան:
(Սէլա:)
- 9 Ով Աստուած, քու ոզբութեանդ վրայ կը մտածենք

- Քու տաճարիդ մէջ:
 10 Քու գովութիւնդ, ով Աստուած,
 Քու անուանդ պէս մինչեւ երկրի ծայրերն է.
 Արդարութիւնով լեցուն է քու աջ ձեռքդ.
 11 Սիօն լեռը թող ուրախանայ,
 Ու Յուդսիի աղջիկները թ-ող ցնժան
 Քու գտասաւաներուդ համար,
 12 Սիօնի չորս կողմը պտըսեցէք,
 Ու անոր բոլորութքը շարուեցէք
 Ու աշտարակները համրեցէք.
 13 Ու շադրութեամբ դիտեցէք անոր պարիսպները.
 Անոր պալատները զննեցէք,
 Որպէս զի գալու ազգին պատմէք;
 14 Վասն զի այս Աստուածը մեր Աստուածն է յաւիտ
 եանս յաւիտենից.
 Անիկա պիտի առաջնորդէ մեզ մինչեւ ի մահ:

ՍԱՂՄՈՍ ԽԹ

Գլխաւոր երաժշախին. Կորիսի որդիներուն Սաղմոսը.

- 1 Լուեցէք սափկա, ով բոլոր ազգեր,
 Ականչ դրէք, աշխարհի բոլոր բնակիչներ,
 2 Ռամիկներ ու ազնուականներ,
 Հարուստներ ու աղքատներ մէկտեղ:
 3 Բներանս իմաստութիւն պիտի խօսի,
 Ու սրախ խորհուրդները հանձար:
 4 Խմ ակսնջս առտղի պիտի ծռեմ,
 Խրթնաբանութիւնս քննարով պիտի բանամը:
 5 Խնջու վախնամ չար օրերուն մէջ,

- Երբ գարանակալներուն անօրէնութիւնը չորս կողմն
 կը պատէ:
 6 Իրենց զօրութեանը յուսացողներուն
 Ու իրենց հարաստութեանը շատութիւնովը պարծող-
 ներուն
 7 Մէկը ընաւ չկրնար փրկել իր եզրայը,
 Ու անոր փրկանքը Աստուծոյ հատուցանել.
 8 (Քանզի առող է անոնց անձին փրկութեան գինը,
 Ու յաւիտեան պիտի գադարի.)
 9 Որպէս զի ալ ապրի յաւիտեան,
 Ու ապականութիւն չտեսնէ:
 10 Վասն զի կը տեսնէ մէկ իմաստունները կը մեռնին,
 Ցիմորը ու անխելքը մէկտեղ կը կորսուին,
 Ու իրենց ստացուածքները ուրիշներուն կը թողուն:
 11 Անոնց խորհուրդը այս ե նե իրենց տուները յաւիտ-
 եան ոի բէնա,
 Ու իրենց լնակարանները ազգէ մինչեւ ազգ-
 երկիրները իրենց անուններովը կը կոչեն:
 12 Բայց մարդը պատույ մէջ չմնար,
 Անստուններուն նման է ոքանէ կը կորսուին:
 13 Անոնց այս ճամբան իրենց յիմարութիւն է,
 Սակայն անոնց ետեւէն եկաղները անոնց խօսքին հա-
 ճութիւն պիտի տան (Աէւա):
 14 Անոնք ոչխարներու պէս գերեզմանը կը դրուին.
 Մահը պիտի հովուէ զանոնք,
 Եւ ուղեղները անոնց վրայ պիտի տիրեն առտուանց.
 Ու անոնց դէմքը գերեզմանը պիտի մաշեցնէ իրենց
 բնակարանէն:

- 15 Սակայն Աստուած գերեզմանին ձեռքէն պիտի փրկէ
իմ անձօ,
Վասն զի զիս պիտի ընդունի: (Սէլաւ)
- 16 Մի վախնար երբ մարդ մը հարստանայ,
Ու անոր տանը փառքք շատնայ.
- 17 Վասն զի մեռնելու տաենը ամենեւին բան մը իրեն
հետ պիտի չառնէ,
Ու իր փառքք իր ետեւէն պիտի չիջնէ:
- 18 Թէպէտև իր անձը օրհնեց իր կենդանութեան տաենք,
(Ու քեզ կը գովին երբ դուն քու անձիդ աղէկու-
թիւն կ'ընես.)
- 19 Սուսայն իր նախնիքներուն ազգին պիտի երթայ.
Մինչեւ յաւիտեան լոյս պիտի չտեսնեն:
- 20 Մարդը որ պատուզ մէջ է ու իմաստութիւն չունի:
Անսասուններուն կը նմանի որնած կը կորսուին:

ՍԱՂՄՈՍ Ծ

Սաղմոս Աստիքայտ

- 1 Ո Աստուածներուն Աստուածը, Տէրը, խօսեցաւ,
Ու երկիրը կանչեց արեւելքէն մինչեւ արեւմուտք:
2 Սիօնէ, գեղեցկութեան կատարելութենէն,
Աստուած փոյլեցաւ:
- 3 Մէր Աստուածը պիտի գայ ու պիտի չլուէ.
Անոր տռջն մաշող կրակ,
Ու բոլրտիքք սաստիկ փոթորիկ պիտի ըլլայ:
- 4 Երկիրքը պիտի կոնչէ վերէն,
Ու երկիրը իր ժողովուրդը դատելու համար:
5 Ինձի ժողովեցէք իմ սուրբերս,
Ու ինձի հետ զոհով ուխտ ընողները:

- 6 Ու երկինքները անոր արդարութիւնը պիտի պատմեն,
Վասն զի Աստուած ինք գտատաւոր է, (Սէլաւ)
- 7 Լու, ով իմ ժողովուրդս, ու խօսիմ:
Ով Խարսցէլ, ու քեզի վկայութիւն ընեմ,
Որ ես եմ Աստուած, քու Աստուածդ:
- 8 Ու թէ քու զոհներուդ համոր քեզ կը յանդիմոնեմ,
Ու քու ողջակէզներուդ համոր՝ որոնք միշտ իմ առ-
ջեւս են:
- 9 Քու տունէդ զուարսկ չեմ առներ,
Ու ու քու գոմերէդ նոխազներն
- 10 Վասն զի իմն են անտառին բոլը գաղանները,
Հազարաւոր լեռներուն անտառները:
- 11 Ես գիտեմ լեռներան բոլը թռչունները,
Ու գաշտի գազանները իմ քովս են:
- 12 Եթէ անօթենամ՝ քեզի պիտի չլուեմ:
Վասն զի աշխարհ ու անոր լիութիւնը իմն է:
- 13 Միթէ ես ցուլերու միս կ'ուտե՞մ,
Կամ նոխազներու արիւն կը խմէ՞մ:
- 14 Շնորհակալութիւն զոհէ Աստուծոյ:
Ու քու ուխտերդ կտառքէ Բարձրելցն.
- 15 Ու նեղութեան օրը ինձի կանչէ.
Ես քեզ պիտի աղատեմ, ու դուն զիս պիտի փառա-
ւորեաւ:
- 16 Սակայն Աստուած ամբարշտին կ'ըսէ,
Քեզի ի՞նչ որ դուն իմ օրէնքներս կը պատմես,
Ու իմ ուխտա բերանդ կ'առնեաւ:
- 17 Վասն զի դուն խրատը ատեցիր,
Ու իմ խօսքերս ետիդ ձգեցիր.

- 18 Գողը տեսնելով անոր հետ միաբանեցար,
Ու շնացողներուն հետ բաժին սնեցար,
19 Քու բերանդ չարութեան տուիր,
Ու քու լեզուգ նենդութիւն կը հնարէ,
20 Կը նսախ եղորդ դէմ կը խօսիս,
Մօրդ որդւայն դէմ՝ չարախօսութիւն կ'ընես
21 Այս բաները ըրբը ու ես լուեցի.
Կարծեցիր թէ ես բոլորին քեզի կը նմանիմ.
Բայց քեզ պիտի յանդիմանեմ,
Ու աչքերուդ առջեւ պիտի շարեմ + + + ըստծու:
22 Արդէ իմացեր ասիկա, ով գուք զլասուած մոռցողներ,
Զըլլայ որ հեղպատեմ, ու ազատալ մըն ալջտանուի
23 Շնորհակալութիւն մասուցանով զիս կը փառա-
ւորէ,
Ու իր ճամկուն զգուշացաղին
Պիտի ցաւցնեմ Աստուծոյ փրկութիւնը:

ՍԱՂՄՈԽ ԾԱ

Քիսաւոր երաժշախն. Սարման Դաւթի, անոր թերսարէի
քով մոնելն եռաքը, Նաթան մարգարէին անոր եկած ժամանակը:

- 1 Ողորմէ ինձի, ով Աստուծ, քու ողորմութեանդ
համեմատ,
Քու առաստ գթութեանդ համեմատ ջնջէ իմ յուն,
ցանքներու
2 Իմ անօրէնութենէս բոլորին զիս լուա,
Ու իմ մերքէս զիս սրբէ:
3 Վասն զի ես կը ճանչնամ իմ յանցաներս,
Ու իմ մերքս միշտ իմ առջեւս է:
4 Քեզի միայն քեզի դէմ մեղանչեցի,

- Եւ քու աչքերուդ առջեւ չարութիւն ըրի.
Որպէս զի արդար ըլլաս խօսքերուդ մէջ,
Ու անարատ ըլլաս դատասատանիդ մէջ:
5 Ահա ես անօրէնութիւնով ծնայ,
Ու իմ մայրս մեղքալ յղացաւ զիս
6 Ահա գուն ծշմարտութիւն կ'ուզես երիկամունք.
ներու մէջ.
Ու ծածուկ ու լու իմաստութիւն պիտի գիտցնես ինձի:
7 Զոպայի մշտիկով մաքրէ զիս, ու մաքսուր ըլլամ.
Զիս լուա, ու ձիւնէն աւելի ճերմակ ըլլամ:
8 Յնձութիւն և ուրախութիւն լսել տուր ինձի,
Թող յնձան ոյն ուկորները զսրոնք կոտրեցիր:
9 Իմ մերքերէս երեսոյ ծածկէ,
Ու բոլոր անօրէնութիւններս ջնջէ:
10 Ով Աստուծ, իմ մէջս մաքսուր սիրտ ստեղծէ,
Եւ իմ ներսիդիս ուզիլ հոգի նորոգէ:
11 Զիս երեսէդ մի ձգեր,
Ու քու Սուրբ Հոգիդ ինձմէ մի հաներ:
12 Քու փրկութեանդ յնձութիւնը ինձի ես դարձուր,
Ու կամաւոր հոգի մը թող հաստատէ զիս:
13 Ամբարիշշոներուն պիտի սորբեցնեմ քու ճամփա-
ներդ,
Ու մեզաւորները քեզի պիտի դառնան:
14 Ով Աստուծ, իմ փրկութեանս Աստուծը,
Փրկէ զիս արիւնչեղութենէ,
Լեզուս յնձութեամի պիտի խօսի քու արդարու-
թեանդ վրայով:
15 Ով Տէր, իմ շրթունքներս ըսց,

- Ու բերանս պիտի պատմէ քու գովութիւնդ։
 16 Վասն զի զայի չես համձիր որ շահիս մատուցանէի.
 Դուն ողջակէիլ ու չես հաւնիլ։
 17 Աստուծոյ զահը կոտրած հոգին է։
 Կոտրած ու խոնարհ սիրուլ ով Աստուծոյ, դուն չես
 անարդէր։
 18 Քու բարեփառութիւնավդ Ախօնի բարիք ըրէ,
 Երուսաղէմի պարփակները շինէ։
 19 Այն ատեն պիտի հաւնիս արդարութեան զահերուն,
 Ողջակէզներուն ու բոլորպին այրուած զահերուն.
 Այն ատեն քու սեղանիդ վրայ զուարակներ պիտի
 մատուցանեն։

ՍԱՂՄՈՍ ԾԲ

Գլխաւոր երաժշտին. Դաւիթի երգը, երբ Դավիթ Սովովայեցի
 եկաւ ու զրուցեց Սաւաղի, ու անոր ըստ թէ Դաւիթ
 Աքիմէլէքի առնը մասեր է։

- 1 **Խ**նչու անօրէնութիւնով կը պարծիս, ով բռնա-
 ւոր.
 Աստուծոյ գթութիւնը ամէն օր կոյ։
 2 **Լ**եզուդ չարութիւններ կը հնարէ,
 Սուր ածելի պէս նենդութիւն կը գործէ.
 3 Զարութիւնը բարութենէն աւելի կը սիրես,
 Ու ասութիւննարդարալութիւննասելէն աւելի (Աէլաւ)
 4 Ամէն կործանման խօսքերը
 Ու նենդաւոր լեզուն կը սիրես:
 5 Աստուծ ալ յաւիտեան քեզ պիտի կործանէ,
 Քեզ պիտի բռնէ ու քեզ հանէ ու բնակարանէդ,
 Ու քեզ արմատէդ պիտի խլէ կենդանիներուն երկ-
 բէն (Աէլաւ)

- 6 Արդարները պիտի տեսնեն ու վախնան,
 Ու անոր վրայ պիտի ծիծաղին՝ ըսեւլ,
 7 Աչտ սպն մարդք, որ զԱստուծած իրեն ամրութիւն
 ըլլաւ,
 Հասպ իր շատ հարստութեանը վստահեցաւ,
 Ու իր անօրէնութիւնովը զօրացաւ,
 8 Ասկայն ես Աստուծոյ տանը մէջ կանանչ ձիթե-
 նիի պէս եմ.
 Աստուծոյ ոզգումութեանը կը յուսամ յաւիտեանս
 յաւիտենից,
 9 Քեզ պիտի գովեմ յաւիտեան,
 Որ այս բան կասարեցիր.
 Ու քու անուանդ պիտի յուսամ,
 Վասն զի բարի է սուբբերուդ առջեւ։

ՍԱՂՄՈՍ ԾԳ

- Գլխաւոր երաժշտին. Մահալաթի վրայ. Դաւիթի երգը
 1 **Ա**նդգամը իր սրախի մէջ ըստ թէ Աստուծած չկայ.
 Ազականեցան ու պիղծ անօրէնութիւն ըրին.
 Մէկը չկայ որ աղէկութիւն ընէ։
 2 Աստուծած երկինքէն նայեցաւ մարդոց որդիներուն
 վրայ։
 Որպէս զի տեսնէ թէ կաջ արդեօք իմաստուն մէկը
 Որ զԱստուծած գիտուէ։
 3 Ամէնը խստորեցան, մէկտեղ անպիտան եղան.
 Աղէկութիւն ըստ մէջ չկայ, մէկ ալ չկայ։
 4 Միթէ չե՞ն ճանչնար անօրէնութիւն ընողները,
 Որոնք հաց ուտելու պէս իմ ժողովուրդս կ'ուտեն,
 Ու Աստուծոյ չեն կանչեր։

- 5 Անոնք այն տեղ շատ վախցան ուր վախ չկար.
Վասն զի քեզ պաշտողներուն առկորները ցրուեց
Աստուած.
- Ամշուցիր լուսեն, վասն զի Աստուած անարդեց զա-
նոնք:
- 6 Երանի՛ թէ Սիօնէ գար հորայէլի փրկութիւնը.
Աստուածոյ իր ժողովուրդը գերութենէն դարձուցած
ասենը.
- Յակոբ պիտի ցնծայ ու խրայէլ ուրախ պիտի ըլլայ:
- ### ՍԱՂՄՈՍ ԾԴ
- Գլխաւոր երաժշտին, Նկնջոթի վրայ, Դաւիթի երգը,
այն ասեն որ Զիփացիք եկան ու բախն Սաւուզի, Ահա Դաւիթ
մեր քով պահուած է:
- 1 Ով Աստուած, քու անունովդ զիս ազատէ,
Ու քու զօրութիւնովդ իրաւունք ըսէ ինծի:
2 Ով Աստուած, լսէ իմ աղօթքս,
Բերնիս խօսքերուն ականջ դիր.
3 Վասն զի օտարները իմ վրաս ելան,
Ու բոնաւորները կը փնտուեն իմ անձս,
Ու զԱստուած իրենց առջև չդրին (Աէլաւ)
4 Ահա Աստուած ինծի օդնական է.
Տէրը իմ հոգիիս պաշտպաններուն հետ է:
5 Զարութիւնը թշնամիներուս վրայ պիտի գարձնէ.
Քու ճշմարտութիւնովդ կորսնցուր զանոնք:
6 Ես իմ կամքովս քեզի զո՞ս պիտի մատուցանեմ.
Ով Տէր, քու անունդ պիտի գովեմ, վասն զի բարի է:
7 Վասն զի ամէն նեղութենէ զիս փրկեց,
Ու իմ աչքս թշնամիներուս իբրած տեսաւ:

ՍԱՂՄՈՍ ԾԵ

- Գլխաւոր երաժշտին, Նկնջոթի վրայ Դաւիթի երգը,
- 1 Ով Աստուած, ականջ դիր իմ աղօթքիս,
Ու իմ խնդրուածքէս քու եւեւու մի ծածկեր:
- 2 Մտիկ ըսէ ու պատասխանէ ինծի:
Իմ գանգատափս *կը մնջրիմ ու կը խուզիմ,
- 3 Թշնամիին ձայնէն ու ամբարշախն նեղութիւն ատլէն,
Վասն զի իմ վրաս անիրաւութիւն կը բերեն,
Ու բարկութիւնով զիս կը հալածեն:
- 4 Սիրոս գողաց իմ ներսիդիս,
Ու մահուան արշաւիքները իմ վրաս ինկան:
- 5 Վախ ու գող եկաւ իմ վրաս,
Ու սոսկումը զիս ծածկեց:
- 6 Ու ըսի, Երանի՛ թէ աղաւնիի նման թեւեր ունենայի,
Որպէս զի թուչէի ու հանգիստ ըլլայի:
- 7 Ահա հեռոււն կը փախչէի,
Անապատին մէջ կը բնակէի (Աէլաւ)
- 8 Սաստիկ հովէն ու փոթորիկէն
Իմ փախչիլս կ'արտորցնէի:
- 9 Ով Տէր, Կորսնցուր, անոնց լեզուները բաժնէ,
Վասն զի քաղաքին մէջ բանութիւն ու կուրտ տեսայ:
- 10 Ցորեկ ու գիշեր անոր չըսր կողմը, անոր պարխազնե-
րուն վրայ, կը պարտին:
- Անօրէնութիւն ու չարկը կայ անոր մէջ:
- 11 Անոր մէջ եղեռնագործութիւն կոյ.

*Կա՞մ, կը տրտմիմ

- Եւ բանութիւնը ու նենգութիւնը անոր հրապարակ-
ներէն չեն զատուիր:
- 12 Վասն զի թշնամին չէր զիս նախասողը, որ համբերէի.
Կամ աստղը չէր իմ վրաս հպարտացողը, որ անկէ
պահուէի.
- 13 Հապա դուն, ով մարդ, իմ հաւասարս,
իմ ընկերս ու ճանչուորս,
- 14 Որ իրարու հետ անյշշ խօսակցութիւն կ'ընէինք,
Ու բազմութեան հետ Աստուծոյ տունը կ'ելթայինք:
- 15 Մահը յանկարծ անոնց վրայ պիտի հասնի,
Ու ողջ ողջ գերեզմանը պիտի իցնեն,
Վասն զի իրենց բնակարաններուն ու իրենց մէջ չա-
րութիւն կայ:
- 16 Իւէ ես Աստուծոյ պիտի կանչեմ,
Ու Տէրը զիս պիտի փրկէ:
- 17 Իրեկունը, առտուն ու կէօօրը պիտի բողոքեմ ու
հաւաչեմ,
Եւ անիկա պիտի լսէ իմ ձոյնս:
- 18 Խաղաղութիւնով կը փրկէ իմ անձս ինձի դէմ եղած
պատերազմէն,
Վասն զի շատերը կան իմ քովս:
- 19 Աստուծ պիտի լսէ,
Ու յաւիտենականութեան մէջ լրակողը պիտի ցած-
ցընէ զանոնք. (Ալլա.)
- Որովհետև չեն փոխուիր անոնք,
Ու Աստուծմէ չին վախնար:
- 20 Զեռքը իրեն հետ հաշոտուածներուն վրայ երկնցուց,
իր ուխտը աւրեց:
- 21 Անոր բերնին Խօս+Երէ կողիէն կակուղ են,
Բայց անոր սրաբն մէջ պատերազմ՝ կայ.

- Անոր խօսքերը ձէթէն կակուղ են,
Բայց մերկ սուրեր են:
- 22 Քու հոգդ Տէրոջը վրայ ձգէ,
Ու ան քեզ պիտի խնամէ:
Անիկա յաւիտեան սասանութիւն չտար արդարին:
23 Բայց գուն, ով Աստուծ, զանոնք ապակոնութեան
գուրբին մէջ պիտի իջեցնես.
Արիւնահեղ ու նենգաւոր մարդիկ օրերնուն կէսին
պիտի չհասնին.
Սակայն ես քեզի պիտի յոււսամ:

ՍԱՂՄՈՍ ԾԶ

- Գլխաւոր երաժշախն, Եօնաթ-էլէմ-քէհօգիմի վրայ Դաւթի երգը,
Երը Փղասացիք Գէթի մէջ բանեցին զանիկա:
- 1 Ու Աստուծ, սղորմէ ինծի, վասն զի մարդը
կ'ուզէ զիս կլել.
Ամէն օր պատերազմ ընելու զիս կը նեղէ:
2 Թշնամիներս ամէն օր կ'ուզէն զիս կլել.
Վասն զի շատ մարդիկ *ամբարտաւանութիւնով
ինծի հետ կը մարտնչին:
- 3 Վախցած օրս քեզի պիտի յոււսամ:
4 Աստուծով պիտի գովեմ իր խօսքը.
Աստուծոյ կը յոււսամ, պիտի չվախնամ.
Մարմինը ինծի ի՞նչ կընոյ ընել,
5 Ամէն օր իմ դըմներուս վասա կու տան:

*կամ, բարձրէն, և իւմ, ով Բարձրեալ,
†կամ, խօսքերս կը ծռեն

իմ վրայովս անոնց բոլըր խորհուրդները չարիքի համար են,

6 կը ժողվութին ու կը պահուին,

իմ շաւիղներս կը դիտեն,

Վասն զի իմ անձիս կը սպասեն:

7 Միթէ անօրէնութիւնով անոնց փրկութիւն կ'ըլլո՞յ.
Բարկութիւնով ժողովուրդները վար ձգէ, ով Աստ-

ուած:

8 իմ թափառական պտըտիլս համրեցիր.

Արցունքներս քու տիկիդ մէջ գիր.

Միթէ անոնց քու դիլքիդ մէջ գրաւած չե՞ն:

9 Քեզէ կանչած օրս ետ պիտի դաւնան իմ՝ թշնամիներս.
Ասիկա գիտեմ, վասն զի Աստուած ինձի հետ է:

10 Աստուածով պիտի գովեմ եր խօսքը,
Տէրոջման պիտի գովեմ եր խօսքը:

11 Աստուածոյ կը յուսամ, պիտի չվախնամ.

Մարդը ինձի ի՞նչ կրնայ ընել:

12 Ով Աստուած, քու ուխտերդ իմ վրաս են.

Գեղի շնորհակալութիւններ պիտի հասուցանեմ:

13 Որովհետեւ իմ անձս մահաւանէ աղատեցիր,

Ոտքերս ալ դայթակղելէն չե՞ս ազդեք,

Որպէս զի Աստուածոյ առջև քալեմ կենդանիներուն
լցուին մէջ:

ՍԱՂՄՈՍ ԾԵ

Գլխաւոր երաժշախին. Ալթաշէթ, Դաւիթի երուը, Սաւուզի
երեսն գեղի քարայրը փախած առենը,

1 Ողորմէ ինձի, ով Աստուած, ողորմէ ինձի,

Վասն զի իմ անձս քեզի կը յոււայ.

Ու քու թեւերաւդ հսկանաւորութեանը պիտի ապա-
ւինիմ,

Մինչեւ որ թշնամութիւնները անցնին:

2 Բարձրեալ Աստուածոյն պիտի աղաղակեր,

ինձի համոր գործող Աստուածոյն:

3 Երկինքէն պիտի զրկէ ու քրկէ զիս,
Թէւ զիս կը լու ուզով վէ նախատէ. (Աէլա.)

Աստուած պիտի զրկէ իր ողորմութիւնը ու ճշմար-

տութիւնը

4 Իմ անձս առիւծներու մէջ է.

Բոց փչող մարդոց որդիներուն հէջ կը պառկիմ,
Որոնց ակւուները նկատկներ ու նետեր են,

Եւ անոնց լեզուները սրած թուրեր են

5 Ով Աստուած, երկինքի վրայ բարձրացիր.
Քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլոյ,

6 Իմ քայլերաւս որոգայթ պատրաստեցին,
Անձս վար ծուեցաւ.

Փոս փորեցին առջեւս,

Ու իրենք ինչան անոր մէջ: (Աէլա)

7 Սիրոս պատրաստ է, ով Աստուած: սիրոս պատ-

րաստ է.

Պիտի երգեմ ու սաղմոս պիտի ըսեմ.

8 Ավթնցիր, ով իմ փառքս.

Ավթնցիր, ով տաւիդ ու քնար,

Ես կանուխ պիտի արթնամ:

9 Ով Տէր, ժողովարդներուն մէջ գեղ պիտի գովեմ.
Սաղմոս պիտի երգեմ գեղի ազգերուն մէջ.

10 Վասն զի մեծ է քու ողորմութիւնդ մինչեւ երկինք,
Ու քու ճշմարմութիւնդ մինչեւ ամպերը:

11 Երկինքի վրայ բարձրացիր, ով Աստուած
Քու փառքդ բոլոր երկրի վրայ ըլլայ:

ՍԱՂՄՈՍ ԾԲ

Գլխաւոր երաժշտին. ԱԼԹԱՀԷԹ, Դաւիթի երգը:

1 Պրաւցընէ անլարլառ արդարութիւն կը խօսիք,
Ուղղութիւնով դասասատն կը տեսնէք, ով մարդոց
որդիներ:

2 Արդարե սրաով անօրէնութիւններ կը դորձէք.
Երկրի վրայ ձեռքերնուդ բռնութիւնը կը հշուէք:

3 Ամրարիշտաները էրեւաց արգանդէն խոսորեցան
Որովայնէն կը մարզին առաջ խօսելով:

4 Անոնց թոյնը օձի թոյնի պէս է,
Խոռվ իժի պէս՝ որ կը դոցէ իր ականջները,

5 Որ չափե թովիշներուն ձայնը,
Թէև վարպետութեամբ կախարդութիւն կ'ընեն,
6 Ով Աստուած, անոնց ականջները իրենց բերաններուն
մէջ փշրէ:

Ով Տէր, առիւծի կորիւններուն ժանիքները կոարտէ:

7 Թուղ աննաք հային ջուրերու պէս ո՛ր կը վաղեն.

Երբ իրենց աղեղները կը լարեն, թող կոարտին.

8 Խխունջի պէս ո՛ր քալած ատենը կը հալի,
Կնոջ մը վիժած զաւակին ո՛կո արեւը չաեսնեն:

9 Զեր կաթսաններուն փուշերուն իրուս զդալէն առաջ,
Թէ՛ թարմ և թէ՛ այլուող հուշէր փոթորիկով
պիտի ցրուէ:

10 Արդարը պիտի ուրախանայ, երբ վրէժինդրութիւնը
տեսնէ.

*Կամ, արդեօք

իր ստքերը ամբուշտին արիւնին մէջ պիտի լուսոյ:
11 Ու մարդը պիտի ըսէ թէ՛ իրաւցընէ արդարին համար
վարձք կայ.

Իրաւցընէ Աստուած կայ, որ երկրի վրայ դատաւոր է:

ՍԱՂՄՈՍ ԾԲ

Գլխաւոր երաժշտին. ԱԼԹԱՀԷԹ, Դաւիթի երգը,
այն ատեն որ Սաւուղ ժորդէնի դրկեց, ու տունը պաշարեցին
որպէս զի մեռցնեն զանիկա:

1 Փաշնամիներէս զիս փրկէ, ով իմ Աստուածս.

իմ վրաս ելլողներէն զիս վեր վերցուր:

2 Անօրէնութիւն գարծողներէն զիս ազատուէ,
Ու արիւնահեր մարդոցմէն զիս փրկէ:

3 Վասն զի ահտ իմ անձիս համար գարանը մտան,
Զօրաւոր մարդիկ իմ վրաս ժողվուեցան,

Ոչ թէ մեղքիս ու յանցանքիս համար, ով Տէր:

4 Մեղք չունեցած ատեն հրա վազեցին ու պատրաս-
տուեցան.

Արթնցիր զիս դիմաւորելու և նսոյէ:

5 Ով Տէր Աստուած զօրութեանց, Աստուած իսրայէլի,
Արթնցիր բոլոր հեթանոսները քննելու.

Զար անօրէններուն բնաւ մի ողօրմիր (Աէլաւ)

6 Անոնք իրիկուան ետ կը դառնան,
Շան պէս կ'ունան,

Ու քաղաքին չորս կողմը կը պարտին:

7 Ահա իրենց բերնէն վարութիւն դուրս կը թափին,
Անոնց շրթունքներուն վրայ սուրեր կան.

Վասն զի լուսն և՛ Ո՞վ պիտի լուէ:

8 Բայց դուն, ով Տէր, անոնց վրայ պիտի ծիծաղիս:

- Բողոք հեթանոսները ծաղվ պիտի ընեսι
 9 Ով իմ՝ զօրութիւնս՝ քեզի պիտի սպասեմ։
 Վասն զի Աստուած է իմ՝ սպասէնս
 10 Ողջորմութեանս Աստուածը ինձի պիտի հասնի.
 Աստուած պիտի ցուցնէ ինձի թշնամիներուու ։
 բայուրը։
- 11 Մի մեռցներ զանոնք, որպէս զի ժողովուրդս չմոռ-
 նայ։
 Զանոնք ցիրուցան ըրէ քու զօրութիւնովդ,
 Ու վսր ձգէ զանոնք, ով Տէր, մեր վահանը։
- 12 Անոնք իրենց բերաններուու մեղքին ու շրմունք-
 րուն խօսին հայուր
 իրենց ամբուլուտանութեանը մէջ թող բռնուին,
 Նաև անէծքին ու սուտանի համար առ կը խօսին։
- 13 Կորսնցուր բարկութիւնով, կորսնցուր զանոնք՝ որպէս
 զի ոչնչանան,
 Ու գիտնան թէ Աստուած կը տիրէ Յակոբի վրայ
 Մինչև երկրի ծայրերը (Աէլաւ)
 14 Անոնք իրիկուուն ետ պիտի դառնան,
 Շան պէս պիտի սռնան,
 Ու քաղաքին չորս կողմը պարտին։
- 15 Ուտելիքի համար պիտի թափառին,
 Եթէ չկշանան՝ գիշերը այսպէս անցնեն։
- 16 Բոսց ետ քու զօրութիւնդ պիտի երդեմ,
 Ու առտուանց քու ողջորմութիւնովդ պիտի ցնծամ։
 Վասն զի դուն ինձի պահապան եղար,
 Ու ապաւէն՝ իմ՝ նեղութեանս օրը։
- 17 Ով իմ՝ զօրութիւնս, քեզի սաղմոս պիտի երդեմ,

*կա՞մ, անոր զօրութիւնը

Վասն զի իմ՝ պաշտպան Աստուած է,
 իմ՝ ողջորմութեանս Աստուածը։

ՍԱՂՄՈՍ Կ

Գլխաւոր երաժշտին, Շուշանէտութի վրայ. Դաւիթի երգը՝ սոր-
 վլցնելու համար, այն ատեն որ պատերազմեցաւ Միլադիափի Ասոր-
 ւոց ու Սուբայի Ասորւոց հետ, ու Յովաբ ետ գտունալով եղավիա-
 յեցիներէն տասուերկու հազար հոգի զարկաւ Աղի ձորին մէջ։

- 1 Ով Աստուած, մեզ երեսէ ձգեցիր,
 Մեզ ցրուեցիր ու բարկացար. մեզի դարձիր
- 2 Երկերը դողացուցիր, զանիկա պատուեցիր.
 Անոր փլած տեղերը նորոգէ, վասն զի կ'երերայ,
- 3 Քու ժողովուրդիդ խստութիւն ցուցուցիր,
 Մեզի թմրութեան գինի խմցուցիր,
- 4 Քեզմէ վախցողներուու դրօշակ տուիր,
 *Ճշմարտութեան համար վեցնելու. (Աէլաւ.)
- 5 Որպէս զի քու սիրելիներդ փրկուին՝
 Աջ ձեռքավիդ ասզիցուր ու պատասխան տուր ինձին
- 6 Աստուած իր սրբութիւնովը՝ խօսեցաւ,
 Ես պիտի ցնծամ, Սիւքէմը պիտի բաժնեմ,
 Ու Սոկալթի հովիտը պիտի չափեմ։
- 7 Իմն է Գաղաագ ու իմն է Մանասէ,
 Եփում գլխու զօրութիւնն է.
 Ցուդա իմ՝ օրէնսդիրս է.
- 8 Մովաբ իմ՝ լուացուելու ամսնան է.
 Եղովմի վրայ պիտի ձգեմ իմ մուճակս.

*կա՞մ, Որ փախչին աղեղին երեսէն
 †կա՞մ, իր սրբարանին մէջ

- Ով Փղշտացիք, ինծի համար ձայնով ցնծացէք:
- 9 Ո՞վ պիտի տանի զիս պարապաւոր քաղաքը.
- Ո՞վ պիտի տուաջնորդէ ինծի մինչև Եղովմ:
- 10 Զէ՞ որ գուն, ով Աստուած, որ երեսէ ձգեցիր մեզ,
- Ու մեր զօքքերուն հետ չելար, ով Աստուած:
- 11 Նեղութեան մէջն մեզի օգնութիւն տուր,
Վասն զի փուռ է մարդուն փրկութիւնը:
- 12 Աստուծով քաջութիւն պիտի ընենք.
- Ու ան պիտի կոխէ մեր թշնամիները:

ՍԱՂՄՈՍ ԿԱ

- Գլխաւոր երաժշափն, նկինօթի վրայ. Սողոս Դաւթի:
- 1 Ով Աստուած, լոէ իմ ազաղակա,
Ու մորկ ըսէ իմ աղօթքաւ
- 2 Երկրի ծայրէն քեզի պիտի կանչեմ՝ սրախս մարելու
ատենք.
- Ինծմէ բարձր եղած վէմին առաջնորդէ ինծի:
- 3 Վասն զի գուն ինծի ապաւէն մը եղար,
Ամուր աշտարակ մը՝ թշնամին երեսէն:
- 4 Քու խօրանիդ մէջ պիտի բնակիմ՝ ես յաւիտեան,
Քու թեւերսւդ հովանաւորութեամնը տակ պիտի ա-
պաւինիմ: (Աէլաւ)
- 5 Վասն զի գուն, ով Աստուած, լսեցիր իմ ուփատերս.
Քու անունէդ վախցողներուն ժառանգութիւնը բնիք
տուիր:
- 6 Թագաւորին օրերուն վրայ օրեր պիտի աւելցնես.
Անոր տարիները իբրև ազգէ մինչև ազգ պիտի ըլլան:
- 7 Անիկա յաւիտեան Աստուծոյ առջև պիտի նասի.

- Ողսրմաւթիւն ու ճշմարտութիւն պատրաստէ, որպէս
զի զանիկա պահպանեն:
- 8 Այսպէս սաղմոս պիտի երգեմ՝ քու անուանդ յա-
ւիտեան,
Որպէս զի ամէն օր ուփատերս կատարեմ:

ՍԱՂՄՈՍ ԿԲ

- Գլխաւոր երաժշափն, իդիթունի վրայ. Սաղմոս Դաւթի,
1 Յիրաւոփ իմ անձս լուիկ կը սպասէ Աստուծոյ.
Անկէ է իմ վրկութիւնս.
- 2 Յիրաւոփ ան է իմ վէմս ու փրկութիւնս.
իմ ապաւէնս է, շատ պիտի չսասանիմ:
- 3 Մինչև ե՞րբ մարդու վրայ կը յարձակիք.
Դուռք ամէնդ պիտի կոտրտէք վանէիտ,
Ծուռծ պատի առ խախտած ցանկի պէտ:
- 4 Արդարեւ իր պատիւն ձգելու խորհուրդ կ'ընեն.
Ստութիւն կը սիրեն,
Իրենց բերնովլ կ'օրչնեն,
Բոյց իրենց սրտովլ կ'անիծեն: (Աէլաւ)
- 5 Ով իմ անձս, միայն Աստուծոյ սպասէ,
Վասն զի անկէ է իմ յոյսաւ
- 6 Յիրաւոփ ան է իմ վէմս ու փրկութիւնս.
իմ ապաւէնս է, պիտի չսասանիմ:
- 7 Աստուծմէ է իմ վրկութիւնս ու փառքս.
իմ զօրութեանս վէմը առ իմ ապաւէնս Աստուծուած է:
- 8 Ամէն ժամանակ անոր յուացիք, ով ժողովւրդ.
Անոր առջև սիլստենիդ թափեցէք,
Աստուած ապաւէնս է մեզի: (Աէլաւ)
- 9 Արդարեւ ռամփիկ մարդիկը փուռ են,

- Աղնուական մարդիկը սուտ են.
Եթէ կշխաքի մէջ գրուելու ըլլան,
Ամէնն ալ ունայնութենէն լէլւ են:
10 Հարստահարութեան մի յուսաք,
Ու յափշտակութեան վրայ փուճ յայս մի դնէք.
Հարստաթիւնը եթէ շատնայ
Անոր կրայ սիրա մի դնէք:
11 Մէկ անգամ խօսեցաւ Աստուած.
Երկու անգամ լսեցի ասիկա,
Թէ զրութիւնը Աստուծոյ է:
12 Ողորմութիւնն ալ քուկդ է, ով Տէր,
Վասն զի ամէն մէկուն իր գործին համեմատ հասու-
ցում կընես

ՍԱՂՄՈՍ ԿԴ

- Սաղման Դաւթի, երբ ինք Յուդայի անապատին մէջ էր,
1 Ով Աստուած, դուն ես իմ Աստուածս,
Ես առառանց քեզ կը վնտուեմ.
Հոգի. կը ծարաւի քեզի, ու մարմինս քեզի կը փա-
փաքի
Զոր ու ծարաւ տեղը, ուր ջուր չկոյ,
2 Յու զրութիւնդ ու փառքդ տեսնելու համար,
Խնչպէս քեզ տեսած եմ սրբարտնին մէջ,
3 Որովհետեւ քու ողորմութիւնդ կետնքէն առէկ է,
Իմ շրթունքներս քեզ պիտի գովին:
4 Այսպէս պիտի օրհնեմ քեզ իմ կեանքիս մէջ.
Քու անունուդ ձեռքերս վեր պիտի վերցնեմ:
5 Իրը թէ Հարպով ու պարարատութիւնով պիտի կշտա-
նայ իմ անձս,

- Ու ցնծութեան շրթունքներով պիտի գովէ եւ իմ
բերանս,
6 Երբ անկողինս վրայ քեզ կը յիշեմ,
Գէլքուան պահերաւն մէջ քու վրայովդ կը մտածեմ.
7 Վասն զի ինծի օգնական եղար
Ու քու թեւերուդ հովանաւորութեանը տակ պիտի
ցնծամու:
8 Իմ անձս քեզի հետեւելով կը յարի.
Քու աջ ձեռքդ զիս կը պահէ:
9 Բայց անոնք որ իմ անձս կը մինտեն վահիս կորսնցը-
նելու համար,
Գետանին խորունկ տեղերը պիտի մոնեն:
10 Սուրբ պիտի մատնուին,
*Աղուեմներուն բաժին պիտի ըլլան:
11 Բայց թագաւորը Աստուծու պիտի ուրախանայ,
Անով երդում ընողներուն բոլորը պիտի պարզին,
իսկ ստախօններուն բերանը պիտի պապանձի:

ՍԱՂՄՈՍ ԿԴ

- Գլխաւոր երաժշտին. Սաղման Դաւթի:
1 Ով Աստուած, լսէ իմ ձայնս իմ գանգատելու-
ատենս.
Թշնամին վախէն իմ կեանքս պահպանէ:
2 Ծածէկ զիս չսրբերուն ժողովքէն,
Անօրէնութիւն գործողներուն բազմութենէն,
3 Որոնք իրենց լեզուները թուրի պէս կը սրեն,
Իրենց նետերը կը քաշեն, որոնք լեզի խօսքեր են,

- 4 Գաղտուկ տեղէն անմեղին նետելու համար,
Յանկարծակի անոր կը նետեն ու չեն վախնար,
5 Երենց մէջ չար խօսքեր կը հաստատեն,
Գաղանի պոդայթներ գնելու համար կը խօսին,
Կ'ըսեն թէ Զանոնք ո՞վ պիտի տեսնէ,
6 Անօրէնութիւն կը ժնտուեն,
*Կ'ըսեն նե կատարեցինք Նբ խորհած խորհուրդը".
Մարդուն ներար և միրար խորունկ է:
7 Բայց Ասուուած զանոնք պիտի զարնէ նետով,
Անոնք յանկարծ պիտի վիրաւորին:
8 Ու Երենց լեզուն իրենց վրայ պիտի հանդպցնեն.
Ամէն զանոնք տեսնողները պիտի փափչին:
9 Եւ բոլոր մարդիկ պիտի վախնան,
Ու Ասուուծոյ գործը պատճեն,
Ու անոր ըրածին ուշադրութեամի պիտի նային:
10 Արդարը Տէրոջմով պիտի աւրախնայ, և անոր պիտի
յաւսոյ.
Եւ ամէն սեղիղ սրտավ եղողները պիտի պարծին:

ՍԱՂՄՈՍ ԿԵ

- Գլաւաւոր երոժատին. Դաւիթի Սաղմոսը ու երգը,
1 Փեղի իկը սպասէ օրհնութիւնը, ով Ասուուած,
Սիօնի մէջ,
Ու քեզի ուխտը պիտի կատարաւի
2 Ով աղօթքի լսող,
Քեղի պիտի գայ ամէն մարմին:

*Կամ, Երենց խորհած խորհուրդը կը ծածկեն
†Կամ լոիկ կը սպասէ. տես Ապահ. կը. 1:

- 3 *Անօրէնութիւնները իւր վրաս զօրացան.
Մեր մեղքերը դուն պիտի քաւես
4 Երանի՛ անոր զոր կ'ընարես ու գեղի կը մօտեցնես,
Որպէս զի ընակի քու արաշներուդ մէջ,
Պիտի ցուինք քու տանդ,
Քու սուրբ տաճարիդ, բարութենէն:
5 Աքանչելի բաներով, արդարաւթիւնով, պիտի պա-
տասխանես մեղի,
Ով մեր վրկութեանը Ասուուածը,
Որ երկրի ամէն ծոյրերուն ու ծովուն մէջ հեռուն
եղողներուն յայսն ես,
6 Որ քու զօրութիւնովդ լեռները հաստատեցիր,
Կարողութիւնով գօտի կապուեցար,
7 Որ կը ցածցնես ծովուն ձայնը,
Անօր ալիքներուն ձայնը,
Ու աղքերուն խուվութիւնը,
8 Ու եւրէ ծայրերը ընակողները պիտի վախնան քու
նշաններէդ.
Ասուուած ու իրիկուտն ելքը գուն կ'ուրախացնես:
9 Երկրի այցելութիւն կ'ընես ու զանիկա կը ջրես,
Շատ կը հարսացնես զանիկա.
Ասուուծոյ գետը ջրով լեցուն է,
Անոնց ցորեն կը պատրաստէս,
Վասն զի այսպէս պատրաստեցիր զանիկա
10 Անոր ակօնները կը խմյնես,
Ու անոր փոսերը կը շիտկես,
Անձրեւներով կը կակուցնես զանիկա,
Կ'օրհնես անոր բայու:

*Կամ, Անօրէնութեան խօսքերը

- 11 Կը պսակես տարին քու բարութիւնովդ,
Ու քու շատիւներդ պարարտութիւն կը կաթեցնեն,
12 Անապատի արօտներուն կրայ կը կաթեցնեն.
Ու բլուրները ուրախութիւնով պատած են:
13 Արօտները հօտերով հագուած են,
Ու հովիաները ցորենով ծածկուած են.
Ցնծութեամբ կ'աղաղակեն ու կ'երգեն:

ՍԱՂՄՈՍ ԿԶ

Գլխաւոր երաժշաբին. Սաղմոս ու երգ:

- 1 Ու բոլոր երկիր, ցնծութիւնով Աստուծոյ աղաւ.
զակեցէր:
2 Սաղմոս երգեցէք անոր անսւանը փառքին,
Փառաւոր ըրէք անոր օրհնութիւնը:
3 Աստուծոյ ըսէք նե ինչնչէս ահաւոր են քու գործերդ:
Քու մեծ զօրսութեանդ համար
Թշնամիներդ քեզի իսկոնարհութիւն պիտի ընեն:
4 Բոլոր երկիր երկրպագութիւն պիտի ընեն քեզի.
Ստղմոս պիտի երգեն քեզի,
Սաղմոս պիտի երգեն քու անսւանդ: (Աէլաւ)
5 Եկէք ու տեսէք Աստուծոյ ըրածները.
Անիկա էր գործովլ մարդոց որդիներուն վրայ Հաւ
ուր է:
6 Ծովը ցամաքի գարձուց,
Գետէն ուրբով անցան.
Այն տեղը իրմով ուրախացանք:

*Եբ. պիտի ստեն. Սաղմ. Ժը. 44: Ճա. 15:
†Կայ, որդիներէն աւելի

- 7 Իր ուժովը յաւիտեան կը տիրէ.
Անոր աչքերը սպագերը կը դիտեն.
Ապատամբները թող շարձրանան (Աէլաւ)
8 Ու ժողովաւրդներ, օրհնեցէք մեր Աստուծը,
Ու լսել տուէք անոր գովութեան ձայնը:
9 Անիկա մեր հոգին կենդանի կը պահէ,
Ու սոքերնուռ սասանիլ չոտար:
10 Վասն զի դուն քննեցիր մեզ, ով Աստուծ:
Փորձեցիր մեզ, ինչպէս արծաթը կը փորձաւի:
11 Մեզ որոգայլթի մէջ մացուցիր,
Ծոնր բեռ: դիրի մեր *կռնակին վրայ:
12 Մեր գլուխներուն վրայ մարդիկ հեծցուցիր.
կրակը ու ջարը մտանք,
Սակայն մեզ առաստութեան ուղարկ հանեցիր:
13 Ողջակէզներով պիտի մանեմ քու տունդ,
Քեզի պիտի հասուցանեմ իմ ուխտերս,
14 Զորոնք յըթունեներս խստացան,
Ու նեղութեանս մէջ բերանս խօսեցաւ:
15 Պարարտ ողջակէզներ պիտի մասուցանեմ քեզի խո-
յերու խունկով.
Զուարակներ պիտի զոհեմ նսխազներու հետ: (Աէլաւ)
16 Եկէք լսեցէք դուք սամէնդ որ Աստուծմէ կը վախ-
նոք,
Ու պատմեմ ինչ որ ըրաւ իմ տնձիս:
17 Եերնովս անոր աղաղակեցի,
Ու լեզուովս դամիկա բարձրացուցի:
18 Եթէ որտիս մէջ անօրէնութիւն տեսնէի,

*Եբ. երիկամունքներուն
†Եբ. անիկա բարձրացաւ

- Տերը պիտի զսէր։
 19 Սակայն Աստուած լսեց,
 իմ աղօթքիս ձայնը մտիկ ըրաւ։
 20 Օրհնեալ ըլլայ Աստուած, որ իմ՝ աղօթքս շնչէեց,
 Ու եր ողբրմութիւնը ինձմէ ետ չդարձուց։

ՍԱՂՄՈՍՍ ԿԵ

Գլխաւոր երաժշախն, նկինօթի վրայ. Սալմոս ու երգ։

- 1 Աստուած ողբրմի մեղի ու օքնէ մեղ,
 Երեսը փայլեցնէ մեր վրայ, (Սէլա,)
 2 Որպէս զի երկրի վրայ քու ճամբար ճանչցուի,
 Ու ամէն աղգերուն մէջ քու փրկութիւնդ։
 3 Թող ժողովուրդները քեզ գովէն, ալ Աստուած,
 Բոլոր ժողովուրդները քեզ գովէն։
 4 Աղգերը թող ուրախանան ու ցնծան,
 Վասն զի ժողովուրդները ուղղութիւնով պիտի գտան,
 Ու երկրի աղգերուն գուն պիտի առաջնորդես (Սէլա)։
 5 Թող ժողովուրդները քեզ գովէն, ալ Աստուած,
 Բոլոր ժողովուրդները քեզ գովէն։
 6 Երկրի եր պառողը պիտի տայ.
 Ու Աստուած, մեր Աստուածը, մեղ պիտի օքնէ,
 7 Աստուած մեղ պիտի օքնէ,
 Ու երկրի ամէն ծայրերը անկէ պիտի վախնան։

ՍԱՂՄՈՍՍ ԿԸ

Գլխաւոր երաժշախն. Դաւիթի Սալմոսը ու երգը

- 1 Թող ելլէ Աստուած, անոր թշնամիները թող
 ցրուին,

- Ու զանիկա ատողները իր երեսէն թող փախչին։
 2 Մուկին ցրուելուն պէս ցրուէ զանան։
 Խնչէս մոմը կրակին առջև կը հայի,
 Այսուեւ թող կորսուին ամբարիշտները Աստուածուց
 երեսէն։
 3 Բայց արդարները թող ուրախանան,
 Աստուածոյ առջև թող ցնծան,
 Եւ ուրախութիւնով զուտրծանան։
 4 Երգեցէք Աստուածոյ, սալմոս երգեցէք անոր ան-
 ուտներ.
 Ճամբար պատրաստեցէք անապատներուն մէջէն հւծ-
 նողին,
 Որուն անունը *Եահ է,
 Ու ցնծացէք անոր առջև։
 5 Որբերուն հայրը ու որբեւարիներուն գատաւորը
 Աստուած է իր սուրբ բնակարանին մէջ։
 6 Աստուած մինակ եղաղները տան մէջ կը բնակեցնէ,
 Կապուտները յաջողութեան կը հանէ.
 Բայց ապաստմբները չոր տեղ կը բնակին։
 7 Ու Աստուած, քու ժողովուրդիդ առջեւէն գա-
 ցած ատենդ։
 Անապատէն անցած ատենդ, (Սէլա,)
 8 Երկիր շարժեցաւ, երկինք ալ ւու կաթեցուց Աս-
 տուածոյ երեսէն,
 Սինս ու լորեցաւ Աստուածոյ, Խորոյէլի Աստուածոյն,
 առջեւէն։
 9 Ու Աստուած, քու ժողովուրդեանդ առատօրէն
 անձրեւ տալով,

- Երբ յոգնած էր, դուն հաստատեցիր զանիկա:
 10 Քու ժողովուրդդ անոր մէջ բնակեցաւ,
 Քու քաղցրութիւնովդ աղքատն համար պատրաս-
 տեցիր, ով Աստուած:
 11 Տէրը պատգամ՝ տուոււ.
 Աւետիս տուուները մեծ բազմութիւն են:
 12 Զօրքերուն թագաւորները կը փախչին
 Կը փախչին, ու տան մէջ բնակող ինը աւարը կը
 բաժնէ:
 13 Թէև գոմերուն մէջտեղը պառկած ըլլաք,
 Աղունիի թեւերուն ուր պիտի ըլլաք արծաթով
 պատած,
 Ու անոր փետուրները դեղին սկիով:
 14 Ամենակարսղին այն երէին վրոց թագաւորները ցըր-
 ռուած տաենք,
 Երէին Սելմնի մէջի ձիւնին պէս ճերմկցաւ:
 15 Աստուծոյ լեռը Բասան լեռն է,
 Բազմագագաթ լեռը Բասան լեռն է:
 16 Ով բազմագագաթ լեռներ, ինչո՞ւ նախանձով կը
 նայիք.
 Ասէիս այն լեռն է՝ որուն մէջ Աստուած հաճեցաւ
 բնակել.
 Ցիրաւի Տէրը հռա պիտի բնակի յաւիտեան:
 17 Աստուծոյ կառքերը երկու անգամ տասը հազար են,
 չալպր հազարաց.
 Տէրը անոնց մէջ է, է՛տ սուրբ տեղն է իբրև Արնայի մէջ:
 18 Բարձր տեղը ելար, գերութիւնը գերի ըրեր,
 Պարգեւներ առիր մարդոց համար,

- Ու ապստամբներուն համար ալ,
 Որպէս զի Տէր Աստուած անաւոց մէջ լնակի:
 19 Տէրը օրհնեալ ըլլայ *օրէ օր.
 Եթէ հիշ բեռ մէ գնէ մեր վրայ,
 Աստուած է մեր փրկիչը (Սէլու)
 20 Աստուած մեղի փրկութեան Աստուած է,
 Ու մահուանէ ազատուիլ Տէր Եհովայէ է:
 21 Սակայն Աստուած պիտի փշրէ իր թշնամիներուն
 դրուիլ,
 Նաև իր անօրէնութիւններուն մէջ պարտաղին զի-
 ստոր գագաթը:
 22 Տէրը ըստաւ, Զաւանէ Բասանէ ետ դարձնեմ.
 Ծովուն անդունդներէն ետ դարձնեմ.
 23 Այնպէս որ սովոր արեան մէջ թաթխուի,
 Շուներուգ լեզուն թշնամիներէն իր բաժինը առնէ:
 24 Քու քալուածքներդ տեսան, ով Աստուած,
 Իմ Աստուծոյս, իմ Թագաւորիս, քալուածքները
 սուրբ տեղին մէջ:
 25 Առջեւէն երգեցողները գացին,
 Ետեւէն նուագածուները
 Թմբուկ զարնող կոյսերուն մէջտեղը
 26 Ժողովուրդներուն մէջ օրհնեցէք զլաստուած,
 Տէրը, ով Խրայէլի ազիւրէն եղաղներ:
 27 Այն տեղ է փոքր Բենիսամինը, անոնց տիրապետողը,
 Յուդայի իշխանները իրենց բազմութիւնովը,
 Զարուղնի իշխանները ու Նեփթաղիմի իշխանները,
 28 Քու Աստուածդդ քու զօրութիւնդ հաստատեց.

*Կամ, որ օրէ օր մեր վրայ Բարեբարունեան բեռ կը
 գնէ

Զօրացուը, ով Աստուած, այն բանը զար մեզի համար
ըրեւ

- 29 Երուսաղէմ եղող տաճարիդ համար
Թագաւորները քեզի ընծաներ պիտի բերեն:
- 30 Եղէգներու մէջ բնահաւ գաղանները, ու ցուլերուն
ժողովքը
Ժողովրդոց զուարակներուն հետ սասաէ,
Որպէս զի խանարհին՝ արծաթի կտարներ բերելու.
Պատակազմ սիրող ժողովուրդները ցրուէ:
- 31 Եզիպառսէ ազնուականներ պիտի գան.
Եթէովզիս իր ձեռքերը շրւտով Աստուծոյ պիտի
երկնցնէ:
- 32 Ով երկրը թագաւորութիւններ, երգեցէք Աստու-
ծոյ:
Աղջմո ըսէք Տէրոջը, (Աէլա,)
- 33 Անոր՝ որ ի յաւիտենից երկինքներուն երկնից վրայ
*կը նատի,
- Աչա անիկս իր ձայնովը զօրսուոր ձայն կու տայ:
- 34 Զօրութիւն տուէք Աստուծոյ.
Անոր մեծվայելչութիւնը Խարայէլի վրայ է,
Ու անոր զօրութիւնը ամպերուն մէջ է:
- 35 Աչաւոր ես, ով Աստուած, քու սուրբ տեղերուդ
մէջ.
Խարայէլի Աստուածը,
Ինք կու տայ էր ժողովուրդին ոյժ ու կարողութիւն.
Աստուած օրչնեալ ըլլու:

*Եր. կը հեծնէ

ՍԱՂՄՈՍ ԿԹ

- Գլաւոր երաժշտին, Շօշանիմի վրայ. Սուլու Դաւթի:
- 1 Ապրեցուը զիս, ով Աստուած,
Վասն զի ջուրերը իմ անձիս հասան:
 - 2 Խորունկ ցեխի մէջ կ'ընկղմիմ,
Ուր կոյսնելու բեղչէկոյ.
Զուրերուն խորունկ տեղերը մտայ,
Ու յորձանքները զիս ընկղմեցին:
 - 3 Յոգնեցոյ ես կանչէլս, կոկորդո ցամքեցաւ,
Աչքերս նուարեցան իմ՝ Աստուծոյս սպասելն:
 - 4 Առանց պատճառի զիս ստողները գլխաւս մազերէն
շատ են.
 - Զիս փուծ տեղ կորսնցնող թշնամիներս զօրացան.
Ա. Ն բանը զոր չէի յափշտակեր, այն տաեն վճարեցի:
 - 5 Ով Աստուած, իմ յիմարութիւնս գուն գիտես,
Ու յանցանքներս քեզէ ծածկուած չեն:
 - 6 Քեզի համբերողները իմ պատճառաւս չամչնան,
Ով Տէր, զօրաց Տէրը.
Քեզ փնտողները իմ պատճառաւս ամօթով չըլլան,
Ով իարոյէլի Աստուածը:
 - 7 Վասն զի քեզի համար նախատինքի համբերեցի:
Ա. մօթը ծածկեց իմ երեսաւ:
 - 8 Եղբայրներուս օտար՝
Ու մօրս որդիներուն անձանօթ եղայր:
9 Վասն զի քու տանգ նախանձը զիս կերաւ,
Ու քեզ նախատողներուն նախատինքները իմ վրաս
ինկան:
 - 10 Իմ անձիս ծոմ պահէլով լացի,

- Ու այս ինծի նախատինք սեպուեցաւ,
 11 Եւ իմ հանդերձա քուրձ ըրի,
 Ու անոնց առակ եղայ:
 12 Դուռը նոսառները իմ վրայսվս կը խօսին,
 Ու արբեցողներուն խաղը եղայ:
 13 Բայց ես իմ աղօթքս կ'ընեմ՝ քեզի,
 Ով Տէր, ընդունելի ժամանակին.
 Ով Աստուած, քու մեծ ողորմութիւնով,
 Քու փրկութեանդ ճշմարտութիւնովը ինծի պատաս-
 խան տուր.
 14 Հանէ զիս ցեխէն, ու ընկղմիմ.
 Զիս աստղներէն ու խորունկ ջուրերէն ապաստիմ:
 15 Ջուրերուն յորձանքը թող զիս ընկղմէ,
 Ու անդունդը զիս չկլէ,
 Ու *ջրհորը իր բերանը վրաս չգոցէ:
 16 Պատասխան տուր ինծի, ով Տէր,
 Վասն զի քու ողորմութիւնդ քաղցր է.
 Քու առաս գթութեանդ համեմատ նայէ ինծի.
 17 Ու երեադ մի ծածկեր քու ծառայէդ,
 Վասն զի ես նեղութեան մէջ եմ.
 Շուտապ պատասխան տուր ինծի:
 18 Իմ անձիս մօտեցիր ու զանիկս փրկէ.
 Իմ թշնամիներուս համար զիս ազատէ:
 19 Դուն դիտես իմ նախատինքս
 Եւ իմ ամօթս ու իմ խայբառաւակութքւնս.
 Քու առջեւդ են լուրզ զիս նեղողները:
 20 Նախատինքը սիրս կոտրեց ու հիւանդ եղայ,
 Վշտակից եղայի մը նոյեցայ, բայց չկար.

*Կամ, գուբը

- Ու միիթարութիւն տուողներուն՝ բայց չգտաս:
 21 Հապա կերակուրի տեղ թղյն տուին ինծի,
 Ու ծարւած ատենս քացախ խմցացին ինծի:
 22 Անոնց սեղանը իրենց առջեւ որոդայթ,
 Ու յաջողութեան տեղ վարմ ըլլայ:
 23 Անոնց աշքերը մժանան որպէս զի չտեսնեն,
 Ու անոնց մէջքերը միշտ դողացուր:
 24 Քու պրտմութիւնդ անոնց վրայ թափէ,
 Ու սասափկ բարկութիւնդ անոնց վրայ հասնի:
 25 Անոնց բնակարանը աւերակ ըլլայ:
 Ու անոնց վրաններուն մէջ բնակոյ չգտնուի:
 26 Վասն զի զըսն զըր գտն զարկիր, անոնք կը հալուծեն,
 Եւ քու վիրաւորածիդ ցաւին վրայով կը խօսին:
 27 Անոնց անօրէնութեանը վրայ անօրէնութիւն դիր,
 Եւ քու արգարութեանդ չհասնի:
 28 Կենաց գիրքէն թող Ծնչուին:
 Ու արդարներուն հետ չգրուին:
 29 Բայց ես աշքատ ու վշտացած եմ.
 Ով Աստուած, քու փրկութիւնդ թող զիս պաշտ-
 պանէ:
 30 Աստուծոյ անունը պիտի գովեմ երգալ,
 Ու պիտի բարձրացնեմ զանիկս գոհութիւնով:
 31 Ու ասիկա եղջերաւոր ու կծղակաւոր եղէն ու զուտ-
 րակէն
 Աւելի ընդունելի պիտի ըլլայ Տէրոջը:
 32 Հեղերը պիտի տեսնեն և ուրախանան.
 Ով վաստուած փնտուղներ ձեր սիրտն ու պիտի
 ապրի:
 33 Վասն զի Տէրը տնանկներուն կը լըէ,
 Ու իր կապուածները չանարգեր

- 34 Թող գովեն զանիկա երկնք ու երկիր,
Մով ու բոլոր անոր մէջ շարժողները:
35 Վասն զի Աստուած Ախոնը պիտի փրկէ,
Ու Յուդոյի քաղաքները պիտի շինէ.
Եւ հոն պիտի բնակին ու ժառանգեն զանիկա,
36 Եւ իր ծառաներուն սերունդը պիտի ժառանգէ զա-
նիկա,
Ու իր անունը սիրողները անոր մէջ պիտի բնակին:

ՍԱՂՄՈՍ Հ

- Գիսաւոր երաժշտին, Ս-դուս Դաւթի, յիշտակի համար:
1 Ով Աստուած, զիս փրկելու համեցէ,
Ով Տէր, ինձի օգնելու արտորցիր:
2 Թող ամշնան ու խայտառակ ըլլան
Իմ անձի փնտռողները:
Ետ դառնան ու ամօթով ըլլան
Ինձի չարկը ուղողները:
3 Թող *ամշնալով ետ դառնան
Անոնք օր Բնիք Վա՛շ վա՛շ Կ'ըսեն:
4 Ա.մէն քեզ փնտռողները
Քեզմով թող ցնձան և ուրախանան.
Եւ քու փրկութիւնդ սիրողները
Ա.մէն ժամանակ թող լսեն, Աստուած մեծանոյ:
5 Բոյց հս աղքատ ու տնանկ եմ.
Ով Աստուած, շուտով համբ ինձի
Իմ օգնական ու փրկիչո դուն ես,
Ով Տէր, մի ուշանար:

*կամ, իրենց ամօթին պատճառաւ

ՍԱՂՄՈՍ ՀՅ.

- 1 Ով Տէր, քեզի յուսացայ,
Զամշնամը յաւիտեանն
2 Քու արդարութիւնովդ զիս ապրեցուր ու ազատէ զիս,
Ականչդ ճուէ ինձի ու փրկէ զիս:
3 Ինձի ապաւինութեան վէմ եղիր,
Որպէս զի միշտ հաս երթամ:
Դուն հրաման ասուիր զիս փրկելու,
Վասն զի իմ վէմ ու բերդս գուն ես:
4 Ով իմ Աստուածո, ամբարշտին ձեռքէն,
Անօրէնին ու բռնաւորին ձեռքէն, զիս փրկէ:
5 Վասն զի իմ ակնկալութիւնս դուն ես, ով Տէր
Եհովա.
Մանկութենէս ի վեր իմ յոյսա դառն ես,
6 Ես քեզի հաստատուեցայ արգանդէն,
Մօրս սրովայնէն իմ պաշտպանս դուն ես.
Իմ գալութիւնս միշտ քու վրադ է:
7 Զարմանալի բանի մը պէս եղայ շատերուն,
Բայց իմ զօրաւոր ապաւենս դուն ես:
8 Բերանս քու գովարանութիւնովդ լցուի,
Ա.մէն օր քու փաւաբանութիւնովդ:
9 Ծերութեան ասենս զիս մի ձգեր.
Ոյժիս պականծ ատենը զիս մի թողուր:
10 Վասն զի թշնամիներ ինձի համար կը խօսին,
Ու իմ անձի պաշտպանները մէկաեղ խորհուրդ Կ'ընեն,
11 Չսելով, Աստուած թողուց զմնիկա.
Հայածեցէք ու բռնեցէք զանիկա,
Վասն զի ազատող մը չկայ:
12 Ով Աստուած, ինձմէ մի հեռանար.

- Բվլ իմ Աստուածս, ինձի օգնելու արտորցիր:
- 13 Թաղ ամշան ու կրտուին իմ անձիս հակառակորդ ները.
- Նախատինքով ու ամօթով թող ծածկուին ինձի չա-
րութիւն ուղղները
- 14 Բայց ես ամէն ատեն պիտի յուսամ,
- Եւ քու ամէն գոլաբանութիւններուդ վրայ պիտի
աւելցնեմ:
- 15 Բերանա պիտի պատմէ քու արդարութիւնդ,
- Ամէն օր քու փրկութիւնդ.
- Վասն զի ես անաց համրանքը չեմ գիտեր:
- 16 Պիտի քաղեմ Տէր Եհովսցի զրութիւնովը.
- Քու արդարութիւնդ, միայն քուկինդ, պիտի յիշեմ:
- 17 Ով Աստուած, մանկութենես ի վեր սորվեցուցիր
ինձի.
- Ու մինչև հիմա քու հրաշալի գործերդ պատեցի:
- 18 Ու հիմա մինչև ծերութեան ու ալեւսրութեան ա-
տենս
- Զիս մի ձգեր, ով Աստուած,
- Մինչև որ պատմէմ՝ քու *կարողութիւնդ հալսու ազ-
գին,
- Եւ քու զրութիւնդ ոյն ամէնուն որոնք պիտի գան:
- 19 Քու արդարութիւնդ ալ շատ բարձր է, ով Աստ-
ուած,
- Որ մեծամեծ բաներ ըրեր.
- Քեզի պէս ով կայ, ով Աստուած:
- 20 Դուն որ շատ ու ծանր նեղութիւններ ցուցուցիր
ինձի,

- Նորէն զիս պիտի կենդանացնես,
- Ու երկրի անդանդներէն նորէն զիս պիտի հանես:
- 21 Իմ մեծութիւնս պիտի շատցնես,
- Ու դառնալով զիս պիտի միսիթարես:
- 22 Ուստի ես ալ պիտի գովեմ քեզ տառիթղով
- Քու ծշմարտութեանդ համոր, ով իմ Աստուածս,
- Աղջմա պիտի երգեմ քեզի քնարով,
- Ով Խորացէլի Սուրբը:
- 23 Քեզի սաղմոն երգած ատենս իմ շրթունքներս պիտի
ցնծան:
- Ու իմ հոգիս՝ զոր դուն փրկեցիր:
- 24 Իմ լեզուս ալ ամէն օր քու արդարութիւնդ պիտի
խօփի,
- Վասն զի ինձի չարիք ուղղները ամշան ու խայտա-
ռակ եղան:

ՍԱՂՄՈՍ ՀԲ

*Սողոմոնի համար:

- 1 Ով Աստուած, քու դատաստաններդ թագաւո-
րին տուր,
- Ու արդարութիւնը՝ թագաւորին որդւոյն:
- 2 Անիկա արդարութիւնով պիտի դատէ քու ժողո-
վուրդդ:
- Ու աղքաներդ՝ իրաւունքով:
- 3 Լեռները խաղաղութիւն պիտի բուցնեն ժողովուր-
դին,
- Ու բլուրներն ալ արդարութիւնով:

- 4 Ժողովաւրդին աղքատաներուն իրաւունք պիտի լնէ,
Տնանկին զաւակները պիտի ազատէ,
Ու բռնաւորը պիտի ջարդէ;
5 Քեզմէ պիտի վախճան քանի որ արեգակը ու լուսինը
կը մնան,
Ազգէ մինչեւ ազգ։
6 Հնձուած խոտի վրոյ էջո՞ւ անձրեւի պէս պիտի իշնէ,
Տարափներու պէս՝ ուսան երկիրը կը թրջեն,
7 Անոր օրերուն մէջ արդարը պիտի ծաղկի.
Ու շատ խաղաղութիւն պիտի ըլլայ,
Մինչեւ որ ալ լուսին ըլլայ։
8 Ու ծովէն մինչեւ ծովը պիտի տիրէ անիկա,
Ու Գետէն մինչեւ երկիրի ծայրերը։
9 Անոր առջեւ անսապատին լնակիշները ծունկ պիտի
կը կնեն,
Ու անոր թշնամիները փոշի պիտի լգեն։
10 Թարգիսի ու կղզիներուն թագաւորները լնծայ պիտի
մասուցանեն.
Շաբայի ու Սաբայի թագաւորները պարգև պիտի
բերեն։
11 Ու բոլոր թագաւորները անոր երկրպագութիւն պիտի
լնեն.
Բնոր ազգերը անոր պիտի ծառայեն։
12 Վասն զի աղքատը պիտի փրկէ աղաղակելու ատենը,
Խոշջն ալ, ու զանիկա ալ որ օդունութիւն չունի։
13 Պիտի խղճայ աղքատն ու անանկին,
Եւ տնանկներուն անձերը պիտի ազատէ։
14 Հարատահարութենէ ու բռնութենէ պիտի փրկէ աւ
նոնց անձը,
Եւ աննոց արիւնը պատառական պիտի ըլլայ անոր առջեւ։

- 15 Ու պիտի ապրի, և Շաբայի սոկեն անոր պիտի ալուսի.
Ու ամեն ատեն աղօթք պիտի մասուցուի անոր համար,
Ամէն օր պիտի օրչնեն զանիկա։
16 Յորենի առասութիւն պիտի ըլլայ երկրի մէջ՝
Լեռներուն գլուխը,
Անոր պատուղը կիրանանի պէս պիտի շարժի.
Ու գետնի խոտին պէս պիտի ծաղկին *քաղաքացիները
17 Անոր անունը յատիսեան պիտի մնայ.
Փանի որ արեգակը է ճայ, անոր անունն ալ պիտի
մնայ.
Ու բարբէ անով պիտի օրչնուին.
Ամէն ազգերը երանութիւն պիտի տան անոր:
18 Օրչնեալ ըլլայ Տէր Աստուած, Խարայէլի Աստ-
ուածը,
Միայն ինքն է հրաշքներ լնողը։
19 Ու օրչնեալ ըլլայ յատիսեան անոր փառաւոր անունը,
Ու բոլոր երկիր թողլ լցուի անոր փառքով։ Ամէն ու
ամէն։
20 Յետէի որդւոյն Դաւիթի աղօթքները լմնցան,

ՍԱՂՄՈՍ ՀԳ

Սաղմոս Ասափայ:

- 1 Յիրաւի Աստուած բարի է Խարայէլի,
Այսինքն սրտով մաքուր երսղներուն,
2 Բայց քիչ մնաց որ իմ ոսքերս պիտի ծռէին,
Ու մազ մնաց որ իմ քայլերս գոյթակղէին,
3 Վասն զի նախանձեցոյ հպարտներուն,

*ԵՐԵ. ՔԱՊՄՔԵՆ

- Երբ ամբարիշտներուն յաջողութիւնը տեսայ.
 4 Քանզի իրենց մահուան ժամանակն ալ ցաւեր չըւնին.
 Մարմիննին ալ պարարտ է:
 5 Անոնք մարդոց նեղութեանը մէջ չեն,
 Եւ ուրէ մարդոց հետ չեն տանջուիր:
 6 Անոր համար վզնոցի պէս ամբարտուանութիւնը զա-
 նոնք կը ըրջապատէ.
 Բռնութիւնը հանգերձի պէս զանոնք կը ծածկէ:
 7 Անոնց աչքերը պարարտութենէն դուրս կ'ելլէն.
 Անոնք սրտի խորհուրդներէն անդին կ'անցնին:
 8 Ծաղր կ'ընեն ու չարութիւնով կը խօսին բռնութեան
 համար,
 Հպարտութիւնով կը խօսին:
 9 Բերաննին երկնքի գէմ կը դնեն,
 Ու իրենց լեզուն երկիր մէջ կը պտըսի:
 10 (Անոր համար իր ժարովուրդը հոս պիտի դառնայ,
 Ու առատութիւնով ջուր պիտի քամուի անսնց)
 11 Ու կ'ըսեն, Աստուած ի՞նչպէս գիտէ.
 Ու Բարձրելցն քով գիտութիւն կա՞յ:
 12 Ա՛չա անոնք են ամբարիշտները,
 Որ միշտ յաջողութիւն աւնին, ու հարատութիւն կ'ա-
 ւելցնեն:
 13 Ցիրտէ զուր տեղը իմ սիրաս մաքրեցի,
 Ու իմ ձեւքերս անմեղութիւնով լուացի.
 14 Որովհետեւ ամէն օր կը տանջսւիմ,
 Ու ամէն առատու կը խրատուիմ:
 15 Եթէ լսէի թէ ես ոյսպէս խօսիմ,
 Ա՛չա քու որդիներուդ աղդին նենդութիւն ըրած
 պիտի ըլլոյի:
 16 Երբ խորհեցայ ափկա իմանալու,

- Դժուար եկաւ իմ աչքերուս.
 17 Մինչև որ Աստուծոյ սրբարանը մտայ,
 Ու անոնց վերջը իմացալ:
 18 Իրաւ որ դուն զանոնք սահելու տեղերը դրեր ես.
 Կործանման մէջ իշեցուր զանոնք,
 19 Ի՞նչպէս յանկարծակի աւելունուկի մէջ ինկան.
 Հատան ու վախերով կորսուեցան:
 20 Ինչպէս երազ մը բարդան արթննալէն ետքը,
 Ու Տէր, քաղաքին մէջ՝ անոնց պատկերը այսպէս
 պիտի անարդես:
 21 Բայց իմ սիրաս ցաւեցաւ,
 Ու իմ երիկամնակներէս խոցուեցայ:
 22 Ու ես յիմար էի ու չէի իմանար,
 Քու առջեւդ անասուններու ոփու էի:
 23 Սակոյն ես միշտ քեզի հետ իմ,
 Դուն իմ աջ ձեռքէս կը բռնես:
 24 Դուն պիտի առաջնորդես ինծի քու խորհրդովի,
 Ու վերջը փառքով զիս պիտի ընդունիս:
 25 Ո՞վ ունիմ ես երկինքի մէջ.
 Երկիր վըսյ ալ քեզմէ ութերը չեմ ուղերի
 26 Իմ մարմինս ու սիրտս կը մաշն,
 Բայց Աստուած իմ սրտիս զօրութիւնը ու իմ բաժինս
 է յաւիտեան:
 27 Վասն զի աչա անոնք որ քեզմէ կը հեռանան, կը
 կորսուին.
 Դուն կը սատկեցնես ամէնը որ շնութիւն կ'ընեն
 քեզմէ Տալրէւթէ:
 28 Բայց Աստուծոյ մօտենալու բարի է ինծի.

Ցպսս դրեր եմ Տէր Եհավայի վրայ,
Որպէս զի քու բոլոր գործերդ պատմեմ:

ՍՈՂՄՈՍ ՀԴ

ԵՐԳ Ասափայ:

- 1 Ովլ Աստուած, ինչու Եղա բոլորավին մերժեցիր,
Ու բարկութիւնդ կը միասյ քու արօտիդ ոչխարներուն
վրայ:
- 2 Ցիշէ քու ժողովուրդդ զբ սկիզբէն ստացեր ես,
Քու ժառանգութեանդ վիճակը զբ փրկեր ես,
Ու այս Ախօն լեւը ուր բնակեր ես:
- 3 Բարձրացուր քու քայլերդ դէպի բոլորավին աւրուած-
ները,
- 4 Քու թշնամիներդ կը պոււան քու ժողովքիդ մէջ.
Երենց նշանները նշանի ուշ կը դնեն:
- 5 Անիկա անտառի ծառերուն վրայ
Կացիններ գերցնողի մը պէս գիտցուեցաւ.
- 6 Ու հիմա անոր քանդակագործ զարդերը,
Ամէնը մէկէն, կացիններով ու մուրճերով կը կոտըր-
տեն:
- 7 Կրակով այրեցին քու սրբարտնդ.
Մինչեւ գետինը կործանեցին քու անուանդ բնակա-
րանը:
- 8 Երենց արտերուն մէջ ըսին թէ կորսնցնենք ասոնք
ամէնը մէկաեղ.
- Երկրին մէջ Աստուծոյ բոլոր ժողովարանները ոյ-
րեցին:

- 9 Մեր նշանները չենք տեսներ.
Ալ մարդարիէ չկայ.
Ու մեր քով մէկն ալ չկայ,
Որ գիտնոյ թէ ասէն մինչեւ ե'րբ պէտի աւուեւ:
- 10 Ովլ Աստուած, մինչեւ ե'րբ նախատինք պիտի ընէ
նեղիչը.
Թշնամին մինչեւ յաւիտեան քու անունդ պիտի ա-
նարդէ՞:
- 11 Ինչու ես կը քաշես քու ձեռքդ ու աջ ձեռքդ.
Զանէս ծոցէդ հանէ ու կորսնցուր զանանէ:
- 12 Բայց սկիզբէն իմ թագաւորս Աստուած է,
Որ փրկութիւններ կ'ընէ երկրի մէջ:
- 13 Դուն քու զօրութիւնովդ ծովը պատառեցիր,
Վիշապներուն վլուիները ջուրերուն մէջ փրկոցիր:
- 14 Դուն ջարդեցիր Լեւիամշանի գլուխները.
Զանիկա կերտակուր ըլլալու տուիր անսպատին մէջի
Ժողովուրդին:
- 15 Դուն ճեղքեցիր աղբիւրը ու վասկը,
Դուն չըրցուցիր մշտնջենուոր գետերը:
- 16 Քուկդ է ցորեկը, և քուկդ է գիշերը.
Լոյրը ու արեւը դուն պատրաստեցիր:
- 17 Դուն հաստատեցիր երկրի ամէն սահմանները.
Ամուռը ու ձեռուր գուն առեղջեցիր:
- 18 Ցիշէ ասիկա՝ որ թշնամին նախատինք տուաւ Տէ-
րոջը,
Ու յիմար ժողովուրդը քու անունդ անարդէց:
- 19 Մի մասներ գաղանին քու ասարակիդ անձը.
Մի մասնար յաւիտեան քու աղքատներուուդ *կետնքը:

*կամ, ժողովը

- 20 Նայէ ուս ուխտիդ, վասն զի երկրի խաւար տեղերը
Բունալթեան բնակարաններով լցուած են:
- 21 Թողլ խեղճը եռ չգտաւնայ ամօթով.
- Թողլ աղքատը ու անանկը օրհնեն քու անունդ:
- 22 Ելիր, ով Աստուած, քու դատդ պաշապանէ.
- Ցիշէ սյն նախատինքը՝ զոր անդդամը ամէն օր քեզի
կ'ընէ:
- 23 Մի մռանար քու թշնամիներուդ ձայնը.
Քեզի դէմ սոք եղաներուն խաւալթիւնը ամէն ժա-
մանակ կը բարձրանայ:

ՍԱՂՄՈՍ ՀՅ

- Դվաւոր երաժշտին. Ալթաշէթ, Ասափի Սաղմոսը ու երգը:
- 1 Կը գովենք քեզ, ով Աստուած,
կը գովենք, և քու անունդ մօտ է:
Քու հրաշքներդ կը պատմուին:
- 2 Երբ որոշեալ ժամանակ ունենամ՝
Ուղեղ դատաստան պիտի տեսնեմ:
- 3 Երկիր ու անոր բոլոր բնակիչները մաշեցան.
Անոր սիւները ես կը հասասուեմ: (Աէլա)
- 4 Ըսի հպարտներուն թէ Հպարտութիւն մի լնէք.
Ու ամբարիշտներուն՝ թէ Եղջիւր մի վերցնէք:
- 5 Զեր եղջիւրները վեր մի վերցնէք.
Ամբարտաւան պարանցով մի խօսիք:
- 6 Վասն զի բարձրանալը ոչ արեւելքէն է
Եւ ոչ արեւմուտքէն, ոչ ալ անապատէն,
- 7 Հապա դատաւորը Աստուած է.
- Մէկը կը ցածցնէ, ու միւլը կը բարձրացնէ:

- 8 Վասն զի Տէրոջը ձեռքը բաժակ կայ, ու գինին կար-
միր է.
- Անիկա խաւալնուածքով լեցուն է, ու անկէ կը թափէ.
- Եւ իրաւ երկրի բոլոր ամբարիշտները
- Անոր մրուբները քամելով պիտի խմնն:
- 9 Բայց ես յաւիտեան պլատի պատմեմ.
- Յակորի Աստուածոյն սաղմոս պիտի երգեմ:
- 10 Ու ամբարիշտներուն բոլոր Եղջիւրները պիտի փշրեմ,
Արգարին եղջիւրները պիտի բարձրանան:

ՍԱՂՄՈՍ ՀՅ

- Գլխաւոր երաժշտին, նկնօթի վրայ. Ասափի Սաղմոսը ու երգը:
- 1 Առատուած Յուրդոյի մէջ ճանցուած է.
- Անոր անունը Խարոյէլի մէջ մեծ է:
- 2 Ու անոր խարանը Սաղէմի մէջ է,
Եւ անոր ընակարանը Սիօնի մէջ է:
- 3 Այն տեղը Զարդեց աղեղին նեսերը,
Վահոնը, սուրբ ու պատերազմը: (Աէլա)
- 4 Դուն լուսափայլ ես,
Յափշտակութեան լեւներէն աւելի գերազանց ես
- 5 Սրաով զօրաւորները յափշտակուեցան,
Գուներնին քնացան.
- Ու բոլոր զօրեղ մարդիկը ձեռքերնին չդտան:
- 6 Ով Յակորի Աստուածը, քու յանդիմանելէդ
Կառքը ու ձին անզգայ պառկեցան:
- 7 Դուն, ով Տէր, դուն ահաւոր ես,
Եւ ով կոնս կոյնիլ քու առջեւդ՝ քու բարկու-
թեանդ ատենք:
- 8 Դուն երկինքէն լսել տուիր դատաստանը.

- երկիր վախցաւ ու լւեց,
 9 երգ Աստուած գատառատան ընելլու ելաւ,
 Որպէս զի երկիր բալոր *հեղեղը փրկէ: (Սէլաւ)
 10 Իրաւցընէ մարդուն բարկութիւնը քեզ պիտի գովէ:
 Ո- մասցած բարկութիւնը դուն պիտի զապես:
 11 Ուժա ըրէք ու կատարեցէք ձեր Տէր Աստուծոյն.
 Անոր բալրամիքը եղողներուն ամէնը
 Թող ընծաներ բերեն Աչաւորին:
 12 Ինք իշխաններուն հոգին պիտի կարէ.
 Ահաւոր է երկիր թագաւորներուն:

ՍՈՂՄՈՍ ՀԵ

- Կիսաւոր երաժշտին, իգիթուոնի վրայ. Ասափի Սաղմազ,
 1 Իմ ձայնն Աստուծոյ է, ու ես կ'աղաղակեմ.
 Իմ ձայնն Աստուծոյ է, ու ան ինձի պիտի լսէ:
 2 Իմ նեղութեանս օրը Տէրը փնտուեցի.
 Գիշերը տարածուած էր իմ ձեռքս ու չէր թուլար.
 Իմ անձս միմիթարուել չէր ուզել:
 3 ԶԱ.Աստուած յիշեցի ու անհանդիսա եղորյ.
 Խորհեցայ ու իմ հոգիս մարեցաւ: (Սէլաւ)
 4 Իմ աչքերս արթուն պահեցիր.
 Խռովիցայ ու չկրցայ խօսիլ:
 5 Միաքս բերի առաջուան օրերը,
 Հին ժամանակներուն տարիները:
 6 Գիշերսւան մէջ կը յիշեմ իմ երդս.
 Իմ սրտիս հետ կը խօսիմ:
 Ու իմ հոգիս ալ քննութիւն կ'ընէ:

*Կամ, իւղձերը

- 7 Արդեօք Տէրը յաւիտեան պիտի մերժէ⁹,
 Ու ալ բնաւ պիտի չչաճի¹⁰:
 8 Միթէ անոր ողարմութիւնը բոլորովին պակսեցա¹¹,
 Ո- էր խստամները վերջացաւ ազգէ մինչև ազգ:
 9 Միթէ Աստուած գմութիւնը ընելլ մոռցա¹²,
 Միթէ բարկութիւնով արգիլ¹³ իր ողարմութիւնը:
 (Սէլաւ)
 10 Ուսափ ըսի, Այս է իմ տկարութիւնս,
 *Բարձրելցյն աջ ձեռքին փոփոխութիւնը¹⁴:
 11 Տէրով գործերը պիտի յիշեմ.
 Յիրաւի քու առաջուան հրաշքներդ պիտի յիշեմ:
 12 Բոլոր գործերուդ վրայ պիտի խորհիմ,
 Ու քու ըրածներուդ վրայ պիտի մոռծեմ:
 13 Ով Աստուած, քու ձամբադ որբութեան մէջ է,
 Աստուծոյ պէս մեծ Աստուած ով կայ:
 14 Հրաշքներ ընող Աստուածը գնն ես.
 Քու զօրութիւնդ ժողովութիւնն մէջ ցուցուցիր:
 15 Քու բազուկովդ փրկեցիր քու ժողովուրդդ:
 Յակորի ու Յալուէփի որդիները: (Սէլաւ)
 16 Զուրերը քեզ տեսան, ով Աստուած,
 Զուրերը քեզ տեսան ու դողացին.
 Անդունդներն ալ սարսափեցան:
 17 Ամպերը ջաւը թափեցին.
 Երկինքները ձայն հանեցին.
 Կետերդ ալ գացին:
 18 Քու որոտմունքիդ ձայնը +երկինքէն էր.

*Կամ, Ամայն Բարձրելցյն աջ ձեռքին տարիները ուկ-
 +է յէլբ¹⁵
 †Կամ, մըրիկի մէջ

Փոյլակները լցոս առւին աշխարհի.
Երկիր սասանեցաւ ու գողաց,
19 Քու ճանապարհի ծովուն մէջ է,
Եւ քու ճամբար մեծ ջուրերուն մէջ է.
Ու քու շատիղներդ չեն գիտուիր:
20 Հօտի պէս քու ժողովուրդիդ առաջնորդեցիր
Մովսէսի ու Ահարոնի ձեռքովլ:

ՍԱՂՄՈՍ ՀԸ

Երգ Ասափայ:

- 1 Ով իմ ժողովուրդս, մոտիկ ըրէք իմ *օրէնքս,
Խոստրհեցուցէք ձեր ականջը իմ բերնիս խօսքերուն,
- 2 Առակով պիտի բանամ իմ բերան,
Ո- հին ժամանակի խրթնաբանութիւնները պիտի
խօսիմ,
- 3 Զորոնք լսեցինք ու զիտցանք,
Եւ մեր հոյրերը մեզի պատմեցին:
- 4 Մենք պիտի չպահէնք անսնց որդիներէն.
Կորք եկող աղդին պիտի պատմենք
Տէրոջը գովութիւնները ու անոր զօրութիւնը
Եւ անոր ըստած հրաշքները
- 5 Վատա զի վկայութիւն հաստատեց Յակոբի մէջ,
Ու օրէնք դրաւ Խարայէի մէջ,
Զորոնք պատուիրեց մեր հոյրերուն,
Որդիւ զի սորվեցնեն իրենց որդիներուն.
- 6 Որպէս զի գալու աղդը, ծնանելու աղաքը, առնետ իմա-
նոն,

*կո- վարժութիւն

- Ո- ելեն իրենց որդիներուն պատմեն.
- 7 Անոնք ու իրենց յայսը Աստուծոյ վրայ դնելով՝
Զմանան Աստուծոյ գործերը,
Հապա անոր պատուիրանքները պահէն.
- 8 Ու իրենց հայրերուն պէս
Կամոնկր ու ապատամբ ազգ մը չըլան,
Այսուեսք ազգ մը՝ որ իրենց սիրտը չեն շխտկած,
Ու իրենց հսկին հաւասարին՝ չեն Աստուծոյ:
9 Եփեմի որդիները, որնեւ պատապիներաւ աղեղնաւ.
ևորներ էին,
Պատերազմին օրը եւ դարձան.
- 10 Աստուծոյ ուխտը չպահէցին,
Ու անոր օրէնքին համեմատ չուզեցին քալել.
- 11 Ու մոռցան անոր գործերը,
Եւ անոր հրաշքները զըրոնք իրենց ցուցուցեր էր,
12 Անոնց հայրերուն առջև հրաշքներ ըրաւ,
Եղիպտոսի երկրին, Տայանիսի դաշտին, մէջ:
- 13 Ծովը պատուեց ու զանոնք անցուց,
Եւ ջուրերն ալ դէզի պէս կանգնեցուց:
14 Ու ցորեկը ամպով առաջնորդեց աննոց,
Եւ բոլը գիշերը կապկի լուսով:
- 15 Վէմերը պատուեց անապատին մէջ,
Ու խմցուց անանց իբր թէ մեծ անդունդէ մը:
16 Եւ առուներ հանեց վէմէն,
Ու ջուրերը գետերու պէս բղիքցուց:
- 17 Բոյց անոնք նորէն մեղքերնին աւելցուցին անոր
դէմ,
Ու բարկացուցին Բարձրեալը անապատին մէջ.
- 18 Եւ իրենց սիրտերուն մէջ զԱստուծած փորձեցին,
Կերակուր ուզելով իրենց անձերուն համար.

- 19 Եւ Աստուծոյ գէմ խօսեցան ու բաին,
Միթէ կարո՞ղ է Աստուծած
Անապատին մէջ սեղան պատրաստել .
- 20 Աչա վէմին զարկաւ, ու ջուրերը դուրս բղխեցին,
Ու աւուները վաղեցին.
Արգեօք հաց ալ կինա՞յ տալ .
Արգեօք միս կը պատրաստէ՞ իր ժողովուրդին հա-
մար .
- 21 Ուսափ Տերը լսեց ու բարկացաւ .
Եւ կրակ բարբոքեցաւ Յակովի մէջ,
Ու նաև բարկութիւն ելաւ Խորոյէի վրայ .
- 22 Վասն զի Աստուծոյ չհաւասացին,
Ու յոյսերնին անոր փրկութեանը վրայ չդրին .
- 23 Թէպէտ ինք վերէն հրաման ըրեր էր ամպերուն,
Ու երկինքի դաները բացեր էր,
- 24 Եւ կերակուրի համար անոնց վրայ մանանայ տեղա-
ցեր էր,
Ու երկինքի ցորենը տուեր էր անոնց,
25 *Մարդիկ հրեշտակներուն հացը կերան .
Կշտանալու չափ պաշար դրկեց անոնց:
- 26 Երկինքի մէջ արեւելեան հովը հանեց,
Եւ իր զօրութիւնովը հապաւային հովը բերաւ .
- 27 Եւ անոնց վրայ փոշիի պէս միս տեղաց,
Ու ծովու աւազն չափ թէ եւսւոր թռչուններ,
- 28 Եւ անոնց բանակին մէջ,
Անոնց վրաններուն չորս կողմը, իջեցուց:
- 29 Ու կերան և աղէկ կշտացան.

*Կամ, Անանց ամէն մէկը աղնուականներուն հացը կե-
րան

- Ու իրենց ցանկութիւնը իրենց առւաւ .
- 30 Իրենց ցանկութիւնէն զարկ չմնացին .
- Եւ քոնի որ իրենց կերակութիւնը իրենց բերանն էր,
31 Աստուծոյ բարկութիւնը անոնց վրայ բորբոքեցաւ,
Ու սպաննեց անոնց պարաբաներէն,
Ու գետինը զարկաւ Խարայէլի ընտիրները:
- 32 Այս բալըր բաներուն վրայ նորէն մեղանչեցին,
Ու չհաւատացին անոր հրաշքներուն:
- 33 Եւ ունայնութեան մէջ ապաւեց անոնց օրերը,
Եւ աչի մէջ՝ անոնց տարիները:
- 34 Երբ կը սպաններ զանոնք, զինք կը ինդրէին .
Ու ետ կը դառնային, և զԱստուծած Կանուկս կը փընտ-
ռէին .
- 35 Ու կը յիշէին որ Աստուծած իրենց Վէմն էր,
Եւ Բարձրեալ Աստուծածը իրենց Փրկիչն էր:
- 36 Սակայն իրենց բերնովը կեղծաւորութիւն կ'ընէին
անոր,
Ու իրենց լեզուովը սուտա կը խօսէին անոր.
- 37 Եւ իրենց սիրաք ուղիղ չէր անոր առջեւ,
Ու հաւատարիմ չէին անոր ուխտին մէջ:
- 38 Բայց ինք ողպրմած ըլլալով անանց անօրէնութիւնը
կը քառէր,
Ու չէր կորանցներ զանոնք .
- Եւ շատ անձամ՝ կը դարձնէր իր բարկութիւնը,
Ու չէր բորբոքեցներ իր բալըր սրտմութիւնը,
- 39 Վասն զի կը յիշէր թէ անոնք մարմին են,
Համի մը պէ՞՝ որ կ'երթայ ու ետ չդաւանար:
- 40 Քանի՛ անգամ զանիկա սրդողցուցին անսպասին
մէջ,
Ու բարկացուցին զանիկա անջուր տեղին մէջ,

- 41 Եւ գարձան՝ զԱսոսւած փորձեցին,
 Ու Խարայէլի Սուբբը նեղացուցին
 42 Զյշշեցին անսր ձեռքքը,
 Ու սպն օրը որ զիբենք թշնամիէն փրկեց.
 43 Եւ թէ ի՞նչպէս իր նշանները ըրաւ Եգիպտոսի մէջ,
 Ու իր հրաշքները Տայանիսի դաշտին մէջ.
 44 Ու արիւն գործուց անոնց գետերը
 Եւ անոնց առուները, որ չկըցան խմել.
 45 Շանաճանճներ զիկեց անոնց վրայ, սրմնք կերան զա-
 նոնք,
 Ու գորտեր սրմնք ապականեցին զանոնք.
 46 Ու անոնց բերքը գրուիճին տուաւ,
 Եւ անոնց վաստակը՝ մարափին.
 47 Անոնց սրթերը փճացուց կարկուտով,
 Ու անոնց ժանտալթզենիները խաշոր կարկուտով.
 48 Եւ անոնց անտառունները կարկուտաին մատնեց,
 Ու անոնց հօտերը կայծակին.
 49 Իր սասափկ բարկութիւնը զրկեց անոնց վրայ,
 Արտմուռթիւն ու բարկութիւն ու նեղութիւն,
 *Զար հրեշտակները զրկելով,
 50 Իր բարկութեանը ճամբայ բացաւ.
 Անոնց անձը մահուանէ չխնայեց,
 Հապա անոնց Դկեանքը ժանտախափ մատնեց.
 51 Ու ամէն անդբանիկը սպաննեց Եգիպտոսի մէջ,
 Եւ ժառջինեկները՝ Քամի վրաններուն մէջ.
 52 Ու իր ժողովուրդը ոչխարներու պէս հանեց,

*կամ, Զարիքներու

+կամ, անտառունները. Ել. թ. 3, 6:

:իշտ. զօրութեան սկիզբը

- Ու զանոնք հօտի պէս վարեց անապատին մէջ.
 53 Եւ անոնց ապահովութեամբ առաջնորդեց, ու չվախ-
 ցան.
 Խակ անոնց թշնամիները ծովը ծածկեց.
 54 Ու զանոնք տարաւ իր սրբութեան սահմանը,
 Ս.յն լեռը՝ զոր իր աջ ձեռքքը ստացեր էր.
 55 Ու անոնց առջեւէն ազգեր վանտեց,
 Եւ չափով ժառանգութիւն բաժնեց անոնց,
 Ու Խարայէլի ցեղերը անոնց վրաններուն մէջ բնակե-
 ցուց:
 56 Բայց անոնք փորձեցին ու սրբողցուցին Բարձրեալ
 Աստուածը,
 Ու չպահեցին անոր վկայութիւնները.
 57 Եւ իրենց հայրերուն պէս ետ գարձան ու նենդութիւն
 ըրին.
 Խարերս աղեղի պէս խոտորեցան,
 58 Վասն զի զանիկա սրբողցուցին իրենց բարձր տեղե-
 րով,
 Ու նախանձի շարժեցին զանիկա իրենց կուռքերով:
 59 Աստուած լսեց ու բարկացաւ,
 Եւ շատ անարդեց Խարայէլը.
 60 Ու Սելովի խորանը մերժեց,
 Ս.յն վրանը՝ զոր մարդոց մէջ կանգներ էր.
 61 Եւ *իր զօրութիւնը գերութեան մատնեց,
 Ու իր փառքը՝ թշնամիներուն ձեռքքը.
 62 Եւ իր ժաղավուրդը սուրի մատնեց.
 Ու իր ժառանգութեանը վրայ բարկացաւ,
 63 Անոր երիտասարդները կրակը կերաւ.

*կամ, անոր

- Ու անոր *աղջիկները սուգ չըրին՝;
 64 Անոր քահանաները պոտվ ինկան,
 Ու անոր որբեւարիները չացին։
 65 Բայց Տէրը արթնցաւ որպէս թէ քունէ՝
 Դիմիէ սթափած զօրտւոր մարդու մը պէս,
 66 Ու իր թշնամիները ետեւնուն զարկաւ.
 Յաւիտենական նախատինք առուաւ անոնց։
 67 Եւ Յովէկի վրանը մերժեց,
 Ու Եփրեմի ցեղը չընտրեց.
 68 Հապա Յուդայի ցեղը ընտրեց,
 Ու Սիօն լեռը՝ զօր սիրեց.
 69 Եւ իր սրբարանը շինեց բարձր բարձր պէս,
 Երկիր պէս զար յասիտեան հաստատեց։
 70 Ու իր Դաւիթ՝ ժառան ընտրեց,
 Եւ զանիկա ոչխարի փարավներէն առաւ.
 71 Ծիծ առողջ ունիոներուն ետեւէն երբաւ զանիկա,
 Որպէս զի իր Յակով ժողովուրդը
 Ու իր Խարոյէլ ժառանգութիւնը հալուէ։
 72 Անիկա ալ հովուեց զանոնք իր սրտին անմեղութիւնով,

ՍԱՂՄՈՍ ՀԹ

Սաղմոս Աստվածոյ

- 1 Ու Աստուած, հեթանոսները քու ժառանգութեանդ մէջ մտան,

Կամ, աղջիկներուն համար սուգ ընդ չկար

- Քու առըրդ առանորդ պղծեցին,
 Երուասղէմը աւերակներու գարձուցին,
 2 Քու ժառաներուգ դիերը
 Երկինքի թռչուններուն կերակուր տուին.
 Քու սուրբերուգ մարմինը՝ երկրի գաղաններուն։
 3 Անոնց արիւնը ջուրի պէս թափեցին Երուասղէմի բու-
 լորտիքը,
 Ու մէկը չկար որ զանան + թաղէր
 4 Մեր գրացիներան նախոտոինք եղանք,
 Մազը ու կատակ՝ մեր բոլորտիքը եղողներուն։
 5 Մինչեւ հըբ, ով Տէր. միշտ պիտի ըարկանան.
 Քու նախանձդ կրակի պէս պիտի բորբոքի։
 6 Թափիէ քու բարկութիւնդ այն աղդերուն վրայ՝
 Որոնք քեզ չեն ճանչնար,
 Ու այն թագաւորութիւններուն վրայ՝
 Որոնք քու անունդ չեն կանչեր,
 7 Վասն զի Յակովը կերան,
 Ու անոր բնակութիւնդ աւերակ գարձուցին։
 8 Մի յիշեր մեզի դէմ առաջուան անօրէնութիւն-
 ները,
 Թող շուտով հանին մեզի քու սղօրմութիւններդ,
 Վասն զի խիստ թշուաւացանք։
 9 Քու անուանդ փառքին համար
 Օգնէ մեզի, ով մեր փրկութեան Աստուածը,
 Եւ քու անուանդ համար փրկէ մեզ,
 Ու մեր մեղքերը քառւէ։
 10 Խնչու ըսեն հեթանոսները թէ Ուրէ է անոնց Աստ-
 ուածը,
 Թող յայտնուի հեթանոսներուն մէջ մեր աչքերուն
 առցւ

- Քու ծառաներուդ թափուած արիւնին վրէժը
 11 Կապուածին հատաշնկը քու առջեւդ թող ելէ,
 Քու զօրութեանդ մեծութիւնովը՝
 Մահուան մասանուածները ապլեցուր.
 12 Ու եօթնոպատիկ հատուցում ըրէ մեր դրացիներուն
 իրենց ծոյցն մէջ
 Այն իրենց նախատինքին չոխաբին, որով քեզ անար-
 գեցին, ալ Տէր,
 13 Բայց մենք, քու ժողովուրդդ ու քու արօտիդ ոչ-
 խարները,
 Յաւիտեան քեզ պիտի դովենք,
 Ո- քու փառքդ պիտի պատմենք աղդէ մինչև աղդ։

ՍԱՂՄՈՍ Զ

- Դվառար երաժշտին, Շօշանիմէտութէ վրայ. Ասափի Սաղմոսը,
 1 Ականջ գիր, ալ Խարուէլի Հովիւր,
 Որ Յովսէփի հօտի պէս կ'առաջնորդես.
 Դուն որ քերավիէից կը յ կը նատիս, պայծառացիր
 2 Եփրեմի ու Խենիափինի և Մանաէի առջե
 Արթնցուր քու զօրութիւնդ,
 Ու եկուր մեզ փրկելու։
 3 Ով Ասոտած, մեզ դարձուր,
 Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի փրկուինք,
 4 Ով Տէր, զօրաց Ասոտած,
 Մինչև ե՞րբ կը բարկանանա քու ժողովուրդիդ աղօթ-
 քին դէմ։
 5 Արտասաւքի հաց կը կերցնես անոնց,
 Ու մեծ չափով արտասաւք կը խմննես անոնց:
 6 Մեզ կախի պատճառ կ'ընես մեր դրացիներուն,

- Ու մեր թշնամիները մով ծաղը կ'ընեն իրենց մէջ։
 7 Ով զօրաց Ասոտած, մեզ դարձուր,
 Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի փրկուինք։
 8 Եղիպառուս որիդ մը փոխադրեցիր,
 Հեթանոսները վանտեցիր ու զանիկա տնկեցիր։
 9 Անոր առջեւէն րէւ պատրաստեցիր,
 Ու անոր արմատները հաստատեցիր.
 Եւ անիկա երկիրը լեցուց։
 10 Լեռները ծածկուեցան անոր հովանիսլը,
 Ու անոր ճիւղերը Ասոտածոյ եղեւիներուն ովո եղան։
 11 Իր ճիւղերը երկնցուց մինչև ծովը,
 Ու իր բարգոջները՝ մինչև Գետը։
 12 Խնչու փլցուցիր անոր ցանկերը,
 Որ ճամբայէն բոլոր անցնաղները զանիկա փրցնեն։
 13 Անտառին խոզը ապականեց զանիկա,
 Ու դաշտի գաղանները կերան զանիկա։
 14 Ով զօրաց Ասոտած, կ'աղաչէմ, դարձիր.
 Նայէ երկինքին ու տես,
 Ու սյցելու եղիր սյո որթին,
 15 Եւ սյո առնկին՝ զոր քու աջ ձեռքափդ անկեցիր։
 Ու որդիին՝ զոր քեզի համար հաստատեցիր։
 16 Կրակով պյուրած ու կտրուած է.
 Քու երեսի սատելէն կը կորնչն։
 17 Թողլքու ձեռքդ քու աջ ձեռքիդ մարդուն վրայ ըլլայ,
 Ո- մարդու որդիին վրայ՝ զոր քեզի համար հաստա-
 տեցիր։
 18 Մենք ալ ետ պիտի չդառնանք քեզմէ.
 Կենդանացուր մեզ, ու քու անունդ պիտի կանչենք։
 19 Ով Տէր, զօրաց Ասոտած, մեզ դարձուր,
 Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի փրկուինք։

ԱՍԼԱՄՈՍ ԶԱ.

- Քիմաւոր երաժշախն, կիթթիթի վրայ. Ասափի Սուլյան:
- 1 Օնծացէք Աստուծոյ առջե, որ մեր զօրութիւնն է,
Ուրախութեամբ աղաղակեցէք Յակոբի Աստուծոյն:
 - 2 Սաղման առէք ու թմբուկը բերէք,
Կաւա անսյա քնարը՝ ատելդին հետ:
 - 3 Փող հնչեցուցէք ամսու զիման,
Կաւա լուսնի լրման ատենը՝ մեր տօնին օրը.
 - 4 Վասն զի ասիկա Խարայէի կանոն մըն է,
Յակոբի Աստուծոյն հրամանն է:
 - 5 Ինք վկայութիւն դրաւ ասիկա Յովուէփի մէջ,
Եգիպտասի երկրին վրայ ելած ատենը.
Ուր լեզու մը լսեցի զոր չէի զիտեր:
 - 6 Անոր թիկունքը հեռացուցի բեռէն:
Անոր ձեռքերը հանգչեցան կողովէն:
 - 7 Նեղութեան մէջ կանչեցիր, ու քեզ քրկեցի.
Պատասխան տուի քեզի որոտման ծածկոցին մ.ջէն.
Փորձեցի քեզ Մերկապոյի ջուրին քոլ: (Աէլաւ)
 - 8 Լուէ, ով իմ ժողովուրդու, ու վկայեմ քեզի.
Ով Խարայէլ, եթէ ինձի մտիկ ընես,
 - 9 Օտար աստուծոծ չըլլայ քու մէջդ,
Ու օտար աստուծոյ երկրագութիւն ընես:
 - 10 Ես եմ քու Տէր Աստուծոդդ,
Որ հանեցի քեզ Եգիպտասի երկրէն.
Լոյն բաց քու բերանդ,
Ու զանիկա ես պիտի լեցնեմ:

*Կամ, Որոշուած Ասմանակն

- 11 Բայց իմ ժողովուրդու մտիկ չըրաւ իմ ձայնս,
Ու Խարայէլ զիս չուզէ:
- 12 Ուստի զաննկ իրենց սրտին կամուկութեանը թու-
զուցի,
Որովէ իրենց խորհուրդներուն համեմատ քալեն
Երանի՛ թէ իմ ժողովարդու ինծի մտիկ ընէր,
Ու Խարայէլ իմ ճամբաներուս մէջ քալէր,
14 Շուտով պիտի խոնարհեցնէի անոնց թշնամիները,
Ու ձեռքս պիտի գարձնէի անոնց նեղիչներուն վրոյ,
15 Տէրը աստողները կանոնարհութիւն պիտի ընէին՝ իրեն,
Ու անոնց ժամանակը յաւիտեան պիտի ըլլար:
16 Ան պիտի կերակրէր զաննկ պարարտ ցորենով.
Ու վէմէն Լուսը մեղրով քեզ պիտի կշուացնէի:

ԱՍԼԱՄՈՍ ԶԲ

Սաղման Ասափայ:

- 1 Աստուծած կայնած է Աստուծոյ ժողովքին մէջ,
+Աստուծներուն մէջ գատաստան կը տեսնէ:
2 Մինչև Ե՞րբ անիբաւութեամբ պիտի գատէք,
Ու ամբարիշաներուն աշատութիւն պիտի ընէք:
(Աէլաւ)
- 3 Դատաստան ըրէք աղքատին ու որբին,
Խեղճին ու չքաւարին իրաւունք ըլլէք:
4 Փրկեցէք աղքատը ու տնանկը,
Ամբարիշաներուն ձեռքէն ազատեցէք զաննէ:
5 Զեն իմանար ու միաք չեն առներ,

*Եբ. պիտի ստէին

+Կամ, Դատաստաներուն. Ել. իս. 6: իր. 28:

Խաւարի մէջ կը պարտին,
Երկրի բոլոր սիւները շարժեցան;
6 Ես ըսի թէ Դուք ասառւածներ էք,
Ու դուք տմէնդ Բարձրելցն որդիներն էք.
7 Բայց մորդոց պէս պիտի մեռնիք,
Ու իշխաններէն մէկուն պէս պիտի իշխաք:
8 Ելիք, ով Ասսուած, դատէ երկիրը,
Վասն զի բոլոր ազգերը դուն պիտի ժառանդես:

ՍԱՂՄՈՍ ԶԴ

Ասափի երգը ու Սաղմար:
1 Ու Ասսուած, լուռ մի կենար.
Անձոյն մի ըլլար, ու հանդարա մի կենար, ով Աստ.
ուած:
2 Վասն զի ահա քու թշնամիներդ կը գուռան,
Ու քեզ ասողները գլուխ կը վերցնեն.
3 Խորամանկութեան հնարք կը գտնեն քու ժողովուր.
դիդ դէմ:
Ու խորհուրդ կընեն քու պահպանածներուդ դէմ:
4 Կըսին թէ Եկեղ, կորսնցնենք զանոնք որպէս զի ազգ
քըլան,
Ու առ չյիշուի Խորսոյէլի անունը:
5 Վասն զի միաբան պատու խորհուրդ ըրին,
Ու քեզի դէմ դաշնակցութիւն ըրին
6 Եղումի վասնները ու Խամսյելացիք,
Մոլար ու Հագարացիք,
7 Գերազ ու Ամբոն և Ոմաղէկ,
Փղլատացիք՝ Տիւրոսի բնակիչներուն չետ:
8 Նաև Ասուր անոնց հետ միաբանեցաւ.

Ղովտի որդիներուն ձեռնատու եղան (Սէլա)
9 Ըրէ անոնց ինչպէս Մագիստր,
Ինչպէս Սիսարայի ու Յարինի ըքէ Կիսոն հեղեղասին
քով.
10 Անոնք Ենդովի մէջ ստակեցան,
Աղբի պէս եղան երկրի վրաց:
11 Անոնց իշխանները Օրէրի ու Զէրի պէս,
Ու անոնց բոլոր երեւելիները Զերէէի ու Սաղմանայի
պէս ըրէ.

12 Որոնք ըսին թէ Ասսուածոյ բնակարանները
Մենք ժառանգենք մեզի համար:
13 Ու իմ Ասսուածս, անոնք *մղեղի պէս,
Հովի առջե եղող շխզի պէս ըրէ:
14 Ինչպէս կոսկը անտառը կ'այրէ,
Ու բացը լեռները կը բռնկցնէ,
15 Այնպէս հալոծէ զանոնք քու միրիկալդ:
Ու խոռոշութեան մէջ ձգէ զանոնք քու փոթորիկալդ:
16 Լեցուր անոնց երեսները անարգանքալ,
Որպէս զի քու անունդ խնդրեն, ով Տէր:
17 Թողլ ամշնան ու խաւովին յաւիտեան,
Եւ ամօթալից ըլլան ու կորսուին.
18 Որպէս զի գիտնան թէ միայն դուն, որուն անունը
Եհնովա է,
Բարձրեալ ես բոլոր երկրի վրաց:

ՍԱՂՄՈՍ ԶԴ

Խիստոր երաժշտին, Կիթթէի վրաց. Կորիփ որդիներուն Սաղմար:
1 Ինչպէս սիրելի են քու բնակարաններդ,
*կամ, անիւի

- Ով զօրաց Տէր:
- 2 իմ անձս կը փափաքի ու նաև կը մարի
Տէրսը սրա չներուն համար.
իմ սիրսո ու մտրմին ցնծութեամբ կ'աղաղակեն
կենդանին Աստուծոյն:
- 3 ձեռձուկն ալ տուն գտաւ,
Ու ծիծեռնիկը իրեն բյոյն՝ իր ձագերը դնելու համար,
Քու սեղաններուդ քոյլ, ով զօրաց Տէր,
իմ Թագուարոս ու Աստուծածաւ
- 4 Երանի՛ անոնց որ քու տանդ մէջ կը բնակին.
Անոնք անդադար քեզ պիտի օրչնեն, (Սէլու)
- 5 Երանի՛ այն մարդոց սրանց զօրութիւնը քեզմէ է,
Ու իրենց սրանին մէջ քանդ ճամիսաները կան:
- 6 Արտասուաց համիսեն անցնելով աղբիւրի պես կ'ը-
նեն զանիկա.
- Առաջին անձեռն ալ *օրչնութիւնով պիտի ծածկէ
պահի՛ :
- 7 Անոնք զօրութենէ զօրութիւն կ'երթան,
Միւնչ որ Սիօնի մէջ Աստուծոյ սովոր երեւնան:
- 8 Ով Տէր, զօրաց Աստուծած, լու իմ աղօթքս,
Ականջ գեր, ավ Յակոբի Աստուծը, (Սէլու)
- 9 Ով մեր վաշանը Աստուծած, տես,
Ու քու օծեալիթ երեսը նսյէ:
- 10 Ու ասն զի քու սրա չներուդ մէջ
Մէկ օրը հազարէն աղէկ է.
Աւելի ընտրեցի իմ Աստուծոյս տանը շէմին վրաս
կենալ,
Քան թէ ամբարշտաց վրաններուն մէջ բնակիլ:

- 11 Քանզի Տէր Աստուծած արև ու վահան է.
Տէրը շնորհէ ու փառք պիտի տայ.
Բարութիւնն մը պիտի չպակսեցնէ:
Ուզզութեամի քալողներէն:
- 12 Ով զօրաց Տէր,
Երանելի է քեզի յոււացող մարդը:
- ### ՍՈՂՄՈՍ ԶԵ
- Գլխաւոր երաժշտին, Կորիփ որդիներուն Սաղմար,
- 1 Ով Տէր, գուն հաւնեցար քու երկրիդ,
Յակոբի գերութիւնը գարձուցիր.
- 2 Քու ժողովուրդիդ անօրէնութիւնը ներեցիր,
Անոնց բալոր մեղքերը ծած կեցիր: (Սէլու)
- 3 Հեւացուցիր քու բոլոր սրամտութիւնդ,
Ետ գարձար քու սասափկ բարկութենէդ:
- 4 *Մեզ գարձուր*, ով մեր փրկութեան Աստուծածը,
Եւ քու բարկութիւնդ որ մեր վրայ է՝ գագրեցուր:
- 5 Միթէ յաւիսեան պիտի բարկանա՞ն մեղի.
Քու բարկութիւնդ աղդէ մինչեւ աղդ պիտի երինցնե՞ս:
- 6 Միթէ ետ պիտի չդառնա՞ս ու մեզ կենդանացնես,
Որպէս զի քու ժողովուրդդ քեզմով ուրախ ըլլայ:
- 7 Ցուցուր մեզի, ով Տէր, քու ողբամութիւնդ,
Եւ քու փրկութիւնդ մեզի տուր:
- 8 Պիտի լսեմ ինչ որ կը խօսի Տէր Աստուծած.
Վասն զի խաղաղութիւն պիտի խօսի իր ժողովուրդին
ու իր սուրբերուն:
Ու յիմարութեան չդառնան անոնք:

- 9 Արդարեւ իր քրկութիւնը մօտ է իրմէ վախցաղներուն,
Որպէս զի մեր երկրին մէջ փառք լնակի:
- 10 Ողբարութիւնը ու ճշմարտութիւնը իրարու պատահ-
հեցան,
Արդարութիւնը ու խաղաղութիւնը էրոք համբա-
րեցին:
- 11 Ճշմարտութիւնը երկրէ պիտի բռւսնի,
Ու արդարութիւնը երկինքէ վար պիտի նսյի:
- 12 Նաև Տէրը բարութիւն պիտի տայ,
Ու մեր երկրը իր պատուզը պիտի տայ:
- 13 Արդարութիւնը անոր առջեւէն պիտի երթայ,
Ու *իր գնացքները ճամբու՝ պիտի դնէ:

ՍԱՂՄՈՍ 22

ԱԼԹՔ Դաւթի:

- 1 Ով Տէր, խոնարհեցուը քու ականջդ.
Պատախանառուը ինծի, վասն զի աղքատուտ տնանկ եմ:
- 2 Պահէ իմ անձս, վասն զի ես սուրբ եմ.
Ով իմ Աստուածս, քեզի յուսացող ծառադ դուն
քրկէ:
- 3 Ողբմէ ինծի, ով Տէր,
Վասն զի քեզի կը կանչեմ ամէն օր:
- 4 Ուրախացուը քու ծառոյիդ անձս,
Վասն զի դէպի քեզ կը վերցնեմ իմ անձս, ով Տէր:
- 5 Վասն զի դուն, ով Տէր, բարի ու ներող ես.
Եւ իիստ ողբմած՝ պյն ամէնուն որոնք քեզի կը
կանչեն:

*կամ, եղան իր քայլերուն ճամբուն մէջ

- 6 Ականջ գեր իմ աղօթքիս, ով Տէր,
Ու մակի լրէ իմ աղաւանքներուս ձայնը,
- 7 Նեղութեանս օրը քեզի կ'աղաղակեմ,
Վասն զի դուն ինծի կը պատասխանես:
- 8 Աստուածներուն մէջ քեզի նման մէկը չկս, ով
Տէր,
Եւ քու գործերուգ պէս չկոյ:
- 9 Բոլոր աղգերը, զըրոնք գուն ստեղծեցիր, պիտի գան
Ու երկարագութիւնն ընեն քու առջեւգ, ով Տէր,
Եւ քու անուանդ փառք պիտի տան:
- 10 Վասն զի դուն մեծ ու հրաշքներ գործող ես,
Աստուած միոյն դուն ես:
- 11 Ով Տէր, արվելեցուը ինծի քու ճամբադ,
Որպէս դի քու ճշմարտութեանդ մէջ քալեմ.
*Միացուը իմ սիրաս՝, որպէս զի քու անունէդ վախ-
նոյ:
- 12 Իմ բոլոր սրտովս քեզ պիտի գովեմ, ով Տէր, իմ
Աստուածս,
Ու յաւիտեան պիտի փառաւորեմ քու անունդ:
- 13 Վասն զի քու ողբմութիւնդ մեծ եղան իմ վրաս.
Ու դուն փրկեցիր իմ անձս խորսունկ դժոխվէն:
- 14 Ով Աստուած, ամբարտաւանները ինծի դէմ ելան,
Ու բոնուորներուն ժողովքը իմ անձս փնտաեցին,
Եւ քեզ իրենց առջեւ չդըին:
- 15 Բայց դուն, ով Տէր, գթած ու ողբմած Աստուած ես,
Երկայնամիտ ու ողբմութիւնով և ճշմարտութիւ-
նով առատ ես:
- 16 Նոյէ ինծի ու ողբմէ ինծի.

*կամ, իմ սիրաս պիտի ուլուխանայ

Քու զօրութիւնդ տուր քու ծառացիդ,
Ու քու աղախինդի որդին փրկէ:

17 Բարութեան նշոն մը ըրէ ինծի,
Որպէս զի զիս աստղները տեսնեն ու տմչնան.
Վասն զի դուն, ով Տէր, ինծի օգնեցիր ու զիս միի-
թարեցիր:

ՍԱՂՄՈՍ ԶԷ

Կորիք որդիներուն Սաղմոսը ու երգը:

- 1 Անոր հիմերը սուրբ լեռներուն վրայ են:
- 2 Տէրը Սիօնի դռները
Յակովի բոլոր բնակարսոներէն աւելի կը սիրէ:
- 3 Փառաւոր բաներ կը պատմուին քեզի համար,
Ով Աստուծոյ քաղաքը (Սէլաւ)
- 4 *Ուահաբը ու Բաբելոնը պիտի յիշեմ զիս Դանչցող-
ներուն մէջ.

Ահա Փղշտացւոց երկիրը ու Տիւրոս Քուշի հետ.
Ասոնք ու Հոն Ճնան:

- 5 Ու Սիօնի համար պիտի ըստուի թէ
Այս մարդը ու այն մարդը հոն Ճնաւ.
Եւ Յարձեալլ ինք պիտի հասասատէ զանիկա:
- 6 Տէրը աղդերը դրած ժամանակը պիտի ըսէ
Թէ Ասիկս հոն Ճնաւ: (Սէլաւ)
- 7 Ու երգեցողները, նոյնպէս ու Դարնդահարները պէտէ
ըսէն,

Ի՞ր բոլոր աղբիւրներս քեզմէ են:

*Այսինքն, Եղիպտոսը
†կամ, Ճանչցողներս պէս
‡կամ, պար բոնողները

ՍԱՂՄՈՍ ԶԷ

Կորիք որդիներուն երգը ու Սաղմոսը. Գլխաւոր երաժշակին,
Մահալաթ-Եւանօթի վրայ. Եման Եղուհացիի երգը:

- 1 Պէտ Տէր, իմ փրկութեանս Աստուածը,
Յորեկը կ'աղաղակեմ ու գեշերը քու առջեւու եմ:
- 2 Իմ աղօթքս քու առջեւու թող ելլէ.
Խոնարհեցուք քու ականջդ իմ՝ աղաղակիս:
- 3 Վասն զի իմ անձո չարկիներով լեցուեցաւ,
Ու իմ կեանքս գերեզմանին մծաեցաւ:
Գուբը իջնաղներուն հետ սեպուեցայ.
Ոյժ չանեցոյ մարդու մը պէս եղայ:
- 5 Մեռելներուն մէջ լինկած Եմ
Գերեզմանի մէջ պառկող մեռցուածներուն պէս,
Զօրնեկ ա՛լ չես յիշեր,
Ու քու ձեռքեդ մերժուած են:
- 6 Գուն զիս ամէնէն խորունկ գուբին մէջ դրեր,
Խուարացին անդունդներուն մէջ:
7 Քու պրամուռթիւնդ ծանրացաւ իմ վրաս,
Եւ քու բոլոր ալիքներովդ զիս չարչարեցիր: (Սէլաւ)
- 8 Իմ ճանչուորներս ինձ մէ հեռացուեցիր,
Զիս գարշեկի ըրեր աննոց առջեւ.
Գոցուեցայ ու գուբս չեմ ելլեր:
- 9 Տառապանեկն աչքերս վաստեցան,
Ամէն օր քեզի աղաղակեցի, ով Տէր,
Զեռքերս քեզի երկնցուցին.
10 Միթէ մեռելներուն հրաշք պիտի ընես.
Միթէ մեռածներուը պիտի ելլեն ու քեզ գովեն,
(Սէլաւ)

142

ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ

- 11 Միթէ կը պատմուի՞ քու սղորմութիւնդ գերեզման-նին մէջ,
Ու քու ճշմարտութիւնդ՝ կորստեան մէջ:
12 Միթէ կը ճանչցուի՞ն քու հրաշքներդ խաւարին մէջ,
Ու քու արդարութիւնդ՝ մուացման երկին մէջ:
13 Բայց ես, ով Տէր, քեզի աղաղակցի,
Ու իմ ազօթքս առաջուանց քու առջեւդ պիտի ելլէ:
14 Ով Տէր, ինչո՞ւ իմ անձա կը մերժես,
Ու քու երեսդ կը ծածկես ինձմէ:
15 Ես իեղձեմու մանկութենէսի վեր մեռնելու վրայ եմ:
Քու աչերդ քաշեցի ու խռովեցայ.
16 Քու սրտմութիւնդ իմ վրաս իջաւ,
Ես քու զարչուրանքներդ զիս կորսնցուցին:
17 Ա.մէն օր ջուրի պէս զիս պատեցին,
Մէկտեղ չորս կողմն առին:
18 Հեռացուցիր ինձմէ սիրելին ու բարեկամը,
Իմ ճանչուորներս խաւարի մեջ են:

ՍԱՂՄՈՍ ԶԹ

Եթան Եղբահացիի երդը:

- 1 Տէրոջը սղորմութիւնները յաւիտեան պիտի երգեմ:
Քուն հաւատարմութիւնդ իմ բերնով աղգէ աղգ
պիտի պատմեմ:
2 Վասն զի ըսի թէ Ողորմութիւնը յաւիտեան պիտի
շինուի.
Երկնիփի մէջ պիտի հասասան քու հաւատարմու-
թիւնդ:
3 Ես իմ ընտրեալիս հետ սւխա ըրի,
Իմ Դաւիթ ծառայիս երդում ըրի, ըսկը.

- 4 Քու սերունդդ յաւիտեան պիտի հասասանեմ,
Եւ աղգէ աղգ պիտի շինեմ քու աթուգ: (Աէլու)
5 Երկնիփ աղ կը փաստուրէ քու հրաշքներդ, ով Տէր,
Եւ քու հաւատարմութիւնդ՝ սուրբերուն ժողովքին
մէջ:
6 Վասն զի ով կայ երկնիփի մէջ Տէրոջը հաւատոր,
Ու *Հզօրաց սրբիներուն մէջ աղ կը նմանի Տէրոջը
7 Աստուած խիստ զարհուրելի է սուրբերուն ժողովքին
մէջ,
Եւ աշաւոր է ամեն իր բոլորակը եղողներուն,
8 Ով Տէր, զօրաց Աստուած, ով է քեզի պէս հզօր Տէր,
Եւ քու հաւատարմութիւնդ քու բոլորակը է:
9 Դուն կը տիրես ծովան հպարտութեանը վրայ,
Երբ անոր ալիքները կը բարձրանան, դուն կը հան-
գարաեցնես զանոնք:
10 Դուն ճնշեցիր Ռահչաբը խոցուածի պէս.
Քու զօրութեանդ բազուկովը ցրուեցիր քու թշնա-
միներդ:
11 Քուկդ է երկնիփ ու քուկդ է երկիր.
Դուն հիմնեցիր աշխարհը ու անոր լիութիւնը:
12 Հիւսիսը ու հարաւը գուն ստեղծեցիր.
Թարօր ու Հերմնն քու անանավդ կը յնձան:
13 Դուն զօրաւոր բազուկ ունիս.
Քու ձեռքդ ուժով է, քու աշ ձեռքդ բարձրա-
ցած է:
14 Արդարութիւնը ու իրաւունքը քու աթուիդ հիմն են,
Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը քու երեսիդ առ-
ջեւեն կ'երթան:

- 15 Երանի՛ պյն ժողովուրդին որ գիտեն *ազգարարու-
թեան կազբառա՞ն՝ ձայնը.
Ու Տէր, աննամք քու երեսիդ լուսովը պիտի քողենն
16 Քու անունավդ ամէն օր պիտի ցնծան,
Ու քու արդարաւթիւնովդ պիտի բարձրանայ մեր եղ-
շերը:
17 Վասն զի գուն ես անոնց զօրութեանը փառքը,
Եւ քու հաճութիւնովդ պիտի բարձրանայ մեր եղ-
շերը:
18 Վասն զի մեր վահանը Տէրոջն է,
Ու մեր թագաւորը Խորսչէլի Սուբբինն է:
19 Այն ժամանակ տեսիլքովլ խօսեցար քու առըբիդ
հետ,
Ու ըսիր, Օգնութիւն դրի զօրաւորին վրայ,
Ժաղովուրդէն ընարսաւածը բարձրացուցի:
20 Իմ ծառաս Դաւեիթը գտայ,
Իմ սուրբ բւզովս օճեցի զանիկա.
21 Որու հետ իմ ձեռքս պիտի հաստատուի,
Ու իմ բազուկս պիտի զօրացնէ զանիկա:
22 Թշնամին պիտի չչարսատհարէ զանիկա,
Ու անօրէնսութեան որդին պիտի չչարչարէ զանիկա:
23 Եւ անոր թշնամիները իր առջեւէն պիտի կատրեմ,
Ու զանիկա տասողները պիտի զարնեմ:
24 Եւ իմ հաւատարմութիւնս ու ողբրմութիւնս անոր
հետ պիտի ըլլոյ.
Ու անոր եղջեւը իմ անունովս պիտի բարձրանայ:
25 Անոր ձեռքը ծովուն մէջ պիտի դնեմ,
Ու անոր աջ ձեռքը գետերուն մէջ:
26 Անիկա ինծի պիտի կանչէ թէ Դուն ես իմ Հայրս,

- իմ Աստուածոս ու իմ գրկութեանս Վէմը
27 Ու ես զանիկա անդրանիկ պիտի ընեմ՝
Երկրի թագաւորներէն աւելի բարձր:
28 Իմ ողբրմութիւնս յաւիտեան պիտի պահեմ անոր
համար,
Ու իմ ուժաս անոր չետ հաւատարիմ՝ պիտի ըլլայ:
29 Եւ անոր սերունդը յաւիտեան,
Ու անոր աթուուը երկինքի օրերուն չափ պիտի ընեմ:
30 Եթէ անոր որդիները իմ օրէնքս թողան,
Ու իմ իրաւունքներովս չքալեն,
31 Եթէ իմ Կանոններս անարդէն,
Ու իմ պաստուիրանքներս չպահեն,
32 Ես ալ գաւաղանով պիտի պատժեմ՝ անոնց յան-
ցանքը,
Ու հարսւածներով՝ անոնց անօրէնութիւնը:
33 Բայց իմ ողբրմութիւնս պիտի չկարեմ անկէ,
Ու իմ հաւատարմութիւնս սսւա պիտի չչանեմ:
34 Իմ սեխտո պիտի չանարդեմ,
Ու շրմունքներէս ելածը պիտի չփոխեմ:
35 Անգամ՝ մը երգում՝ ըրի իմ որբութիւնովս,
Որ սուտ պիտի չըսեմ Դաւեիթի.
36 Անոր սերունդը յաւիտեան պիտի մնայ,
Ու անոր աթուուը իմ առջեւս՝ արեգակին չափ.
37 Լաւանին պէս յաւիտեան պիտի հաստատուի,
Ու երկնիկի մէջ հաւատարիմ վկայի պէս: (Սէլա:)
38 Բայց դուն երեսէ ձգեցիր ու անարդեցիր,
Քու օժեապիդ բարկացար,
39 Քու ծառապիդ սեխտո մերժեցիր,
Անոր թագը գետին հաւատար պղծեցիր,
40 Անոր բալը պարիսպները փլցուցիր,

Անոր բերդերը աւերակ ըրիր:

41 Բոլոր ճամբայէն անցնողները կողոպտեցին զանիկա.
Նսխատինք եղաւ իր դրացիներուն,

42 Անոր նեղիչներուն աջ ձեռքը բարձրացուցիր,
Անոր բոլոր թշնամիները ուրախացուցիր:

43 Անոր սուրբն բերանն ալ գարձուցիր,
Ու զինք պատերազմի մէջ չկայնեցուցիր:

44 Անոր փառքը գագրեցուցիր,
Ու անոր ամժուը գեախնը զարկիր:

45 Անոր երիտասարդութեան օրերը կարծեցուցիր.
Զանիկա ամօթով ծածկեցիր: (Աէլաւ)

46 Մինչև ի՞ր ավ Տէր. քու անձում միշտ պիտի պահէս.
Քու սրտմութիւնդ կրակի պէս պիտի բորբոքի:

47 Յիշէ իմ կեանքին ինչ ըլլալը.
Ինչ ունայնութեան համար ստեղծեցիր մարդոց բու-
լը որդիները:

48 Ո՞վ է այն մարդը որ տպրի ու մահ չտեսնէ,
Եւ իր անձը դժոխքին ձեռքէն փրկէ: (Աէլաւ)

49 Ով Տէր, ո՞ւր են քու աւաշուան սղբութիւններդ,
Զորնե՛ երդում ըրիր Դաւիթի քու հաւատարմու-
թիւնովդ:

50 Ով Տէր, միշէ քու ծառաներուգ նսխատինքը,
Զոր իմ ծոցիս մէջ կը կրեմ բոլոր մեծ ազգերէն.

51 Որով քու թշնամիներդ անարդեցին, ով Տէր,
Որով քու օծեալիդ քայլերը անարդեցին:

52 Օրհնեալ ըլլալ Տէրը յաւիտեան:
Ամէն ու ամէն:

ՍԱՂՄՈՍ Դ

Աստուծոյ մարդուն Մովսէսի աշօթքը,

1 Ով Տէր, դուն մեզի ապաւէն եղար ազգէ մինչև
ազգ:

2 Լեռներուն ծնանելէն առաջ
Ու երկրի և աշխարհի ստեղծուելէն առաջ՝
Յաւիտենից մինչև յաւիտեանն դուն ես Աստուծ:

3 Դուն մարդը փոշի կը գալձնես,
Ու կ'ըսես, Ետ գարձէք, մարդոց որդիներ:

4 Վասն զի հազար տարին քու առջեւդ երէկուան օրին
պէս է որ անցաւ,
Կամ գիշերուան պահու մը պէս:

5 Կ'ընկղմես զանոնք, երազի ոկո կ'ըլլան.
Աւտուանց կանանչացած խոտի պէս կ'ըլլան.

6 Աւտուանց կը ծաղկի ու կը կանանչանայ,
Իրիկունը կը կարուի ու կը չսրնայ:

7 Վասն զի քու բարկութենէդ կը մաշինք,
Եւ քու սրտմութենէդ կը խուսլինք:

8 Մեր անօրինութիւնները քու սուշեւդ,
 13 Իմ շրմունքներովս պատմեցի
 Քու բերնիդ բոլոր դատաստանները
 14 Քու վկայութիւններուդ ճամբովը ուրախացայ,
 Որպէս թէ ամէն կերպ հարստութիւնով:
 15 Քու հրամաններուդ վրայով պիտի մասձեմ,

- Եւ քու ճամբաններդ պիտի դիտեմ:
 16 Քու կանոններավդ պիտի ուրախանամ:
 Ռ- քու խօսքդ պիտի չմոռնամ:

Կ Ա Մ Է Լ.

- 17 Բարութիւն ըսէ քու ծառայիրդ,
 Որդէս զի ապրիմ ու քու խօսքդ պահեմ:
 18 Բաց իմ աչքերս,
 Որպէս զի քու օրէնքէդ հրաշքներ աեսնեմ:
 19 Պանդուխտ եմ ես երկլի վրայ.
 Մի ծածկեր ինծմէ քու պատուիրանքներդ:
 20 Իմ անձս կը նեղալի
 Ամէն ժամանակ քու դատաստաններուդ ցանհու.
 Նորին:
 21 Դուն սաստեցիր անիծեալ ամբարաւաւանները,
 Քու պատուիրանքներէդ մնլորդները:
 22 Նախատինիքը ու անարգանքը վերցուր ինծմէ,
 Վասն զի քու վկայութիւններգ պահեցի:
 23 Իշխաններ ալ կը նաստիին ու ինծի դէմ կը խօսէին,
 Բայց քու ծառադ քու կանոններուդ վրայով կը
 մտածէր:
 24 Քու վկայութիւններգ ալ իմ ուրախաւթիւնս
 Ռ- իմ խորհրդականներս են:

Տ Ա Լ Է Թ.

- 25 Իմ անձս հողին կը փակչի.
 Կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ
 26 Իմ ճամբաններս պատմեցի, ու գուն ինծի պատմաւ,
 խան առափր.

- Սորվեցուր ինծի քու կանոններդ։
 27 Քու հրամաններուդ ճամբան ինծի իմացուր,
 Եւ քու պանչելիքներուդ վրայովլ պիտի *մտածեմ։
 28 Եմ անձս արտմութենէն կը հաղի.
 Հաստատէ զիս քու խօսքիդ համեմատ
 29 Սոռութեան ճամբան հեռացուր ինծմէ,
 Ու քու օրէնքդ շնորհէ ինծի։
 30 Ճշմարտութեան ճամբան ընտրեցի,
 Եւ քու գատասատաններդ էմ ու զեւս դրի։
 31 Քու վկայութիւններուդ յարեցայ.
 Ով Տէր, զիս մի ամցներ։
 32 Քու պատուիրանքներուդ ճամբուն մէջ պիտի լազեմ։
 Վասն զի դուն իմ սիրտս պիտի լայնցնես

ՀԵ

- 33 Ով Տէր, սորվեցուր ինծի քու կանոնաներուդ ճամբան,
 Ու մինչև վերջը պիտի պահեմ զանիկան
 34 Իմաստուն ըրեւ զիս, սրակէս զի քու օրէնքդ պահեմ,
 Ու բոլոր սրտով զանիկան ի դորձ դնեմ։
 35 Առաջնորդէ ինծի քու պատուիրանքներուդ շատիդին
 մէջ,
 Վասն զի անոր հաւնեցայ։
 36 Եմ սիրտս քու վկայութիւններուդ յօժարեցուր,
 Ու ոչ թէ տգահութեանն
 37 Ետ գարձուր իմ աչքերս, որպէս զի սնոտի բան չտես-
 նեն.
 Եւ զիս քու ճամբուդ մէջ կենդանացուր
 38 Հաստատէ քու խօսք

- Քեզմէ վախցող ծառայիդ վրայ։
 39 Ետ գարձուր ինծմէ իմ նախատինկս, որմէ կը վախ-
 նամ՝,
 Վասն զի քու գատասատաններդ բարի են։
 40 Ոչ յանկացայ քու հրամաններուդ
 Քու արդարութեանդ մէջ կենդանացուր զիս
 Վ. Ա. Վ.
- 41 Ով Տէր, թող իմ վրաս գայ քու ողորմութիւնդ,
 Եւ քու փրկութիւնդ քու խօսքիդ համեմատ
 42 Ու ես խօսքով պատասխան պիտի տամ՝ զիս նախա-
 տաղինն,
 Վասն զի քու խօսքիդ յօւսացած եմ։
 43 Եւ ճշմարտութեան խօսքը բնաւ մի հեռացներ իմ
 բերնէս,
 Վասն զի քու գատասատաններուդ յօւսացած եմ։
 44 Ու քու օրէնքդ միշտ պիտի պահէմ
 Յաւիտեանս յաւիտենից.
 45 Եւ լայնարձուկ ունի մէջ պիտի քալեմ,
 Քանզի քու հրամաններդ խնդրեցի։
 46 Ու քու վկայութիւններդ թագաւորներուն տռջեւ
 պիտի խօսիմ,
 Եւ պիտի չսահնամ՝
 47 Ու պիտի ուրախանամ քու պատուիրանքներովդ
 Զօրոնք սիրեցի։
 48 Եւ ձեռքերս դէպի քու պատուիրանքներդ պիտի
 վերցնեմ՝ զօրոնք սիրեցի,
 Ու քու կանոններուդ վրայովլ պիտի մտածեմ։

Զ Ա Յ Ի Ն

- 49 Յիշե քու ծառայիդ եղած խօսքը,
Որուն վրայ ինձի յուսալ առւիր:
- 50 Իմ նեղութեանս մէջ միմիթարութիւնս այս է,
Վասն զի քու խօսքդ զիս կենդանացուց:
- 51 Ամբարտաւանները իխտա շատ ծաղը ըրին զիս,
Բայց ես քու օրէնքէդ չխոտորեցայ:
- 52 Ոլ Տէր, քու առաջուան դատաստաններդ յիշեցի,
Ու միմիթարուեցայ:
- 53 Սոսկումը զիս բռնեց այն ամբարիշտներուն համար՝
Որոնք քու օրէնքդ կը թողուն:
- 54 Քու կանոններդ ինձի երգեր եղան
Իմ պանդխտութեանս տանը մէջ:
- 55 Ոլ Տէր, գիշերը քու անունդ յիշեցի,
Ու քու օրէնքդ պահեցի:
- 56 Այս եղաւ ինձի,
Վասն զի քու հրամաններդ կը պահեմ:

Խ Ե Թ

- 57 Դառն իմ բաժինս էս, ոլ Տէր.
Ըսի որ քու խօսքերդ պահեմ:
- 58 Բոլոր սրտալ քու երեսդ ինդրեցի.
Ողորմէ ինձի քու խօսքիդ համեմատ:
- 59 Իմ ճամբաններուս վրայուլ մնածեցի,
Եւ իմ սոփերս քու վկայութիւններուդ դարձուցի:
- 60 Քու պատուիրաններդ պահելու
Արտորացի ու չուշացայ:

- 61 Ամբարիշտներուն *խումբերը զիս պատեցին,
Բայց ես քու օրէնքդ չմնացայ:
- 62 Կէս գիշերին կ'ելլեմ քեզի գոյսութիւն մատուցանել
Քու արդար դատաստաններուդ համար:
- 63 Ես ընկեր եղայ այն ամէնուն սրոնք քեզմէ կը վախ-
նան,
Ու քու հրամաններդ կը պահեն:
64 Ոլ Տէր, երկիր լեցուն է քու ողբրմութիւնովդ.
Սորվեցուր ինձի քու կանոններդ:

Դ Ե Թ

- 65 Բարութիւն ըրիր քու ծառայիդ, ոլ Տէր,
Քու խօսքիդ համեմատ:
- 66 Բարի իմաստութիւն ու գիտութիւն սորվեցուր ինձի,
Վասն զի քու պատուիրաններուդ հաւատացի:
- 67 Քանի որ վշտացած չէն՝ կը սիսալէի,
Բայց հիմա քու խօսքդ կը պահեմ:
- 68 Բարի ես գուն ու բարերար,
Սորվեցուր ինձի քու կանոններդ:
- 69 Ամբարտաւանները սաստիթիւն հնարեցին ինձի դէմ,
Բայց ես բոլոր սրտով քու հրամաններդ պիտի պահեմ:
- 70 Անոնց սիրավ պէս պարարտացաւ,
Բայց ես քու օրէնքովդ ուրախացայ:
- 71 Աղէկ եղաւ ինձի որ վշտացայ,
Որպէս զի քու կանոններդ սորվիմ:
- 72 Ինձի հազարաւոր սոկիէ ու արծաթէ
Աւելի աղէկ է քու բերնիդ օրէնքը:

Ե Օ Տ

- 73 Զիս քու ձեռքերդ ըրին ու ստեղծեցին.
Խմաստուն ըրէ զիս, որպէս զի քու պատուիրանքներդ
սարվիմ:
- 74 Քեզմէ վախցողները զիս պիտի տեսնեն և ուրախանան,
Վասն զի քու խօսքիդ յաւացայ:
- 75 Գիտեմ, ով Տէր, որ քու գատաստաններդ արդա-
րութիւնալ են,
Ու իրաւունքով զիս վշտացուցիր:
- 76 Հիմա թող քու ողբրմութիւնդ ինձի մսիթարութիւն
ըլլայ՝
Քու ծառայիդ բառած խօսքիդ համեմատ:
- 77 Թող քու գթութիւններդ իմ վրաս գան, որպէս զի
սապիմ,
Վասն զի քու օրէնքդ իմ ուրախութիւնս է:
- 78 Ամբարտաւանները պիտի ամնան,
Վասն զի առանց պատճառի անիրաւութիւն ըրին
ինձի գէմ։
Բայց ես քու հրամաններուդ զրոյ պիտի մտածեմ։
- 79 Թող ինձի դառնան քեզմէ վախցողները
Եւ քու վկայութիւններդ ճանչցողները
- 80 Թող իմ սիրոս կատարեալ ըլլայ՝ քու կանոններուդ
մէջ,
Ոյնպէս որ չամչնամ:

Գ Ա Ֆ

- 81 Իմ անձո քու փրկութեանդ *կը կարօտի,

*Եքէ. կը մաշի

- Ու ես քու խօսքիդ կը յուսամ՝
82 Իմ աչքերս քու խօսքիդ համար կը նուաղին,
Լուելով թէ Երբ պիտի մսիթարես զիս
83 Վասն զի ես ծուխի մէջ որուած տիկի պէս եղայ,
Բայց քու կանոններդ չմնոցայ:
- 84 Ո՞ր ըշափ են քու ծառայիդ օրէրը.
Զիս հալածողներուն Երբ դատաստան պիտի ընեն
85 Ամբարտաւանները փառեցին ինձի համար,
Որ քու օրէնքիդ պէս չեն։
- 86 Քու բոլոր պատուիրանքներդ ճշմարիս են.
Զուր տեղ զիս կը հալածեն, օգնէ ինձին
- 87 Քիչ մնաց որ զիս կորսնցնէին երկրի մէջ,
Բայց ես քու հրամաններդ չթողուցին
88 Քու ողբրմութեանդ համեմատ ինդանացուը զիս,
Եւ քու բերնիդ վկայութիւնը պիտի պահեմ։

Լ Ա Մ Է Տ

- 89 Ով Տէր, քու խօսքդ
Յաւիտեան հաստատ է երկինքի մէջ։
90 Քու հաւասարմութիւնդ աղդէ մինչեւ աղդ կը մնայ.
Դուռն հաստատեցիր երկերը ու կը կենայ։
91 Քու հրամաններուդ պէս կը կենան ճնշւ սյոր,
Վասն զի բոլորը քու ծառաններդ են։
92 Եթէ քու օրէնքդ իմ ուրախութիւնս շըլլար,
Այն ասեն կարստած պիտի ըլլայի իմ արտանութեանս
մէջ։
93 Յաւիտեան պիտի չմնանամ քու հրամաններդ,
Փանզի անոնցմով կենդանացուցիր զիս
94 Ես քուկդ եմ, փրկէ զիս.
Վասն զի քու հրամաններդ փնտուցիւ։

- 95 Ամբարիշտաները ինծի սպասեցին, որպէս զի զիս կոր-
սընցնեն,
Բայց ես քու վկայութիւններդ միտքս պիտի բերե՛մ:
- 96 Ամէն կատարելութեան վերջը տեսայ.
Քու պատուիրանքդ շատ ընդարձակ է:

Մ Է Մ

- 97 Ո՞րչափ կը սիրեմ քու օրէնքդ.
Ս.յն է ամէն օր իմ մատածութիւնս
98 Քու պատուիրանքներդ զիս իմ՝ թշնամիներէս ի.հաս-
տուն ըրին,
Քանզի անոնք միշտ իմ քովս են
99 Իմ բոլոր ուսուցիչներէս աւելի հանճարեղ եղայ:
Վասն զի քու վկայութիւններդ իմ մատածու-
թիւնս են:
100 Ծերերէն աւելի իմաստուն եղայ,
Վասն զի քու հրամաններդ պահեցի:
101 Ա.մ.ն գէշ ճամբայէ իմ ոսքերս ետ քաշեցի,
Որպէս զի քու խօսքդ պահեմ:
102 Քու դատաստաններէդ շխատորեցայ,
Վասն զի գուն սորվեցուցիր ինծի:
103 Ո՞րչափ քաղցր է քու խօսքդ իմ քիմիսա.
Մեղքէն աելի անառ է իմ ըիրնիս
104 Քու հրամաններովդ իմաստուն եղայ,
Անոր համար ստութեան ամէն ճամբան ատեցի.

Ն Ո Ւ Ն

- 105 Քու խօսքդ իմ ոտքերուս ճքագ է.
Ու իմ շատիզներուս լցու:
106 Երդում ըրի ու պիտի կատարեմ,

- Որպէս զի քու արդար դատաստաններդ պահեմ:
107 Հասա նեղացայ.
Ով Տէր, կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ
108 Հմամ իմ բերնիս կամաւոր զոհերը ընդունէ, ով
Տէր,
Ու քու դատաստաններդ սորվեցուր ինծի:
109 Իմ հոգիս ամէն ժամանակ ափիս մէջ է,
Բայց քու օրէնքդ չեմ մոռնարւ
110 Ամենգիշտաները որո՞գայթ լարեցին ինծի համար,
Բայց ես քու հրամաններէդ չմնլորեցայ:
111 Քու վկայութիւններդ յաւիտեան ինծի ժառան,
Գութիւն աւի,
Վասն զի անոնք իմ սրտիս ցնծութիւնն են:
112 Խոնարհցուցի իմ սիրսա, որպէս զի քու կանոններդ
կատարեմ
Յաւիտեան մինչև վերջը:
- Ս Ա Մ Է Խ
- 113 Երկմիտաները ատեցի,
Բայց քու օրէնքդ սիրեցի:
114 Իմ ապաւէնս ու ասպարս գուն ես,
Քու խօսքիդ յուսացայ:
115 Ես քաշուեցէք ինձմէ, ով չարագործներ,
Վասն զի ես իմ Աստուծոյս պատուիրանքները պիտի
պահեմ:
116 Պահպանէ զիս քու խօսքիդ համեմատ, որպէս զի
ապրիմ.
Եւ զիս իմ յայսէս մի ամշներ:
117 Զօրացուր զիս որպէս զի ապրիմ,
Ու միշտ քու կանոններուդ ուշադրութիւն ընեմ:

- 118 Անարգեցիր այն ամէնը որոնք քու կանոններէդ իսու-
առեցան,
- Գանձի անոնց նենգութիւնը սուտ է:
- 119 Դուն հերունէրու կը կըսնէք կը համարիս՝ երկիր ըս-
լըր ամիսարիշտները.
- Անոր համար ես քու վկայութիւններդ կը սիրեմ:
- 120 Իմ մարմինս քու աչէդ դողաց,
Ու ես քու դասաստաններէդ վախցոյ:

Ա 8 Ի Ն

- 121 Իրաւունք ու արդարութիւն ըրի.
Զիս իմ նեղիներուս մի մասներս
- 122 Քու ծառայիդ բարութեան համար երաշխաւոր
եղիր.
- Ամերասաւոնները չարստահարեն զիս:
- 123 Իմ աչքերս նուաղեցան քու փրկութեանդ համար
Ու քու արդարութեանդ խօսքին համար:
- 124 Ըրէ քու ծառայիդ քու ողբրմութեանդ համեմատ,
Եւ քու կանոններդ սորվեցուր ինծիր
- 125 Ես քու ծառադ եմ, իմաստան ըրէ զիս,
Որպէս զի քու վկայութիւններդ ճանչնամ:
- 126 Տէրոջը բան տեսնելու ժամանակն է,
Վառ զի քու օրէնքդ խափանեցին:
- 127 Անոր համար քու պատուիրանկներդ
Ուկիէն ու ազնիւ ուկիէն աւելի սիրեցի:
- 128 Ուստի ամէն բանի վրայում պարունակ ուս բոլոր
Հրամաններդ ուղիղ կը համարիմ,
Ու ստութեան ամէն ճամբան կ'ատեմ:

Տեսք եռուանոի աւու մերժեցիր

- Փ Է
- 129 Քու վկայութիւններդ զարմանալի են.
Անոր համար իմ անձս զմնանք կը պահէ:
- 130 Քու խօսքերուդ յայստակուիլլ լըս կու տայ,
Ու միամիտները իմստոտուն կ'ընէ:
- 131 Իմ բերանա բացի ու չեւացի,
Վասն զի քու պատուիրանկներուդ ցանկացոյ:
- 132 Ինծիր նոյէ ու ողորմէ ինծիր,
Ինչպէս սովորաբար կ'ընէ քու անունդ սիրովներուն:
- 133 Իմ գնացքներս հաստատէ քու խօսքիդ մէջ,
Ու ընուռ անօրէնութիւն մը չափիկ ինծիր:
- 134 Փրկէ զիս մարդոց բանութենէն,
Եւ քու հրամաններդ պիտի պահէմ:
- 135 Երեսդ փայլեցուր քու ծառայիդ վրայ,
Ու սորվեցուր ինծիր քու կանոններդ:
- 136 Զուրեկուս աւուններ կ'իջնեն իմ աչքերէս,
Վասն զի յուրէի քու օրէնքդ չպահէցին:
- Ց Ա Տ Է
- 137 Արդար ես դուն, ով Տէր,
Եւ քու դասաստաններդ ուղիղ են:
- 138 Քու պատուիրած վկայութիւններդ
Արդար ու խիստ ճշմարիս են:
- 139 Իմ նախանձս զիս մաշեց,
Վասն զի իմ թշնամիներս քու խօսքերդ մոռցան:
- 140 Քու խօսքդ խիստ մաքուր է,
Անոր համար քու ծառադ զանիկս կը սիրէ,
Ես ցած ու անարդուած եմ,

Բայց քու հրամաններդ չմոռցայ:

142 Քու արդարութիւնդ յաւիտենական արդարութիւն է,

Ու քու օրէնքդ ծշմարտութիւն է:

143 Նեղութիւն ու վիշտ զիս գտան,

Բայց քու պատուիրանքներդ իմ՝ ուրախութիւնս են:

144 Քու վկայութիւններուդ արդարութիւնը յաւիտ եան է.

Իմաստուն ըրէ զիս, ու պիտի ապրիմ:

Գ Օ Ֆ

145 Բոլոր սրտով աղաղակեցի,

Ով Տէր, պատասխան տուր ինծի, ու քու կանոններդ պիտի պահէմ:

146 Քեզի աղաղակեցի, փրկէ զիս,

Եւ քու վկայութիւններդ պիտի պահէմ:

147 Կանուխ ելսյ արշալյախն ու աղաղակեցի.

Քու խօսքիդ յուսացս:

148 Գէլբուռան պահէրէն տուաջ բացուեցան իմ աչքերս.

Քու խօսքերուդ վրայ մտածելու համար:

149 Իմ ձայնս լսէ քու ողորմութեանդ համեմատ.

Ով Տէր, քու դատաստաններուդ համեմատ կեն-

դանացուր զիս:

150 Անօրէնութեան հետեւողները մօտեցան.

Անոնք քու օրէնքդ հեռացան:

151 Ով Տէր, դուն մօտ ես,

Ու քու բոլոր պատուիրանքներդ ծշմարտութիւն են:

152 Առաջուընէ իմացած եմ քու վկայութիւններէդ,

Զորոնք յաւիտեան հատակտեցիր:

Բ Է Շ

153 Տես իմ՝ խղճութիւնս ու զիս փրկէ,

Վասն զի քու օրէնքդ չմոռցայ:

154 Իմ՝ իրաւունքս պաշտպանէ ու փրկէ զիս,

Քու խօսքիդ համեմատ կենդանացուր զիս:

155 Փրկութիւնը հեռու է ամբարիշտներէն,

Վասն զի քու կանոններդ չխնդրեցին:

156 Ով Տէր, քու գժութիւններդ շատ են.

Քու դատաստաններուդ համեմատ կենդանացուր զիս:

157 Շատ են իմ՝ հալածիչներս ու թշնամիներս,

Բայց ես քու վկայութիւններէդ չխստորեցայ:

158 Անօրէնները տեսայ ու զզուեցայ,

Վասն զի անոնք քու խօսքդ չէին պահէր:

159 Նայէ որ քու հրամաններդ կը սիրեմ.

Ով Տէր, քու ողորմութեանդ համեմատ կենդանա-

ցուր զիս:

160 Քու խօսքիդ սկիզբը ծշմարտութիւն է,

Ու քու բոլոր արդար դատաստաններդ յաւիտ եան են:

Ճ Ի Կ

161 Իշխանները զուր տեղ զիս հալածեցին,

Բայց իմ սիրու քու խօսքէդ վախցաւ:

162 Ես կը ցնծամբ քու խօսքերովդ,

Շատ աւար դանողի պէս:

163 Ստութիւնը ատեցի ու անարդեցի:

*Կայ բովանդակութիւն

Բայց քու օրէնքդ սիրեցի:

164 Օրը եօթը անգամ՝ կ'օրհնեմ՝ քեզ,

Քու արդար գատասատաններուդ համար:

165 Քու օրէնքդ սիրողներուն շատ խաղաղութիւն կոյ,

Ու անոնց գայթակղութիւն չըլլար:

166 Ու Տէր, քու փրկութեանդ սպասեցի:

Եւ քու պատուիրանքներդ կատարեցի:

167 Իմ անձս քու վկայութիւններդ պահեց,

Ու ես զանոնք շատ կը սիրեմ:

168 Քու հրամաններդ և քու վկայութիւններդ պահեցի:

Վասն զի իմ բոլոր ճամբաններս քու առջեւդ են:

ԴԱՎ

169 Ու Տէր, թող իմ աղաղակս քու առջեւդ մօտենայ.

Քու խօսքիդ համեմատ իմաստուն ըրէ զիս:

170 Թող իմ աղաղակս քու առջեւդ ելլէ.

Քու խօսքիդ համեմատ փրկէ զիս:

171 Իմ շրմունքներս օրհնութիւն պիտի բղինեն,

Վասն զի քու կանոններդ սորվեցուցիր ինձի:

172 Իմ լեզուս քու խօսքդ պիտի պատմէ,

Վասն զի քու բոլոր պատուիրանքներդ արդար են:

173 Թող քու ձեռքդ ինձի օգնական ըլլայ,

Վասն զի քու հրամաններդ ընարեցին:

174 Ու Տէր, քու փրկութեանդ ցանկացայ,

Ու քու օրէնքդ իմ ուրախութիւնն է:

175 Թող իմ անձս ապրի ու քեզ օրհնէ,

Եւ քու դատաստաններդ օգնեն ինձի:

176 Կորսուած ոչխորի պէս մոլորեցայ.

Փնտուէ քու ծառադ, վասն զի քու պատուիրանք,

Ներս չմառաւ:

ՍԱՂՄՈՍԱՅ ՃԻ

Աստիճաններուն երգը:

1 ՊՐ նեղութեանն մէջ Տէրոջը աղաղակեցի,

Ու անփկա ինձի պատուախան առւաււ:

2 Ու Տէր, փրկէ իմ անձս սուտ շրմունքներէն

Ու նենդաւոր լեզուէն:

3 *Ու նենդաւոր լեզու, քեզի ի՞նչ արուի,

Եւ քեզի ի՞նչ աւելցուի:

4 Զօրաւոր մարդուն սուր նետերը

Ու գիշին կայծերը:

5 Վայ ինձի, որ Մասքի մէջ պանդուխա եղայ,

Եւ կեդարի վասններուն քովերը բնակեցայ:

6 Շատ ժամանակ իմ անձս բնակեցաւ-

Խաղաղութիւնը ատողներուն հետ:

7 Ես խաղաղասէր էի.

Բայց երբ կը խօսէի, անոնք կոխւ Շներէն:

ՍԱՂՄՈՍԱՅ ՃԻԱ

Աստիճաններուն երգը:

1 ԱՌ քերս գեպի ի լեռները պիտի վերցնեմ,

Ուրկէ իմ օգնութիւնն պիտի գայ:

2 Իմ օգնութիւնն Տէրոջմէն է,

Որ երկնքը ու երկիրը ստեղծեցի:

3 Անիկս քու սպրդ չդողացնէ,

*Կայ, Նենդաւոր լեզուն քեզի ի՞նչ կու տաս ու քեզ

ի՞նչ կ'աւելցնէ

- Ու քու Պահապանդ չքնանայ:
- 4 Ա.Հա Խարսցէլի Պահապանը
Պիտի չմրտափէ ու պիտի չքնանայ:
- 5 Տէրը քու պահապանդ է.
Տէրը քու աջ ձեռքիդ քով քու հովանիդ է:
- 6 Յորեկը արեգակը քեզ պիտի չզարնէ,
Ու ու գեշերը՝ լուսինը:
- 7 Տէրը քեզ ամեն չարէն պիտի պահապանէ,
Քու անձգ պիտի պահապանէ:
- 8 Տէրը քու ելլեր ու մանելլդ պիտի պահապանէ
Ասկէ ետև մինչեւ յասիտեան:

ՍԱՂՄՈՍ ՃԻՒ

Դասիթի աստիճաններուն երգը:

- 1 Կուրախանայի երբ ինծի կ'լսէին,
Տէրոյն տունը երթանք:
- 2 Մեր սոգերը քու գուներուդ մէջ կոյնեցան,
Ու Երտուաղէմ:
- 3 Երուսաղէմ աշխափէ քաղստի մը պէս շնուռած է,
Որ ինքնիրեն միւտորուած է.
- 4 Որ ցեղերը, Տէրոյն ցեղերը հոն կ'ելլեն
Խարսցէլի պատուիրածին պէս,
Տէրոյն անուանը գոհութիւն մատուցանելու համար:
- 5 Վասն զի հոն դրուած են դատասատնի աթուները,
Դաւիթի տանը աթուները:
- 6 Երուսաղէմի խաղաղութիւնը ինդրեցէք.
Թող յաջողին անոնք որ քեզ կը սիրեն:
- 7 Խաղաղութիւն թող ըլլայ քու պարիսպներուդ մէջ,
Ու յաջողաթիւնը քու պարատներուդ մէջ:

- 8 Իմ եղբայրներուս ու ընկերներուս համար
Հիմա պիտի ըսեմ, Խաղաղութիւն ըլլայ քու մէջու:
- 9 Մեր Տէր Աստուծոյն ասնը համար
Քեզի բարութիւն պիտի ուղեմ:

ՍԱՂՄՈՍ ՃԻՒ

Դասիթի աստիճաններուն երգը:

- 1 Փեզի կը բարձրացնեմ իմ աչքերս,
Ու երկինքի մէջ ինակող:
- 2 Ա.Հա ինչպէս ծառաներուն աչքերը երենց տէրոյնը
ձեռքին էւնային,
- Ու ինչպէս աղափինին աչքերը իր տիկնոջ ձեռքին,
Ա.յնպէս մեր աչքերը Տէրոյնը, մեր Աստուծոյն, պէտէ
նային,
- Մինչև մեզի ողորմի:
- 3 Ողորմէ մեզի, ու Տէր, ողորմէ մեզի,
Վասն զի խիստ լցուեցանք անարդանկով:
- 4 Խիստ լցուած է մեր անձը հանգիստ վոյելոյներուն
նախատինքովը
- Ու ամեարտաւաններուն անարդանքովը:

ՍԱՂՄՈՍ ՃԻՒ

Դասիթի աստիճաններուն երգը:

- 1 Եթէ Տէրը մեզի հետ չըլլար,
Հիմա Խարսցէլ թող ըսեն:
- 2 Եթէ Տէրը մեզի հետ չըլլար,
Երբ մարդիկ մեր վրայ ելան,
- 3 Ա.յն տանը ողջ ողջ պիտի կլէին մեզ:

- Երբ անոնց բարկութիւնը մեր վրայ բորբռքած էր.
 4 Այս ատեն ջուրերը մեզ պիտի ընկղպէին,
 Հեղեղը մեր անձերուն վրայէն պիտի անցնէր.
 5 Այս ատեն հպարտացած ջուրերը
 Մեր անձերուն վրայէն պիտի անցնէին,
 6 Օքնեալ ըլլայ Տէրը,
 Որ մեզ անոնց ակւաներուն որս չտուաւ:
 7 Մեր անձերը ճնճղուկի պէս որսորդներուն որսդու.
 թէն ապատեցան.
 Որդուսիթը կարեցաւ ու մենք ազատեցանք:
 8 Մեր օգնութիւնը Տէրոջը անունով է,
 Որ երկինքն ու երկիրը ստեղծեց:

ՍԱՂՄՈՍ ՃԻԵ

Աստիճաններուն երգը:

- 1 Տէրոջը յուսացողները Սիօն յեւանը պէս են,
 Որ չսասանիր, հաղոյ յաւիտեան կը թնայ:
 2 Խուժի Երուսաղէմ լեռներով պատաժ է,
 Նշնորու Տէրը իր ժողովուրդին չորս կողմն է
 Ասկէ ետև մինչեւ յաւիտեան:
 3 Վասն զի ամբարիշաբն գաւազանը արդարներուն վի-
 ճակին վրայ պիտի չնայ,
 Որպէս զի արդարները ձեռքեւնին անօրէնսութեան
 չերկնցնեն:
 4 Ու Տէր, բարիք ըրէ բարիներուն
 Ու սրտով ուղիղներուն:
 5 Սակայն զանոնք որ իրենց ծուռ ճամբաներուն մէջ
 կը մոլորին,

- Տէրը պիտի * կորսնցնէ անօրէնսութիւն գործողներուն
 չետու:
 Խաղաղութիւն ըլլայ իսրայէլի վրայ:

ՍԱՂՄՈՍ ՃԻԶ

Աստիճաններուն երգը:

- 1 Երբ Տէրը Սիօնի գերութիւնը դարձուց,
 + Երազ տեսնողներուն՝ պէս եղանք:
 2 Այս ժամանակ մեր բերանը ինդութիւնով լեցուե-
 ցաւ,
 Ու մեր լեզուն ցնծութիւնով.
 Այս ժամանակ հեթանոսներուն մէջ ըսին թէ
 Տէրը ասոնց համար մեծ բաներ ըրտւ,
 3 Տէրը մեզի համար մեծ բաներ ըրտւ,
 Ու մենք ուրախացանք:
 4 Ու Տէր, դարձուր մեր գերութիւնը
 Հարսաւի տուռներուն պէս:
 5 Անոնք որ արցունկով կը ցանեն,
 Ցնծութիւնով կը հնձնեն:
 6 Ան որ լալսվ կ'երթայ,
 Ցանելու սերմը տանելով,
 Անշուշտ ցնծութեամբ ետ պիտի դառնայ
 իր շուրէնէ խուրձերը բերելով:

*Եթ. տանի

†Կու, Առողջացողներու

ՍԱՂՄՈՍ ՃԻԷ

Սաղմոնի աստիճաններուն երգը:

- 1 Եթէ Տէրը չվինէ տունը,
Զուր տեղ կ'աշխատին անոր շինողները.
Եթէ Տէրը չպահպանէ քաղաքը,
Զուր տեղ կը հակեն պահպանները:
- 2 Պարապ բան է ձեզի համար կանուխ ելելը և ուշ
հանգիլը
Ու ցաւով հաց ուտելը
Արդարե անիկոս իր սիրելիին քուն կու տայտ
- 3 Ա.Հա տղաքը Տէրոջը ժառանգութիւնն են.
Որովայնի պատողը անոր *պարզեւն է:
4 Խնչպէս են նետերը զօրաւորին ձեռքին մէջ,
Աշնապէս են երիտասարդներուն տղաքը,
5 Երանի՛ այն մարդուն,
Որ իր կապարճը անսնցմով լեցուց.
Երբ դրանը մէջ թշնամիներուն հետ խօսելու ըլլան,
Պիտի չամչնան:

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ

Ասովիճաններուն երգը:

- 1 Երանի՛ այն ամէնուն՝ որոնք Տէրոջմէ կը վախնան,
Ու անոր ճամբաններուն մէջ կը քարեն:
- 2 Վասն զի քու ձեռքիդ աշխատութիւնը պիտի ուտես.
Երանի՛ է քեզի, ու քեզի բարի պիտի ըլլան:
- 3 Քու կինդ պաղաքեր որթի մէ պէս պիտի ըլլան

*Կայ, վարձքն

- Քու տանդ ներսիդիերը,
Ու քու որդիներդ ձիթենիի տունկերու պէս
Քու սեղանիդ չորս կողմը:
- 4 Ա.Հա Տէրոջմէն վախցող մարդը
Ա.Հապէս պիտի օրհնուի:
- 5 Տէրը քեզ Սիօնէ օրհնէ,
Ու Երուսաղէմի բարութիւնը տեսնես
Քու կետնիդ բոլոր օրերուն մէջ.
- 6 Եւ քու որդւոցդ որդիները տեսնես:
Խաղաղութիւն ըլլայ Խորայէլի վրայ:

ՍԱՂՄՈՍ ՃԻԹ

Ասովիճաններուն երգը:

- 1 Հիմա Խորայէլ թոռ ըսէ,
Իմ մանկութենէս ի վեր շատ անգամ զիս նեղեցին.
- 2 Իմ մանկութենէս ի վեր շատ անգամ զիս նեղեցին,
Բայց ինձի չյաղթեցին:
- 3 Հերկողները իմ կոնակիս վրայ հերկեցին,
Ու իրենց ակօնները երկնցուցին,
- 4 Տէրը արդար է.
Անիկա ամբողիշտներուն չուտանները կտրտեց:
- 5 Ախօնը տառղներուն ամէնը
Պիտի ամչնան ու ետ դառնան.
- 6 Տանիքի վրայի խոտին պէս պիտի ըլլան,
Որ դեռ չփրցուած կը չընույ.
- 7 Որով հնձողը չկնար իր ձեռքը լեցնել,
Ոչ ալ խուրճ կապողը իր գոգը.
- 8 Եւ անցնողները չեն ըսեր թէ

216 ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ

- 10 Քու Դաւիթ ծառապիդ համար
Անդին մի գարձներ քու օծեալիդ երեսը;
 11 Տէրը երդում ըրաւ Դաւիթի ճշմարտութեամբ,
Ու ես չգառնար անկէ,
Թէ Քու որովայնիդ պատուլէն
Քու աթուուիդ վրայ պիտի նստեցնեմ;
 12 Եթէ Քու որդիներդ պահէն իմ ուխտս ու վկայու-
թիւններս
Զորոնց անոնց պիտի սորվեցնեմ,
Այս որդին անոնց որդիներն ալ
Քու աթուուիդ վրայ պիտի նստին յաւիտեան;
 13 Վասն զի Տէրը Արօնը ընարեց,
Եւ զանիկա իրեն բնակութեան համար ուղեց,
 14 Ըստւէ, Այս է յաւիտեան իմ հանգիստա.
Ասոր մէջ պիտի բնակիմ, վասն զի ասիկա ուղեցի,
 15 Անոր պաշարը առաստավար պիտի օրհնեմ,
Ու անոր աղքատները հացով պիտի կշտացնեմ,
 16 Եւ անոր քահանաներուն փրկութիւն պիտի հագ-
ցլնեմ.
Ու անոր սուբբերը ուրախութեամբ պիտի ցնծան,
 17 Այն աեղը Դաւիթի եղջիւր պիտի բուսցնեմ,
Ու ճրագ պիտի պատրաստեմ իմ օծեալիս համար,
 18 Անոր թշնամիներուն ամօթ պիտի հագցնեմ,
Բայց անոր վրայ իր թագը պիտի ծաղկի:

ՍԱՂՄՈՍԱՑ ՃԼԿ

Դաւիթի աստիճաններուն երդը:

- 1 Ահա ո՞չափ բարի ու ո՞չափ վայելուլ է
Ոք եղբայրները իրուն հետ միաբանութեամբ բնակին:

- 2 Այն ազնիւ իւղին պէս է,
Որ գլխուն վրայէն մօրուքին վրայ,
Ահարնի մօրուքին վրայ, վազեց,
Ու մինչև անոր գգեսաներուն ծայլը իջաւ:
 3 Արօնի լեռներուն վրայ իջած
Հերմոնի շաղին պէս է.
Վասն զի Տէրը հան հաստատեց օրհնութիւնը
Ու կեանքը մինչև յաւիտեան:

ՍԱՂՄՈՍԱՑ ՃԼԿ

Աստիճաններուն երդը:

- 1 Աղէ, օրհնեցէք Տէրը, ով Տէրոջը բոլը ծա-
ռաները,
Որ Տէրոջը տունը կը կենաք գիշերները:
 2 Սուրբ տեղը ձեռքերնիդ վեցուցէք,
Ու օրհնեցէք Տէրը:
 3 Երկինքը ու երկիրը սուեղծող Տէրը
Թող օրհնէ քեզ Արօնէ:

ՍԱՂՄՈՍԱՑ ՃԼԿ

- 1 Ալէլուիս Օրհնեցէք Տէրոջը անունը,
Օրհնեցէք, ով Տէրոջը ծառաները,
 2 Որ Տէրոջը տունը կը կենաք,
Մեր Աստուծոյն տունը պահներուն մէջ,
 3 Օրհնեցէք Տէրը, վասն զի Տէրը բարի է.
Սողմո ըսէք անոր անսւանը, վասն զի քաղցր է:
 4 Վասն զի Տէրը իրեն համար ընտրեց Յակովը,
Ու Խորոյէլ իրեն սեպհական ժողովուր ըլլունէ,
 5 Վասն զի ես իմացայ, որ Եհովա մեծ է,

- Ու մեր Տէրը՝ բոլոր աստվածներէն։
 6 Տէրը ամէն ինչ որ ուզեց՝ լրաւ,
 Երկինքի ու երկրի մէջ,
 Ծովերուն ու բոլոր անդունդներուն մէջ։
 7 Երկրի ծայրերէն շոգիներ կը հանէ,
 Անձիւի համար փայլակներ կը շինէ,
 Ու հով կը հանէ իր շտեմարաններէն։
 8 Անիկա Եգիպտասի առջնեկները զարկաւ
 Մարդէ մինչև անսառուն։
 9 Նշաններ ու հրաշքներ զրկեց քու մէջդ, ով Եդիստուն
 Փարաւանի ու անոր բոլոր ժառաններուն վրայ։
 10 Հաստ ազգեր զարկաւ,
 Ու զրեւ թագաւորներ ապահով։
 11 Ամերիացւոց Անհնն թագաւորը
 Բասանի Ովդ թագաւորը,
 Եւ Քանանու բոլոր թագաւորութիւնները.
 12 Ու աննաց երկրը ժառանգութիւն տուաւ,
 Իր հարայէլ ժողովսւրդին ժառանգութիւն։
 13 Ով Տէր, քու անսանդ մինչև յաւիտեան է ճայ։
 Ով Տէր, քու յիշասակդ ազգէ մինչև ազգ։
 14 Վասն զի Տէրը իր ժողովսւրդը կը դատէ,
 Եւ իր ժառաններուն կ'ոզրամի։
 15 Հեթանոսներուն կուռքերը արծաթ ու ոսկի են,
 Մարդու ձեռքի գործեր են։
 16 Բերան ունին, բոյց չեն խօսիր,
 Աչքեր ունին, բոյց չեն աեմներ։
 17 Ականջներ ունին, բոյց չեն լսեր,
 Ու շոնչ չկայ անոնց բերնին մէջ։
 18 Աննաց նման կ'ըլլան զանանք շինողները
 Ու բոլոր անոնց յաւատցողները։

- 19 Ով Խարայէլի տունը, օրչնեցէք Տէրը.
 Ով Ահարոնի տունը, օրչնեցէք Տէրը.
 20 Ով Ղեւիի տունը, օրչնեցէք Տէրը.
 Ով Տէրոջմէն վախցողներ, օրչնեցէք Տէրը.
 21 Օրչնեալ ըլլայ Տէրը Ափօնէ,
 Որ Երուսաղէմի մէջ կը բնակի: Ալէլսւիա:

ՍՈՂՄՈՍ ՃԼԶ

- 1 Գոհչացէք Տէրոջմէն, վասն զի բարի է.
 Վասն զի անոր ողպրմութիւնը յաւիտեան է.
 2 Գոհչացէք աստուածներուն Աստուածմէն,
 Վասն զի անոր ողպրմութիւնը յաւիտեան է.
 3 Գոհչացէք աւելերուն Տէրոջմէն,
 Վասն զի անոր ողպրմութիւնը յաւիտեան է.
 4 Մինակ մեծ հրաշքներ ընողէն,
 Վասն զի անոր ողպրմութիւնը յաւիտեան է.
 5 Երկինքը իմաստութեամի ստեղծողէն,
 Վասն զի անոր ողպրմութիւնը յաւիտեան է.
 6 Երկրը ջուրերուն վրայ տարածողէն,
 Վասն զի անոր ողպրմութիւնը յաւիտեան է.
 7 Մեծամեծ լուսաւորներ ստեղծողէն,
 Վասն զի անոր ողպրմութիւնը յաւիտեան է.
 8 Արեգակը՝ սրպէ զի ցորեկին իշխէ,
 Վասն զի անոր ողպրմութիւնը յաւիտեան է.
 9 Լուսինը ու աստղերը՝ սրպէս զի գեշերն իշխէն,
 Վասն զի անոր ողպրմութիւնը յաւիտեան է.
 10 *Եգիպտացւոց անդրանիկները՝ զարնողէն,

*ԵՇԻ. Եգիպտացիները իրենց անդրանիկներուն մէջ

- Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 11 Ու Խարսչէլը անոնց մէջէն հանողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 12 Հզօր ձեռքբազ ու տարածուած բազուկավ,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 13 Կարմիր ծավլ երկուքի բաժնողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 14 Ու Խարսչէլը անոր մէջէն անցընողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 15 Եւ Փարաւոնը ու անոր զօրեհը Կարմիր ծավուն մէջ
 թօթվողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 16 Իր ժողովաւրդը անապատին մէջ պտրացնաղէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 17 Մեծ թագաւորներ զարնողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 18 Ու զօրեղ թագաւորներ սպաննողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 19 Ամօրչացաց Սեհն թագաւորը,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 20 Ու Բասանի Ովկ թագաւորը,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 21 Եւ անոնց երկիրը ժառանգութիւն տուաղէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 22 Իր Խարսչէլ ժառային ժառանգութիւն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 23 Մեր խոնարհութեանը մէջ մեզ յիշողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 24 Ու մեր թշնամիներէն մեզ փրկողէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.

- 25 Բոլոր մարմինի հայ տուաղէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է.
 26 Գոհչացէք երկինքի Աստուժմէն,
 Վասն զի անոր ողբրմութիւնը յաւիտեան է:

ՍԱՂՄՈՍ ՃԼՀ

- 1 Բարելոնի գետերուն քով հոն կը նստէինք,
 Ու Սիօնը միտքերնիս բերելուլ կու լսինք,
 2 Անոր մէջ ուռիներուն վրայ
 Կափեցինք մեր քնարները,
 3 Վասն զի մեզ գերի ընողները
 Հոն մեզմէ երգ մը խնդրեցին,
 Ու մեր *Կաղոպահիները ուրախութիւն,
 Բաւլէն, Երդեցէք մեզի Սիօնի երդերէն,
 4 Տէրը լրգը ի՞նչպէս երդենք
 Օսար երկրի մէջ:
 5 Ովլ Երուսաղէմ, եթէ քեզ մոռնամ,
 Թողլ իմ աջ ձեռքս իր պալուծ մոռնայ.
 6 Թողլ իմ լեզու իմ քիմքիս փակչի,
 Եթէ քեզ չյիշեմ,
 Եթէ Երուսաղէմ իմ գլխաւոր ուրախութենէս
 Աւելի մեծ չհամարիմ:
 7 Ցիշէ, ովլ Տէր, Եդովմի որդէները
 Երուսաղէմի օրուանը մէջ,
 Որոնք կ'սէին, Փլցուցէք, Փլցուցէք
 Մինչեւ անոր հիմք:

*Կայ, գերեվարները

- 8 Ով Բարելսնի *աւերող աղջիկը,
Երանին՝ անոր՝ որ քեզի կը հատուցանէ
Մեղի ըստծ գործերուդ փոխարէնը.
9 Երանին՝ անոր՝ որ քու զաւակներդ կը բռնէ
Ու քարի կը զարնէ:

ՍԱՂՄՈՍ ՃԼԸ

Սաղմոս Դաւթի:

- 1 Փեղի գոհութիւն պիտի մաստուցանեմ իմ բոլոր
արտօնված.
+ Ուստուածներուն առջև քեզի սաղման պիտի երգեմ:
2 Երկարագութիւն պիտի ընեմ գեղ ի քու սուրբ
տաճարդ,
Եւ քու անուանդ գոհութիւն պիտի մաստուցանեմ
Քու ողբրմութեանդ ու ճշմարտութեանդ համար.
Վասն զի քու բոլոր անունէդ վեր մեծցուցիր քու
խօսքու:
3 Կանչած օրս պատասխան առուիր ինձի,
իմ անձիս մէջ զօրութիւնով զիս ուժովցուցիր:
4 Ով Տէր, երկիր բոլոր թագաւորները քեզի գոհութիւն
պիտի մաստուցանեն,
Երբ քու բերնիդ խօսքերը լսեն.
5 Ու Տէրոջը ճամբաներուն մէջ պիտի երգեն.
Վասն զի Տէրոջը փառքը մեծ է:

*Կամ, աւրուելու. Ես. Ժ. 1, 6, Ան. Խ. 1: Երեմ:
իւ. 12: Ժ. 2:
†Կամ. Հրեշտակներուն, Լոմ, Պատաւորներուն, և Լոմ,
Աստուծոյ

- 6 Թէպէտ Տէրը բարձր է, բայց խոնարհը կը տեսնէ,
Ու բարձրամիտը հեռուէն կը ճանչնայ:
7 Եթէ նեղութեան մէջ ալ քաղլեմ,
Դուն զիս պիտի կենդանացնես,
իմ թշնամիներուս բարկութեանը գէմ
Քու ձեռքդ պիտի երկնցնես,
Եւ քու ոչ ձեռքդ զիս պիտի փրկէ:
8 Տէրը պիտի գործէ ինձի համար.
Ով Տէր, քու ողբրմութիւնդ յաւիսեան է
Քու ձեռքիդ գործերը երեսէ մի ձերը

ՍԱՂՄՈՍ ՃԼԸ

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի:

- 1 Ով Տէր, զիս քննեցիր ու ճոնչցարու
2 Դուն գիտես իմ նասիլս ու ելլելս,
իմ խորհութեանց հեռուսոնց կ'իմանասաւ
3 Իմ շատիզ ու պառկիլս կը քննես,
Ու իմ բոլոր ճամբաներս գիտես
4 Վասն զի բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ,
Ահա, ով Տէր, դուն ամենը գիտես,
5 Իմ ետեւէս ու առջեւէս զիս պաշտրեցիր,
Եւ քու ձեռքդ իմ վրա գըիր:
6 Այս գիտութիւնը ինձի իիստ զարմանալի է,
Բարձր է ու չեմ կրնար հասկնալ զանիկաւ
7 Ո՞ւր երթամ քու Հոգիւդ,
Եւ քու երեսէդ ո՞ւր փափչիմ:
8 Եթէ երկնք ելլելմ, դուն հնն ես,
Եթէ դժոփքը անկողինս ընեմ, աչտ դուն հնն ես.
9 Ենք արշալցովն թեւերը առնեմ,

- Եւ ծովուն վերջի ծայրը ընտկիմ,
 10 Հն ալ քու ձեռքք ինձի պիտի առաջնորդէ,
 Ու քու աջ ձեռքք զիս պիտի լունէ:
 11 Եթէ ըսեմ, Խրաւցընէ խաւարը զիս պիտի ծածկէ,
 Այս առեն գիշերն ալ լցո կ'ըլլայ իմ բոլորտիքա
 12 Մութն ալ քեզի խաւար չէ.
 Հապա գիշերը ցորեկի պէս լուսաւոր կ'ըլլայ.
 Խաւարը և լցոյս միենայն բան են ուս առջեր:
 13 Վան զի դուն *ստեղծեցիր իմ երիկամոնքներս,
 Ու իմ մօրս որովայնին մէջ դուն զիս ծածկեցիր:
 14 Կը գոհանամ քեզէ,
 Որ ահաւոր ու զարմոնալի կերպով ստեղծուեցայ.
 Քու գործերդ զարմոնալի են,
 Ու իմ անձս աղէկ գիտէ:
 15 Իմ գոյութիւնս չծածկուեցաւ քեզմէ,
 Երբ գաղտուկ տեղը շինուեցայ,
 Երկի խորութիւններսւն մէջ †ճարտարութեամի
 կազմուեցայ":
 16 Քու աչքերդ իմ անկատար կազմուեծքս տեսան.
 Ու անդամեւոս բուլոր քու գիլքիդ մէջ գրուած էին,
 Որոնք ժամանակին պիտի կազմուեին,
 Երբ գեռ անոնցմէ մէ՛կը չկարա
 17 Ո՛քչափ պատուական են ինձի քու խորհուրդներդ,
 ով Աստուած.
 Ո՛քչափ մեծ է անոնց թիւը
 18 Եթէ համբեմ զանոնք՝ տւողէն շատ են.
 Երբ արթննամ" գեռ քեզի հետ եմ:

- 19 Խրաւցընէ ամբարիշոը պիտի սպաննես, ով Ասա
 ուած.
 Ուրեմն, ով արիւնաչեղ մարդիկ, հեռացէք ինծմէ:
 20 Անոնք քեզի գէմ նենգութեամի կը խօսին,
 Եւ քու *թշնամիներդ ուս անուադ պարապ տեղ
 կ'առնեն":
 21 Քեզ ասողները չե՞մ ատեր, ով Տէր,
 Ու քեզի գէմ ելլաղներէն չե՞մ զզուիր:
 22 Զանոնք կատարեալ ասելութեամի կ'առեմ,
 Եւ ինձի թշնամի կը հանողիմ:
 23 Փորձէ զիս, ով Աստուած, ու գիտացիր իմ սիրու-
 ջիս քննէ ու գիտացիր իմ մտածմունքներս,
 24 Եւ նոյէ լծէ արդեօք չար ճամբու մէ՛ջ եմ,
 Եւ զիս դէպի յաւիտենական ճամբան աւաշնորդէ:

ՍԱՂՄՈՍ ՃԽ

Գլխաւոր երաժշտին, Սաղմոս Դաւթի:

- 1 ՈՎ Տէր, չար մարդէն զիս փրկէ,
 Ու բանաւոր մարդէն զիս պահէ,
 2 Որոնք սրտերնուն մէջ չար բաներ կը մտածեն,
 Ու ամէն օր կոփւներու համար կը ժողվուին:
 3 Խրենց լեզուները օձի պէս որեցին.
 Խիմ թշն կայ անոնց շրթունքներուն տակ: (Ուշու)
 4 ՈՎ Տէր, զիս ամբարշտին ձեռքէն պահէ.
 Զիս բանաւոր մտարդէն պահպանէ,
 Որոնք իմ գնացքները խսփանելու խորհուրդ ըրին:

*կամ, ստացար

ԵԵԲ. նկարակերպեցայ

- 5 Ամբարտաւանները ինծի համար գաղտնի որոգայիթ ու
չուաններ լարեցին.
- Ուռկան փռեցին է՛ ճամբուռ վրայ.
- Վարմեր դրին ինծի համար (Աէլաւ)
- 6 Ըստ Տէրոջը, Դուն ես իմ Աստուածաւ.
- Ով Տէր, լսէ իմ ազաշանքիս ձայնը.
- 7 Ով Տէր Եհովլա, իմ փրկութեանս զօրութիւնը,
Դուն իմ գլխուս հովանի եղար պատերազմին օրը.
- 8 Ով Տէր, ամբարցաին ցանկութիւնները մի ասար.
Անոր չար խորհուրդը մի յախողեր,
- Որ ւըւա: Ի՞ր բարձրանան: (Աէլաւ)
- 9 Զիս պաշարողներուն գլուխը
իրենց շվթունքներուն աշխատութիւնը պիտի ծածկէ:
- 10 Վառած ածուխներ պիտի իյնան անոնց վրայ.
- Կրակի մէջ պիտի ձգէ զաննեք,
Ու խորունկ ջուրերու մէջ, որպէս զի լմաս վեր չելլեն:
- 11 Զարախօս մորդը երկի վրայ պիտի չհասասատուի:
Թշուառութիւնը պիտի որսայ բանաւոր մարդը,
Որպէս զի զանէն կործանէ:
- 12 Գիտեմ որ Տէրը դատաստան պիտի ընէ խեղձին,
Ու իրաւունք՝ աղքատներուն:
- 13 Յիրաւի արդարները քու անունդ պիտի գովեն
Ուղղները քու առջեւդ պիտի բնակին:

ՍԱԼՄՈՍ ՃԽԱ

Սալմոս Դաւթի

- 1 Ով Տէր, քեզի կը կանչեմ, շուտով հասիր ինծի
Ականչ գիր իմ ձոյնիս երբ քեզի կը կանչեմ:
- 2 Թող իմ աղօթքս խունկի պէս քեզի շիտկուի:

- Ես իմ ծեռքերուս վեր վերցուիլը երիկուան պատա-
րագին պէս:
- 3 Ով Տէր, պահապան գիր իմ բերնիս,
Ու իմ շրթունքներուս գաւալ պահպանէ:
- 4 Խմ սիրոտ չար բանի ետեւէ խոտորելու մի թողուր,
Որպէս զի անօրէնութիւն գործող մորդոց հետ գէլ
գործեր չընեմ:
- Ու անոնց համարդամ կերակուրներէն չուաեմ:
- 5 Արդարը թող զիս զարնէ, այն ողըմութիւն է.
Եւ զիս յանդիմանէ, այն գիսու իւղ է.
Իմ գլուխս չմերժէ զանէս.
Վասն զի անոնց նեղութիւններուն մէջ ալ պիտի
աղօթեմ:
- 6 Երբ անոնց դատաւորները ապաւաժներու մէջ ձըդ-
ուին,
- Այն ատեն իմ խօսքերս պիտի լսեն, վասն զի քաղցր են:
7 Ինչպէս *չերկողը ու Ճեղապող էւ յառակ երկի վրայ,
Այնպէս մեր ոսկորները գերեզմանին բերանը ցիրուցան
եղան.
- 8 Սակայն, ով Տէր Եհովլա, իմ աչքերս գէպի քեզ են.
Քեզի յուսացայ, իմ հոգիս մի մերկացներ:
- 9 Ինծի համար լարտած որոգայթէն:
- Ու անօրէնութիւն գործողներուն վարմերէն զիս
պահէ:
- 10 Ամբարիշտները իրենց ցանցերուն մէջ պիտի իյնան,
Երբ ես բոլորպին անցնիմ:

*կամ, գոյա կորողը

ՍԱՂՄՈՍ ՃԽԲ

Դաւկթի երգը ու աղօթքը՝ երբ ինք այրին մէջ էր,

- 1 իմ ձայնով Տէրոջը կ'աղաղակեմ.
- իմ ձայնով Տէրոջը կ'աղացեմ:
- 2 իմ գանգասո անոր առջեւ կը թափեմ.
- իմ նեղութիւնս անոր առջեւ կը պատմեմ:
- 3 Երբ հոգիս իմ մէջս կը մարեր,
Դուն իմ շաւիղս գիտցար.
իմ քալած ճամբուս մէջ
ինձի համար գաղտսուկ որոգայթ լարեցին.
- 4 Նոյէ աջ կողմը ու տես,
Որ բնաւ զիս ճանչցող մը չկոյ.
- Ապաւէնը ինձմէ կորսուեցաւ.
Բնաւ մէկը չկոյ որ իմ անձիս համար հոգ ընէ:
- 5 Ոլ Տէր, քեզի աղաղակեցի,
Ու ըսի, Դուն ես իմ ապաւէնս,
Ես իմ վիճակս կենդանիներուն երկրին մէջ :
- 6 Ականջ դեր իմ աղաղակիս,
Վատն զի շատ նուաստացայ.
Ազատէ զիս իմ հալածիչներէս,
Վատն զի ինձմէ զօրաւոր են:
- 7 Իմ անձն բանտէն հանէ,
Որպէս զի քու անուանդ գոհութիւն մատուցանեմ.
Արդարները իմ չորս կողմն պիտի պատեն,
Երբ ինձի բարութիւն ընես:

ՍԱՂՄՈՍ ՃԽԲ

Սաղմոս Դաւթի:

- 1 Ոլ Տէր, լսէ իմ արօթքս,
Ականջ դեր իմ աղաչոնքիս.
Պատափան տուր ինձի քու ճշմորտութիւնովդ-
Ու քու արդարութիւնովդ:
2 Եւ քու ծառալիդ հետ դասաստանի մի մտներ,
Վասն զի բնաւ կենդանի մը պիտի չարդարանայ քու
առջեւդ:
- 3 Վասն զի թշնամին իմ անձս հալածեց,
Իմ կեանքս գետինը զարկաւ,
Զիս շատոնցուընէ մեռածներուն պէս
Մութը նասեցուց:
- 4 Եւ իմ հոգիս ներսիդիս մարեցաւ,
Իմ սիրսո ներսիդիս խռովեցաւ:
- 5 Առաջուան օրերը՝ կը լիշեմ,
Քու բոլոր գործերուդ վրայ կը մատեմ.
Քու ձեռքերուդ ըրածներուն վրայ կը խորհիմ:
- 6 Զեռքերս դէպի քեզ կ'երկնցնեմ.
Իմ անձս չոր երկրի պէս քեզի հը դուռը-է: (Աէլու)
- 7 Շուտով պատասխան տուր ինձի, ոլ Տէր.
Իմ հոգիս մարեցաւ,
Քու երեսդ մի ծածկեր ինձմէ,
Որպէս զի քուրը իջնողներուն պէս ըրլամ:
- 8 Առաջուանց քու ողորմութիւնդ ինձի լսել տուր,
Վասն զի քեզի յուասցայ.
Իմ երթալու ճամբաս ինձի ցուցուր,
Վասն զի իմ անձս դէպի քեզ վերցուցի:

- 9 Ով Տէր, փրկէ զիս իմ՝ թշնամիներէս,
Վասն զի բեղ իմ՝ ապաւէնս ըքի։
10 Սորվեցուր լինծի որ քու կոմքդ ընեմ,
Քանին գուն ես իմ՝ Աստուածս։
Թող քու բարի Հազիւր զիս ուղիղ երկիրը առաջնորդէ,
11 Ով Տէր, քու անուանդ համար կենդանացուր զիս։
Գու արդարութեանդ համար իմ՝ անձս նեղութենէ
համէ։
12 Եւ քու ողբարմութիւնովդ սատկեցուր իմ՝ թշնամի-
ներս,
Ու կրօնցուր բոլոր իմ՝ անձս վշաացնողները,
Վասն զի ես քու ծառադ եմ։

ՍՈՂՄՈՍ ՃԽԴ

Ս-ՂՄԱ Դաւթէ։

- 1 Օրհնեալ ըլլոյ Տէրը, իմ Վէմս,
Որ իմ՝ ձեռքերս մարտնչելու կը վարժէ,
Ու իմ մատեր՝ պատերազմելու։
2 Անփկա է իմ սղսրմութիւնս ու պարիսպս,
իմ ապաւէնս ու իմ փրկիչս,
իմ վահանս, և ես անոր կը յուսամ։
Որ իմ՝ ժողովարդս ինծի կը հնազանդեցնէ։
3 Ով Տէր, մորդը ի՞նչ է որ զանիկս կը ճանչնամ։
Ու մարդու որդին՝ որ զանիկս կը յարդես։
4 Մարդը ունայնութեան պէս է,
Անոր օրեկը անցնող շուքի պէս են։
5 Ով Տէր, խնարհեցուր քու երկինքդ ու վար իջիր.
Եւոներուն դպչէ ու պիտի միտն։
6 Փոյլակը նետէ ու ցրուէ զանոնք։

- Քու նետերդ զրկէ ու զանոնք խռովեցուր։
7 Քու ձեռքդ վերէն զրկէ և ազատէ զիս։
Փրկէ զիս մեծ ջուրերէն ու օտարներուն ձեռքէն,
8 Որոնց բերանը ունայնութիւն կը խօսի,
Եւ անոնց աջ ձեռքը ստութեան աջ ձեռք է։
9 Ով Աստուած, բեղի նոր երդ պիտի երգեմ,
Տառ լար ունեցուղ տաւիզով սաղման պիտի լսեմ
քեզի։
10 Թագաւորներուն փրկութիւն ստուղը,
Ու իր Դաւեիթ ծառան չափ ստորէն ազատողը ան է։
11 Զիս ազատէ ու օտարներուն ձեռքէն փրկէ։
Որոնց բերանը ունայնութիւն կը խօսի.
Եւ անոնց աջ ձեռքը ստութեան աջ ձեռք է։
12 Որպէս զի մեր որդիները իրենց երիտասարդութեանը
մէջ տունկերու պէս մեծնան,
Ու մեր ազջիկները պալատի շնորհն համար փորագ-
րաւած անկենի քարերու պէս ըլլան։
13 Որպէս զի մեր ամիսարները լեցուին,
Եւ ամէն տեսակ իւրաքանչեր բղխեն,
Ու մեր ոչխարները հազարաւոր և բիւրուսոր ծնամին
մեր արտերուն մէջ։
14 Որպէս զի մեր արջառները *բազմածին ըլլան,
Ու ամենեւին բռնութեամբ մոնել ու ելեւ չըլլան,
Ու ալ աղազակ՝ մեր հասպարակներուն մէջ։
15 Երանի՛ այսպիսի վեճակի մէջ եղաղ ժողովարդին։
Երանի՛ պյն ժողովարդին՝ որտւն Աստուածը Եհովլա է։

*Կոմ, պարուղուտ

ՍՈՂՄՈՍ ՃԽԵ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴԱՒՅԻՒ:

- 1 Փեղ պիտի բարձրացնեմ, ովլ իմ Աստուածա, որ թագաւոր ես.
- 2 Ու քու անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի օրհնեմ:
- 3 Ամէն օր քեղ պիտի օրհնեմ,
- 4 Եւ քու անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի գովեմ:
- 5 Մեծ ու խիստ գովելի է Տէրը,
- 6 Ու անոր մեծութիւնը անկնելի է:
- 7 Ազգ ազգի պիտի գովէ քու գործերդ,
- 8 Եւ քու զօրութիւններդ պիտի պատմէ:
- 9 Քու փառքիդ մեծութեանը վայելչութիւնը
- 10 Ու քու հրաշալի գործերդ պիտի զրուցեմ:
- 11 Եւ քու աչաւոր գործերդ պիտի խօսին,
- 12 Ու ես քու մեծութիւնդ պիտի պատմեմ:
- 13 Քու մեծ բարերարութեանդ յիշատակը պիտի հրատակեն,
- 14 Եւ քու արդարութիւնովդ պիտի ցնծան:
- 15 Ուղբմած ու գիտած է Տէրը,
- 16 Երկոյնամիտ և բազումողորմ է:
- 17 Տէրը ամէնուն բարի է,
- 18 Ու անոր ողբարութիւնները իր բոլոր գործերուն վրայ են:
- 19 Ու Տէր, քու բոլոր գործերդ քեղ պիտի գովէն,
- 20 Եւ քու սուրբերդ քեղ պիտի օրհնեն:
- 21 Քու թագաւորութեանդ փառքը պիտի խօսին:

Ու քու զօրութիւնդ պիտի պատմեն.

- 12 Որպէս զի անոր զօրաւոր գործերը ու անոր թագաւորական փառաւոր մեծութիւնը
- 13 Քու թագաւորութիւնդ յաւիտենական թագաւորութիւն է,

Ու քու աէրութիւնդ՝ ազգէ մինչեւ ազգ:

- 14 Տէրը կը հաստատէ բոլոր կյանալու վրայ եղաղները, Եւ բոլոր վրա ծռածները կը կանգնեցնէ:
- 15 Ամէնուն աչքերը քեզի կը սպասեն,

Ու ժամանակին անոնց կերտակուրը գուն անոնց կու

տասա

- 16 Քու ձեռ-քդ կը բանասա,
- 17 Ու ամէն կենդանիին փափաքը կը լեցնեն,
- 18 Տէրը արդար է իր բոլոր ճամբաններուն մէջ,
- 19 Ու ողբմած է իր բոլոր գործերուն մէջ:
- 20 Տէրը մօտ է այն ամէնուն որ զինք կը կանչեն, Այն ամէնուն՝ որ ճշմարտութեամբ զինք կը կանչեն,
- 21 Անիկա իրմէ վախցողներուն փափաքը կը լեցնէ, Եւ անոնց աղաղակը կը լուէ ու կը փրկէ զանոնք:

ՍՈՂՄՈՍ ՃԽԶ

- 1 Ալէլուիա Օրհնէ Տէրը, ովլ իմ անձա:
- 2 Տէրը պիտի օրհնեմ իմ կետնկիս մէջ,

- Քանի որ ողջ եմ՝ իմ Աստուծոյս սաղմաս պիտի ըսեմ՝
 3 Մի յուսաք իշխաններուն,
 Մարդու որդիին՝ որուն քով փրկութիւն չկայ:
 4 Անոր հոգին կ'ելլէ, անիկա իր հողը կը դառնայ.
 Նոյն օքը անոր խորհուրդները կը կորուին:
 5 Երանի՛ անոր՝ որուն օդնուկանը Յակոբի Աստ.
 ուածն է,
 Ու անոր յշար իր Տէր Աստուծոյն վրայ է.
 6 Որ երկինքը ու երկիրը,
 Մովզ ու բալօր անոնց մէջ եղածը ստեղծեց
 ծշմարտութիւն կը պահէ յաւիտեան,
 7 Երաւունք կ'ընէ զրկուածներուն,
 Ու հաց կու տայ անօթիներուն.
 Տէրը կ'արձակէ կապուածները.
 8 Տէրը կը բանայ կոյրերուն աչքերը.
 Տէրը կը կանգնեցնէ վար ծռածները.
 Տէրը կը սիրէ արդարները.
 9 Տէրը կը պահէ պանդուխանները.
 Կը հաստատէ որը ու որի եւարին,
 Բայց ամիսրիշաններուն ճամբան կը ծռէ:
 10 Տէրը պիտի թագաւորէ յաւիտեան,
 Քու Աստուծդդ, ով Արօն, ազգէ մինչև ազգ: Ալէ-
 լուիա:

ՍԱՂՄՈՍ ՃԽԵ

- 1 Գովեցէք Տէրը, վասն զի բարի է մեր Աստուծոյն
 սաղմաս լսել.
 Վասն զի բաղդր ու վայելուչ է օրհնութիւնը:
 2 Տէրը կը շնէ Երաւուալէմը,
 Խորսուկի ցրուածները կը ժողվէ.

- 3 Արտովլ կոտրածները կը բժշկէ,
 Ու անոնց խոցերը կը փաթթէ.
 4 Աստղերուն թիւը կը համբէ,
 Անոնց ամէնն աւ էւենց անուններովը կը կանչէ:
 5 Մէծ է մեր Տէրը, ու իր զօրութիւնը շատ է.
 Անոր իմաստութիւնը անհուն է:
 6 Տէրը կը հաստատէ խեղճերը,
 Ու ամիսրիշանները մինչև հողը կը խոնարհեցնէ:
 7 Երգեցէք Տէրոջը գոյսութիւնով.
 Մէր Աստուծոյն սաղմաս ըսէք քնարով.
 8 Որ երկինքը ամպերով կը ծռծէ,
 Անձրւ կը պատրաստէ երկիր համար,
 Խոս կը բուացնէ լեռներուն վրայ.
 9 Որ անսառններուն իրենց կերակուրը կու տայ,
 Ու ագռաւմն ծագերուն՝ որոնք կ'աղաղակեն:
 10 Անիկա ձիուն զօրութեանը չհաճիր,
 Մարդուն սրունքներուն չհաւնիր:
 11 Տէրը կը հաւնի իրմէ վախցողներուն
 Ու իր ողքոմութեանը յուսացողներուն:
 12 ՞Ոլ Երաւուալէմ, գովէ Տէրը.
 Օրհնէ քու Աստուծդդ, ով Ախօն:
 13 Վասն զի անիկա քու գոներուդ նիդերը ամուրցուց,
 Եւ քու որդիներդ քու մէջդ օրհնեց:
 14 Անիկա քու սահմաններուդ խաղաղութիւն կու տայ,
 Ու պարարտ ցորենով քեզ կը կշացնէ:
 15 Անիկա իր խոսքը երկին մէջ կը դրէ.

*Եօթուառնէց և Հույս գրաբար նորդաւուն-նետուց հեծ
 ունել է ուստի ձնի. Սովորուց Տէր Սովոր Ժ. Է. Հ. ու առաջ
 բանօթուառնէնը:

- իր խօսքը շուտապվ կը վագել։
 16 Անհկա բուրդի պէս ծիւն կու տայ,
 Ու եղեամը մոխիրի պէս կը ցանէ։
 17 Իր սառաը պատասներու պէս կը նետէ.
 Անոր ցուրտին դէմ ո՞վ կը նայ կենալ,
 18 Անհկա իր խօսքը կը զրկէ ու կը հայեցնէ զանոնք.
 Իր հավը փշել կու տայ, ու ջուրեր կը վագեն։
 19 Անհկա իր խօսքը կը պատմէ Յակոբի,
 Եւ իր կանոնները ու դատասատները՝ Խարոյէլի։
 20 Բնաւ ազգի մը այսպէս չըրաւ.
 Ու անոնք ո՞նո՞ր դատասատները չճանչցան, Ալէլուիա։

ՍԱՂՄՈՍ ՃԽԸ

- 1 Ալէլուիա Օրչնեցէք Տէրը երկինքէն.
 Օրչնեցէք զանիկա բարձր տեղերուն մէջ։
 2 Օրչնեցէք զանիկա, ով անոր բոլոր հրեշտակները.
 Օրչնեցէք զանիկա, ով անոր բոլոր զօրբերը
 3 Օրչնեցէք զանիկա, ով արեգակ ու լուսին.
 Օրչնեցէք զանիկա, ով բոլոր փայլուն տատղեր։
 4 Օրչնեցէք զանիկա, ով երկնից երկինք
 Ու երկնիքէ վեր եղող ջուրեր։
 5 Թող Տէրոջը անունը օրչնեն.
 Վասն զի ինք հրամանցէց, ու անոնք ստեղծուեցան։
 6 Եւ զանոնք յաւիտեանն յաւիտենից հաստատեց.
 Կանն դրաւ որ չխափանուիր։
 7 Օրչնեցէք Տէրը երկէ,
 Ով վիշտպներ ու բոլոր անդունդներ։
 8 Կրտէ և կարկուտ, ձիւն ու շոդի,
 Եւ անոր խօսքը կատարող մըրկալից հով։

- 9 Լեռներ ու բոլոր բլուրներ,
 Պաղատու ծառեր ու եղեւիններ,
 10 Գաղաններ ու բոլոր անասուններ,
 Սողացողներ ու թեւաւոր թռչուններ,
 11 Երկրի թագաւորներ և բոլոր ազգեր,
 Իշխաններ ու երկրի բոլոր գատաւորներ,
 12 Երիտասարդներ և կյս աղջիկներ,
 Ծերեր ու տղափներ,
 13 Թող Տէրոջը անունը օրչնեն,
 Վասն զի միայն անոր անունը բարձր է,
 Անոր փառքը երկրէ ու երկինքէ վեր է,
 14 Անհկա բարձրացուց իր ժողովուրդին եղիները,
 Իր բոլոր սուրբերուն,
 Իրեն մօտ եղող ժողովուրդին,
 Խարոյէլի որդիներուն օրչնութիւնը Ալէլուիա

ՍԱՂՄՈՍ ՃԽԸ

- 1 Ալէլուիա Տէրոջը նոր երգ երգեցէք,
 Ու անոր օրչնութիւնը սուրբերուն ժողովքին մէջ։
 2 Խարոյէլ թող ուրախանոյ իր Սաեղծողին վրոյ.
 Ախօնի որդիները թող ցնծան իրենց թագաւորին վրոյ։
 3 Թող անոր անունը պարտվ օրչնեն,
 Թմբուկով ու քնարավ սալման թող լսեն անոր։
 4 Վասն զի Տէրը եր ժողովուրդին կը հաւնի,
 Խոնարհները փրկութիւնով պիտի փաւաւորէ։
 5 Թող սուրբերը ուրախանուն փառքով,
 Ու իրենց անկողիններուն մէջ ցնծան,
 6 Աստուծոյ գովաւթիւնները անոնց բերնին մէջ թող
 ՌԱՄՆ,

- Ու երկու բերնով սուր՝ անոնց ձեռքին մէջ,
 7 Որպէս զի հեթանոսներէն վլէժ առնեն,
 Ու ժողովուրդները պատժեն,
 8 Որպէս զի անոնց թագաւորները շղթաներով կապեն,
 Ու անոնց ազնուականները՝ երկաթէ կապանքներով,
 9 Որպէս զի գրուած գաստատանը անոնց վրայ կա-
 տարեն,
 Այս անոր բոլոր սուրբերուն փառքն է Ալէլուի...
 1.

ՍԱՂՄՈՍ ձԵ

- 1 Ալէլուիս Օրհնեցէք զԱստուած իր սրբարանին
 մէջ.
 Օրհնեցէք զանիկա իր զօրութեանը հաստատութեանը
 մէջ:
- 2 Օրհնեցէք զանիկա իր զօրուոր գործերուն համար.
 Օրհնեցէք զանիկա իր մեծափառութեանը համեմար.
- 3 Օրհնեցէք զանիկա փողի ձոյնով.
 Օրհնեցէք զանիկա ասւելզալ ու քնարով.
- 4 Օրհնեցէք զանիկա թմբուկով ու պարով.
 Օրհնեցէք զանիկա լար ունեցող նուագարաններով
 ու սրինգով.
- 5 Օրհնեցէք զանիկա մեծաձայն ծնծղաներով.
 Օրհնեցէք զանիկա ցնծութեան ծնծղաներով.
- 6 Ամէն շունչ ունեցող թող Տէրը օրհնէ Ալէլուիս





4n

NL0015715

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0015715

